WWW.PROSECUTOR.AM

2025

ՀԱՂՈՐԴՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ереван - 2025
IAP SINGAPORE 2025

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության հարգելի՛ քաղաքացիներ,

Հարգելի՛ գործընկերներ,

Չորրորդ տարին է, որ պատիվ ունեմ Ձեզ ներկայացնելու Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության տարեկան հաղորդումը:

Հաղորդումը կառուցված է Դատախազության՝ որպես միասնական համակարգի՝ 2025 թվականի նպատակադրումների, կատարված հետևողական աշխատանքի ու արձանագրված արդյունքների վրա:

Մասնավորապես՝

- 2025 թվականի ընթացքում Դատախազության բացառիկ՝ պետական և համայնքային շահերի պաշտպանության լիազորության շրջանակներում կայացված դատական ակտերով, ինչպես նաև դատախազական ներգործության միջոցների կիրառման արդյունքում Հայաստանի Հանրապետության և համայնքների սեփականությանը կամ տիրապետմանն է վերադարձվել, նախնական գնահատմամբ, շուրջ 66 միլիարդ 934 միլիոն դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 124 գույք, այդ թվում՝ մանկապարտեզներ, մշակույթի տուն, մարզադաշտ, բնության հուշարձան, պուրակներ, հողատարածքներ:
- 2025 թվականին օրինական ուժի մեջ է մտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով առաջին վճիռը:
- Նախաքննության ժամկետների նվազման՝ վերջին տարիներին արձանագրված միտումը պահպանվել է նաև 2025 թվականին. 2025 թվականին ավարտված քրեական վարույթների կեսից ավելին՝ 53,4%-ը, քննվել է մինչև 2 ամիս ժամկետում, ինչը 2024 թվականի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 11,3%-ով:
- Վերջին 8 տարիների միջինացված ցուցանիշների հետ համեմատությամբ՝ 2025 թվականին 2,5%-ով նվազել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու՝ դատարան ներկայացված միջնորդությունների տեսակարար կշիռը՝ մեղադրյալների ընդհանուր թվի համեմատությամբ:
- 2025 թվականին ավարտվել է 3495-ով կամ 9,2%-ով ավելի քրեական վարույթ, քան 2024 թվականին, այդ թվում՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել 2807-ով կամ 23,8%-ով ավելի քրեական վարույթ:
- Քրեական վարույթներով, գործարկման օրվանից (2024 թվականի դեկտեմբերի 5) մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վերականգնված միջոցների միասնական հաշվին և Հարկ վճարողի միասնական հաշվին վճարվել է ընդհանուր 39 միլիարդ 895 միլիոն 845 հազար դրամ:

Դատախազության 2025 թվականի առաջնահերթությունը եղել է արդյունքահեն աշխատանքը՝ պայմանավորված 2025 թվականի մարտի 14-ին Դատախազության կոլեգիայի ամփոփիչ նիստում մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների աշխատանքի գնահատման նոր չափանիշների սահմանմամբ, որոնք ամրագրվել են ՀՀ գլխավոր դատախազի հրամանով: Չափանիշները, ի թիվս այլնի, ներառում են՝

- Պետական և համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը և համայնքին վերջնական դատական ակտով վերադարձված գումարի չափը,
- Քրեական վարույթներով, ինչպես նաև դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ պետությանը, համայնքին, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման գումարի չափը,
- Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների թիվը,
- Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով վերջնական դատական ակտերի թիվը:

Աշխատանքի արդյունաբերության պահանջը, դուրս գալով Դատախազության աշխատանքի ներքին չափանիշներից, 2025 թվականի արդյունքներով հանգեցրեց Դատախազության աշխատանքի նկատմամբ հանրային գնահատականի փոփոխության. համաձայն Միջազգային հանրապետական ինստիտուտի նախաձեռնությամբ Հայաստանում իրականացված հանրային կարծիքի ուսումնասիրության՝ Դատախազության աշխատանքից «լիովին գոհ» և «ավելի շուտ գոհ» է ՀՀ քաղաքացիների 43%-ը: Նախորդ հարցման համեմատ՝ գոհունակության ցուցանիշն աճել է 6%-ով:

Սա, կարծում եմ, մեր՝ որպես միասնական համակարգի, կարևոր նվաճում է, հավաստումն է այն պնդման, որ արդարադատությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլև լինի տեսանելի ու հասկանալի:

Իմ երախտիքն եմ հայտնում դատախազներին, Դատախազության աշխատակիցներին և իրավապահ ու դատական համակարգերի բոլոր պրոֆեսիոնալ և սրտացավ գործընկերներին՝ 2025 թվականին գրանցած շոշափելի արդյունքի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	4
1.ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՇԱՐԺԸՆԹԱՑ.	5
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ, ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴՈՒՄ	
2.ՄԻՆՁԴԱՏԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	28
3.ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ	60
4.ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	74
5.ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ	84
6.ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	99
7.ԱՊՕՐԻՆԻ ՇԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ	117
8.ՊԱՏԻԺՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	125
9.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ - ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	136
10.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ	163

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒՄ 2025

1

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՇԱՐԺԸՆԹԱՑ.

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ, ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՁԴՈՒՄ

2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում կատարվել է 40.722 հանցագործություն[1] (2024 թվականին՝ 42.057), որոնցից 18.857-ը (2024 թվականին՝ 19.877)՝ Երևան քաղաքում: 2024 թվականի համեմատությամբ 2025 թվականին հանցագործության դեպքերը նվազել են 1335-ով կամ 3,2%-ով:



Հարկ է արձանագրել, որ Ներքին գործերի նախարարության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի կողմից առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում հանցավորության տվյալներն ամփոփվել են՝ առանձնացնելով հանցագործությունների հաշվառման տարին և դրանց փաստացի կատարման տարին:

Նոր մեթոդաբանությունը, ըստ Ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված պարզաբանման, հնարավորություն է տալիս հաշվառված հանցագործությունների ընդհանուր թվից առանձնացնել նախորդ տարիներին կատարված դեպքերը և ունենալ ինչպես տվյալ տարում հաշվառված հանցագործությունների ընդհանուր թիվը, այնպես էլ տվյալ տարվա ընթացքում փաստացի կատարված հանցագործությունների վերաբերյալ տվյալներ:[2]

100.000 բնակչի հաշվով արձանագրվել է հանցագործությունների 1315 դեպք (2024 թվականին՝ 1368 դեպք):

2024 թվականի համեմատությամբ՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքերը նվազել են 1516-ով կամ 7%-ով (2024 թվականին՝ 21.557 դեպք, 2025 թվականին՝ 20.041 դեպք), միջին ծանրության հանցագործությունների դեպքերն աճել են 795-ով կամ 6,2%-ով (2024 թվականին՝ 12.790 դեպք, 2025 թվականին՝ 13.585 դեպք), ծանր հանցագործությունների դեպքերը նվազել են 486-ով կամ 8,6%-ով (2024 թվականին՝ 5630 դեպք, 2025 թվականին՝ 5144 դեպք), իսկ առանձնապես ծանր

1. Հանցագործությունների դեպքերին վերաբերող թվային ցուցանիշները ներկայացված են ՀՀ ՆԳՆ ոստիկանության հանցավորության վիճակագրության և հանցավորության կենտրոնի տրամադրած տվյալների հիման վրա՝ հիմք ընդունելով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ ոստիկանությունը պարտավոր է կառավարության սահմանած կարգով ընդունել, գրանցել և հաշվառել հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումները, դրանց տալ համապատասխան ընթացք: Նշված կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի 1495-Ն որոշմամբ:
2. Տվյալ մեթոդաբանությամբ ամփոփման արդյունքներով՝ 2025 թվականին հաշվառված հանցագործություններից միայն 40.722-ն են կատարվել 2025 թվականի ընթացքում: Մինչդեռ 2025 թվականին ընդհանուր հաշվառված հանցագործությունների թիվը կազմում է 46.337, սակայն նշված թվից հանցագործությունների 5615 դեպքերը վերաբերում են նախորդ տարիներին կատարված հանցագործություններին, որոնք հաշվառվել են 2025 թվականին: Հետևաբար, հաղորդման սույն հատվածը կազմելիս հիմք է ընդունվել 2025 թվականին կատարված հանցագործությունների թիվը՝ 40.722, և դրա բաղադրման արդյունքում ստացված՝ առանձին հանցագործություններին վերաբերելի թվային տվյալները: Վերոգրյալի հիման վրա՝ Աժ ներկայացված՝ ՀՀ դատախազության 2024 թվականի հաղորդման մեջ առկա հանցավորության շարժընթացի վերաբերյալ տվյալները կարող են չհամընկնել սույն հատվածում նշված տվյալներին (2024 թվականին վերաբերելի մասով), քանի որ ՀՀ ՆԳՆ հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնը նոր մեթոդաբանության հիման վրա իրականացրել է նաև 2024 թվականին կատարված հանցագործությունների վերահաշվարկ:

հանցագործությունների դեպքերը (առանց հանկարծամահությունների) աճել են 65-ով կամ 10,9%-ով (2024 թվականին՝ 596, 2025 թվականին՝ 661 դեպք):

Տարեթիվ	Հանցագործության դեպքեր	Ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքեր	Միջին ծանրության հանցագործության դեպքեր	Ծանր հանցագործության դեպքեր	Առանձնապես ծանր հանցագործության դեպքեր (առանց հանկարծամահությունների)
2024	42.057	21.557	12.790	5630	596
2025	40.722	20.041	13.585	5144	661
Դեպքերի աճ/նվազում	-1335	-1516	+795	-486	+65
Տոկոսային աճ/նվազում	-3,2%	-7%	+6,2%	-8,6%	+10,9%

Հանցագործության 40.722 դեպքի բացարձակ մեծամասնությունը՝ 82,6%-ը, ոչ մեծ (20.041 դեպք կամ դեպքերի 49,2%) և միջին ծանրության (13.585 դեպք կամ դեպքերի 33,4%-ը) հանցագործություններն են, այսինքն՝ նվազ հանրային վտանգավորություն ներկայացնող հանցագործությունները:

Առանձնապես ծանր հանցագործությունները (ներառյալ հանկարծամահությունները) ընդհանուր հանցագործությունների զանգվածում կազմում են 4,8% (2024 թվականին՝ 4,9%), իսկ ծանր հանցագործությունները՝ 12,6% (2024 թվականին՝ 13,4%):

2024 թվականի համեմատությամբ՝ հանցավորության ընդհանուր ծավալի մեջ արձանագրվել է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշռի նվազում 0,9%-ով (2024 թվականին նշված ցուցանիշը կազմել է 18,3%, իսկ 2025 թվականին՝ 17,4%): Ընդ որում, այս ցուցանիշը համադրելի է 2015-2025 թվականների ընթացքում արձանագրված ընդհանուր հանցագործությունների կազմում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն արտահայտող միջին տարեկան տոկոսային ցուցանիշի հետ, որը կազմում է 17,2%:

Ստորև ներկայացվում է 2015-2025 թվականների հանցավորության կառուցվածքը՝ ըստ հանցագործությունների վտանգավորության աստիճանի.

Տարեթիվ	Հանցագործությունների ընդհանուր թիվը	Ոչ մեծ ծանրության հանցագործություններ		Միջին ծանրության հանցագործություններ		Ծանր հանցագործություններ		Առանձնապես ծանր հանցագործություններ		Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ	
2015	17.043	9185	53,9%	4455	26,1%	3238	19,0%	165	1,0%	3403	20,0%
2016	18.764	10.757	57,3%	4728	25,2%	3081	16,4%	198	1,1%	3279	17,5%
2017	20.285	12.380	61,0%	5012	24,7%	2729	13,5%	164	0,8%	2893	14,3%
2018	22.551	11.989	53,2%	6700	29,7%	3638	16,1%	224	1,0%	3862	17,1%
2019	26.850	14.613	54,4%	7463	27,8%	4490	16,7%	284	1,1%	4774	17,8%
2020	26.468	14.629	55,3%	7466	28,2%	4077	15,4%	296	1,1%	4373	16,5%
2021	30.245	17.460	57,7%	7988	26,4%	4447	14,7%	350	1,2%	4797	15,9%
2022	37.612	21.281	56,6%	10.371	27,6%	5080	13,5%	880	2,3%	5960	15,8%
2023	40.666	20.024	49,3%	12.848	31,6%	6116	15,0%	1678	4,1%	7794	19,1%
2024	42.057	21.557	51,3%	12.790	30,4%	5630	13,4%	2080	4,9%	7710	18,3%
2025	40.722	20.041	49,2%	13.585	33,4%	5144	12,6%	1952	4,8%	7096	17,4%

2025 թվականին 1398-ով կամ 8,6%-ով աճել են հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները (2024 թվականին՝ 16.204 դեպք, 2025 թվականին՝ 17.602 դեպք), 362-ով կամ 7,8%-ով՝ պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները (2024 թվականին՝ 4628 դեպք, 2025 թվականին՝ 4990 դեպք), 11-ով կամ 1%-ով աճել են տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները (2024 թվականին՝ 1097 դեպք, 2025 թվականին՝ 1108 դեպք):

2025 թվականին 1739 դեպքով կամ 23,2%-ով նվազել են մարդու դեմ ուղղված հանցագործությունները (2024 թվականին՝ 7508 դեպք, 2025 թվականին՝ 5769 դեպք), 1650-ով կամ 13,7%-ով՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները (2024 թվականին՝ 12.050 դեպք, 2025 թվականին՝ 10.400 դեպք):



Հաշվետու ժամանակահատվածում 36,7%-ով նվազել են դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու հանցագործությունները (2024 թվականին՝ 1164 դեպք, 2025 թվականին՝ 737 դեպք), որից 20,5%-ով նվազել են առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցագործությունները (2024 թվականին՝ 278 դեպք, 2025 թվականին՝ 221 դեպք), 31,4%-ով՝ մարդկանց թրաֆիքինգի հանցագործությունները (2024 թվականին՝ 35 դեպք, 2025 թվականին՝ 24 դեպք), 15,3%-ով՝ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները (2024 թվականին՝ 203 դեպք, 2025 թվականին՝ 172 դեպք), 12,7%-ով՝ ճանապարհային երթևեկության կանոնները (այսուհետ՝ ՃԵԿ) խախտելը, որն առաջացրել է մահ (2024 թվականին՝ 181 դեպք, 2025 թվականին՝ 158 դեպք), 11,4%-ով՝ խուլիգանությունները (2024 թվականին՝ 877 դեպք, 2025 թվականին՝ 777 դեպք), որից 4%-ով՝ զենքի գործադրմամբ խուլիգանությունները (2024 թվականին՝ 100 դեպք, 2025 թվականին՝ 96 դեպք), 30,1%-ով՝ թմրամիջոցների մաքսանենգության հանցագործությունները (2024 թվականին՝ 322 դեպք, 2025 թվականին՝ 225 դեպք), 37,7%-ով՝ կողոպուտները (2024 թվականին՝ 146 դեպք, 2025 թվականին՝ 91 դեպք), 14%-ով՝ գողությունները (2024 թվականին՝ 6838 դեպք, 2025 թվականին՝ 5881 դեպք), որից 18,1%-ով՝ բնակարանային գողությունները (2024 թվականին՝ 933 դեպք, 2025 թվականին՝ 764 դեպք), 22,5%-ով՝ խարդախությունները (2024 թվականին՝ 2848 դեպք, 2025 թվականին՝ 2206 դեպք), 55,5%-ով՝ կաշառք տալը, ստանալը և կաշառքի միջնորդությունները (2024 թվականին՝ 402 դեպք, 2025 թվականին՝ 179 դեպք):

Հաշվետու ժամանակահատվածում 25,9%-ով աճել են հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության հանցագործությունները (2024 թվականին՝ 941 դեպք, 2025 թվականին՝ 1185 դեպք), 20,4%-ով՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունները (2024 թվականին՝ 3017 դեպք, 2025 թվականին՝ 3631 դեպք), 4%-ով ավազակությունները (2024 թվականին՝ 75 դեպք, 2025 թվականին՝ 78 դեպք), 8,1%-ով՝ համակարգչային տեխնիկայի միջոցով հափշտակությունները (2024 թվականին՝ 853 դեպք, 2025 թվականին՝ 922 դեպք), 75%-ով՝ փողերի լվացման հանցագործությունները (2024 թվականին՝ 64 դեպք, 2025 թվականին՝ 112 դեպք):



24 դեպքով կամ 20,7%-ով ավելացել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունները:

2015-2025 թվականների ընթացքում հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունները ներկայացվում են ստորև.

Տարեթիվը	Հրազենի գործադրմամբ հանցագործություններ
2015	69
2016	62
2017	52
2018	60
2019	74
2020	83
2021	57
2022	67
2023	94
2024	116
2025	140

2025 թվականին արձանագրվել է հանցագործությունների բացահայտման ցուցանիշի աճ:

Այսպես, համաձայն Ներքին գործերի նախարարության ոստիկանության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի տվյալների՝ 2025 թվականին կատարված հանցագործությունների 40.722 դեպքից (2024 թվականին՝ 42.057 դեպք) բացահայտվել է 12.114-ը (2024 թվականին՝ 9595-ը), չի բացահայտվել 28.607-ը (2024 թվականին՝ 32.461-ը):

Այսինքն՝ 2025 թվականին բացահայտման ցուցանիշը կազմել է 29,7%՝ 2024 թվականի 22,8%-ի դիմաց: Այսպիսով, 2024 թվականի համեմատ, 2025 թվականին բացահայտման ցուցանիշն աճել է 6,9%-ով:[3]



2025 թվականին աճել են ինչպես միջին ծանրության հանցագործությունների, այնպես էլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշները:

Այսպես.

Միջին ծանրության հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 15,9%՝ 2024 թվականի 13,7%-ի դիմաց, ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 18,7%՝ 2024 թվականի 11,6%-ի դիմաց, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 50,2%՝ 2024 թվականի 32,9%-ի դիմաց:

2025 թվականի ընթացքում կատարվել է մարդու դեմ ուղղված 5769 հանցագործություն՝ 2024 թվականի 7508-ի դիմաց. հանցագործությունների թիվը նվազել է 1739-ով կամ 23,2%-ով: Մարդու դեմ ուղղված հանցագործությունների 5769 դեպքից 2448-ը կամ 42,4%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 3321-ը կամ 57,6%-ը՝ ՀՀ մարզերում (2024 թվականի նույն ցուցանիշների հարաբերակցությունը կազմել է 41,8% և 58,2%):

2025 թվականին արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի բացահայտման ցուցանիշի որոշակի աճ.

3. Հարկ է նշել, որ բացահայտման ցուցանիշները ներկայացված են անձի՝ որպես մեղադրյալ ներգրավված լինելու մասին տվյալների հիման վրա:

այն կազմել է 15,5%՝ 2024 թվականի 14,6%-ի դիմաց, որն ընդհանուր հանցավորության բացահայտման տոկոսային ցուցանիշից ցածր է 14,2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է հաստատված սպանությունների 50 դեպք[4]: Հաստատված սպանությունների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 5-ով կամ 11,1%-ով (2024 թվականին՝ 45 դեպք). Երևան քաղաքում սպանության դեպքերն աճել են 4-ով կամ 30,8%-ով:

Սպանության փորձի դեպքերը, 2024 թվականի համեմատ, աճել են 14-ով կամ 21,9%-ով (2024 թվականին՝ 64 դեպք, 2025 թվականին՝ 78 դեպք): Սպանության նախապատրաստության դեպքերն աճել են 10-ով կամ 500%-ով (2024 թվականին՝ 2 դեպք, 2025 թվականին՝ 12 դեպք): Այսպիսով, 2025 թվականին անձի կյանքի դեմ ուղղված 10 դեպք նախապատրաստության փուլում կանխվել է:

Սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները 2025 թվականին նվազել են 31-ով կամ 15,3%-ով՝ կազմելով 172 դեպք՝ 2024 թվականին արձանագրված 203-ի փոխարեն:

Մարդկանց թրաֆիքինգի դեպքերը նվազել են 11-ով կամ 31,4%-ով (2024 թվականին՝ 35 դեպք, 2025 թվականին՝ 24 դեպք):

Քանակական առումով նվազում է արձանագրվել նաև՝

- առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքերով. նվազումը կազմել է 290 դեպք կամ 51,8% (2024 թվականին՝ 560 դեպք, 2025 թվականին՝ 270 դեպք),
- առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերով. նվազումը կազմել է 64 դեպք կամ 20,6% (2024 թվականին՝ 310 դեպք, 2025 թվականին՝ 246 դեպք),
- առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերով. նվազումը կազմել է 26 դեպք կամ 9,6% (2024 թվականին՝ 271 դեպք, 2025 թվականին՝ 245 դեպք):

Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ 2024-2025 թվականների տվյալները՝ այդ թվում՝ սուբյեկտային կազմը՝ ստորև ներկայացված աղյուսակում.

4. Հարկ է արձանագրել, որ ՀՀ ՆԳՆ հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի կողմից սպանության դեպքերը հաշվարկվում են նոր մեթոդաբանությամբ: Ըստ այդմ, 2025 թվականին գրանցվել է հաստատված սպանության 50 դեպք, նախորդ տարիներին կատարված սպանությունների 4 դեպք, անհայտ կորելու 12 դեպք, դժբախտ պատահարների 12 դեպք, մարդկային մասունքների հայտնաբերման 1 դեպք:

ՀՀ ՔՕ հոդվածը	Դեպքերի թիվը		Որից													
			ԶՈՒԳԸՆԿԵՐԸ		ԱՄՈՒՍԻՆԸ ԿՆՈՋԸ		ԿԻՆԸ ԱՄՈՒՍՆՈՒՆ		ՆԱԽԿԻՆ ԱՄՈՒՍԻՆԸ /ԿԻՆԸ/		ԾՆՈՂԸ ՁԱՎԱԿԻՆ		ՁԱՎԱԿԸ ԾՆՈՂԻՆ		ԱՅԼ	
	2024	2025	2024	2025	2024	2025	2024	2025	2024	2025	2024	2025	2024	2025	2024	2025
155	13	14	1	1	1	1	2		1	2	1	1	5	5	2	4
162	6	23		3	3	8				1		4			3	7
166	15	10			3	3		1		2	1		3		8	4
167	20	35			10	13		3	1	4	1	4	1		7	11
170	1		1													
171	120	103	2	5	51	46	5	1	8	11	10	6	11	13	33	21
172	1				1											
173	2												1		1	
176	4	1	1		2						1	1				
182		2												1		1
188	1	1							1							1
189	2	9								1	2	8				
191	5	12		7	1				3	3	1					2
192	10	12		4	2	4			1	2			1		6	2
194	166	317	7	34	42	92	1	4	38	85	6	17	13	21	59	64
195	934	1076	34	69	415	458	19	18	44	129	75	80	105	95	242	227
196	22	29	2	2	7	11			11	3		3			2	10
196.1		40		5		4				14						17
198	10	17		2	3	5					1	3		2	6	5
199	5	4	1	1	2	1									2	2
200	9	11	1	2	2	4						1			6	4
201		1										1				
204	7	3			2	1			5	2						
252	1								1							
255																
258		2								1						1
260	1								1							
264	1												1			
300	1												1			
344		1												1		
508	3				3											
	1360	**1723**	**50**	**135**	**550**	**651**	**27**	**27**	**115**	**260**	**99**	**129**	**142**	**138**	**377**	**383**

2025 թվականի հունվարի 24-ին գործարկվել է Հայաստանում ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հաշվառման առաջին թվայնացված միասնական համակարգը, որի նորմատիվ հիմքերի մշակման աշխատանքներում ներգրավված է եղել նաև Գլխավոր դատախազությունը:

Ընտանեկան և կենցաղային բռնությունների դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց գերակշիռ մասը կազմում են ֆիզիկական և հոգեկան ներգործության ու առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքերը: 2025 թվականին այդ դեպքերը կազմել են ընտանեկան և կենցաղային բռնությունների 87%-ը, իսկ 2024 թվականին՝ 90%:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ընտանեկան և կենցաղային բռնության հիմքով կատարված սպանության 14 (2024 թվականին՝ 13), առևանգման 12 (2024 թվականին՝ 5), առողջությանը ծանր վնաս պատճառելու 10 (2024 թվականին՝ 15) դեպք:

Ընտանիքում բռնության դեպքերի կազմն արտահայտող գրաֆիկը՝ ստորև՝



2025 թվականին ապահովվել է ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի վերաբերյալ մասնագիտական քննարկումներում Դատախազության ներկայացվածությունը:

Դրանից բացի, 2025 թվականի ապրիլի 9-ին, 10-ին և 15-ին Արդարադատության ակադեմիայում 57 դատախազ վերապատրաստվել է «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարը» (այդ թվում՝ բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու) թեմայով:

2025 թվականի ապրիլի 26-ից 27-ը «Բաց սահմաններ» խաղաղության, ժողովրդավարության և զարգացման ինստիտուտի կողմից Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության ֆինանսավորմամբ իրականացված՝ «Ընտանեկան բռնություն» թեմայով երկօրյա վերապատրաստման դասընթացին մասնակցել է 50 դատախազ:

2025 թվականի ընթացքում, 2024 թվականի համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 1650 դեպքով կամ 13,7%-ով նվազում (2024 թվականին՝ 12.050 դեպք, 2025 թվականին՝ 10.400 դեպք):



Երևան քաղաքում դեպքերը նվազել են 653-ով կամ 8,9%-ով (2024 թվականին՝ 7338 դեպք, 2025 թվականին՝ 6685 դեպք):

2025 թվականին սեփականության դեմ ուղղված որոշ հանցատեսակներով արձանագրվել է աճ, որոշ հանցատեսակներով՝ նվազում:

Մասնավորապես՝ 2025 թվականին աճ է արձանագրվել սեփականության դեմ ուղղված հանցագործություններից ավազակության՝ 3-ով կամ 4%-ով (2024 թվականին՝ 75 դեպք, 2025 թվականին՝ 78 դեպք), համակարգչային հափշտակության՝ 69-ով կամ 8,1%-ով (2024 թվականին՝ 853 դեպք, 2025 թվականին՝ 922 դեպք), սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների՝ 60-ով կամ 6,5%-ով (2024 թվականին՝ 921 դեպք, 2025 թվականին՝ 981 դեպք) դեպքերով:

Հաշվետու ժամանակահատվածում նվազում է արձանագրվել կողոպուտի՝ 55-ով կամ 37,7%-ով (2024 թվականին՝ 146 դեպք, 2025 թվականին՝ 91 դեպք), գողության՝ 957-ով կամ 14%-ով (2024 թվականին՝ 6838 դեպք, 2025 թվականին՝ 5881 դեպք), բնակարանային գողությունների՝ 169-ով կամ 18,1%-ով (2024 թվականին՝ 933 դեպք, 2025 թվականին՝ 764 դեպք), խարդախության՝ 642-ով կամ 22,5%-ով (2024 թվականին՝ 2848 դեպք, 2025 թվականին՝ 2206 դեպք), վստահված գույքի հափշտակության՝ 121-ով կամ 33,5%-ով (2024 թվականին՝ 361, 2025 թվականին՝ 240), ուրիշի գույքն ապօրինի օգտագործելու՝ 7-ով կամ 87,5%-ով (2024 թվականին՝ 8 դեպք, 2025 թվականին՝ 1 դեպք) դեպքերով:



2025 թվականին սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կազմել են հանրապետությունում արձանագրված դեպքերի շուրջ 25,5%-ը:

Սեփականության դեմ ուղղված հանցագործություններով հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է բացահայտման ցուցանիշի աճ. մասնավորապես՝ 2025 թվականին նշված ցուցանիշը կազմել է 8,3%՝ ի տարբերություն 2024 թվականի 6,7%-ի:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունում 2025 թվականին արձանագրվել է սեփականության դեմ ուղղված գրեթե բոլոր հանցատեսակների բացահայտման աճ, մասնավորապես՝ անձնական գույքի հափշտակության դեպքերից բացահայտվել է 9%-ը՝ 2024 թվականի 7,2%-ի համեմատ, ավազակության դեպքերից բացահայտվել է 74,4%-ը՝ 2024 թվականի 52%-ի համեմատ, կողոպուտի դեպքերից բացահայտվել է 24,2%-ը՝ 2024 թվականի 23,3%-ի համեմատ, գողության դեպքերից բացահայտվել է 8,5%-ը՝ 2024 թվականի 7,5%-ի համեմատ, բնակարանային

գողության դեպքերից բացահայտվել է 23,3%-ը՝ 2024 թվականի 9,2%-ի համեմատ, խարդախության դեպքերից բացահայտվել է 7%-ը՝ 2024 թվականի 4,1%-ի համեմատ, վստահված գույքի հափշտակության դեպքերից բացահայտվել է 19,2%-ը՝ 2024 թվականի 14,4%-ի համեմատ, պետական կամ հանրային գույքի հափշտակության դեպքերից բացահայտվել է 15,4%-ը՝ 2024 թվականի 12%-ի համեմատ, սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերից բացահայտվել է 6,9%-ը՝ 2024 թվականի 3,5%-ի համեմատ:

2025 թվականի ընթացքում համակարգչային հափշտակությունների դեպքերը 2024 թվականի համեմատությամբ աճել են 69-ով կամ 8,1%-ով, դեպքերի աճին զուգահեռ՝ նվազել է նշված հանցատեսակի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 1,4%՝ նախորդ տարվա 2,3%-ի համեմատ:

Հանրապետությունում գրանցվել է համակարգչային հափշտակությունների 922 դեպք՝ 2024 թվականի 853-ի համեմատ: Նշված դեպքերի կեսից ավելին՝ 420-ը (ընդհանուր համակարգչային հափշտակությունների դեպքերի 45,5%-ը) կատարվել է Երևան քաղաքում. Երևանում դեպքերը նվազել են 24-ով կամ 5,4%-ով:

Համակարգչային հափշտակությունների աճը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև նրանով, որ բանկային գործառնությունները կատարվում են առցանց եղանակով (վարկերի ձևակերպելում, գումարների փոխանցում և այլն), դրան զուգահեռ, սակայն, բավարար չափով կատարելագործված չեն բանկային վերահսկողական մեխանիզմները:

Վերոգրյալ հանգամանքի հիման վրա՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդագիր է հասցեագրվել ՀՀ կենտրոնական բանկի նախագահին՝ բանկերում առցանց եղանակով տրամադրվող ծառայությունների անվտանգության մակարդակը բարձրացնելու վերաբերյալ: Միջնորդագրի քննարկման արդյունքում բանկերի կողմից ներդրվել են անվտանգության լրացուցիչ մեխանիզմներ:

2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների 17.602 դեպք՝ նախորդ տարվա 16.204 դեպքի դիմաց, որից 6858-ը կամ 39%-ը՝ Երևան քաղաքում (2024 թվականին՝ 6739, աճ՝ 1,8%-ով), իսկ 10.744-ը կամ 61%-ը՝ ՀՀ մարզերում (2024 թվականին՝ 9465, աճ՝ 13,5%-ով):



2024 թվականի համեմատությամբ՝ նշված հանցագործությունների դեպքերը նվազել են 1398-ով կամ 8,6%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է 46,1%՝ 2024 թվականի 35,4%-ի փոխարեն:

Ներքին գործերի նախարարության ոստիկանության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի տվյալների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում նվազել են ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների դեպքերը: Եթե 2024 թվականին արձանագրվել է 1918 դեպք, ապա 2025 թվականին՝ 1772 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 146-ով կամ 7,6%-ով: Բացահայտումը կազմել է 37,6%՝ նախորդ տարվա 35,5%-ի դիմաց:





Նվազել են նաև մահվան ելքով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերը: Եթե 2024 թվականին արձանագրվել է մահվան ելքով 181 դեպք, ապա 2025 թվականին՝ 158 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 23-ով կամ 12,7%-ով: Բացահայտումը կազմել է 21,5%՝ նախորդ տարվա 17,1% -ի դիմաց:





2025 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների 1772 դեպքից՝ 454-ը կամ շուրջ 25,6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 1318-ը կամ շուրջ 74,4%-ը՝ ՀՀ մարզերում:

Մահվան ելքով արձանագրված 158 դեպքից 19-ը կամ շուրջ 12%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 139-ը կամ 88%-ը՝ ՀՀ մարզերում:

Հարկ է նշել նաև, որ Երևան քաղաքի տարածքում 2025 թվականի ընթացքում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների դեպքերը նվազել են 251-ով կամ 35,6%-ով, միևնույն ժամանակ՝ մահվան ելքով դեպքերի թիվը նվազել է 27-ով կամ 58,7%-ով:

Ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 4784 ճանապարհատրանսպորտային պատահար (2024 թվականին՝ 4314 պատահար), որի հետևանքով մահացել է 283 անձ[5] (2024 թվականին՝ 333), իսկ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 7073-ը (2024 թվականին՝ 6116-ը):

5. Մահվան ելքով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերի և դրա հետևանքով զոհերի թվերի անհամապատասխանությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մահվան ելքով 1 դեպքի հետևանքով կարող են զոհվել մեկից ավելի անձինք:

Նշված պատահարների թիվը 2025 թվականին, 2024 թվականի համեմատությամբ, ավելացել է 470-ով կամ 10,9%-ով, **մահացած անձանց թիվը նվազել է 50-ով կամ 15%-ով, իսկ վնասվածքներ ստացած անձանց թիվն ավելացել է 957-ով կամ 15,6%-ով:**

Ստորև ներկայացվում են 2015-2025 թվականներին Հայաստանի Հանրապետությունում հաշվառված ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ տվյալները.

Տարեթիվ	Քանակ			Աճ/նվազում		
	ՃՏՊ	Զոհ	Վիրավոր	ՃՏՊ	Զոհ	Վիրավոր
2015	3399	346	4738	+ 243	+ 49	+ 259
2016	3203	267	4451	- 196	- 79	- 287
2017	3535	279	5179	+ 332	+ 12	+ 728
2018	4111	343	5950	+ 576	+ 64	+ 771
2019	4799	341	6801	+ 688	- 2	+ 851
2020	4016	348	5846	- 783	+ 7	- 955
2021	4604	368	6699	+ 588	+ 20	+ 853
2022	4308	321	6153	- 296	- 47	- 546
2023	4614	378	6538	+ 306	+ 57	+ 385
2024	4314	333	6116	- 300	- 45	- 422
2025	4784	283	7073	+ 470	- 50	+ 957

2025 թվականին աճել են հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության դեպքերը: Եթե 2024 թվականին արձանագրվել է նշված հանցագործության 941 դեպք, ապա 2025 թվականի ընթացքում՝ 1185 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 244-ով կամ 25,9%-ով: Բացահայտումը կազմել է 16,5%՝ նախորդ տարվա 19%-ի դիմաց:





2025 թվականին արձանագրվել է խուլիգանության դեպքերի նվազում 100-ով կամ 11,4%-ով (2024 թվականին՝ 877 դեպք, 2025 թվականին՝ 777 դեպք):



2025 թվականին արձանագրված խուլիգանության 777 դեպքից 418-ը կատարվել է Երևան քաղաքում, իսկ 359-ը՝ ՀՀ մարզերում: 2024 թվականի 877 դեպքից Երևան քաղաքում կատարվել է 465-ը, իսկ ՀՀ մարզերում՝ 412-ը: Երևան քաղաքում խուլիգանության դեպքերը նվազել են 47-ով կամ 11%-ով, իսկ ՀՀ մարզերում՝ 53-ով կամ 12,9%-ով:

Խուլիգանության դեպքերի նվազմանը զուգընթաց՝ 4-ով կամ 4%-ով նաև նվազել են զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով կատարված խուլիգանության դեպքերը (2024 թվականին՝ 100 դեպք, 2025 թվականին՝ 96 դեպք):

Հաշվետու ժամանակահատվածում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների թիվը կազմել է 4170՝ 2024 թվականին արձանագրված 3485 դեպքի դիմաց (աճը կազմել է 685 դեպք կամ 19,7%):

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի թիվը կազմել է 3631՝ 2024 թվականի 3017-ի դիմաց (աճը կազմել է 614 դեպք կամ 20,4%): Ընդ որում, իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը կազմել են 2176, որը 2024 թվականին արձանագրված 1933 դեպքի համեմատ աճել է 243-ով կամ 12,6%-ով:

Թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի թիվը կազմել է 225՝ նախորդ տարվա 322-ի դիմաց (նվազումը կազմել է 97 դեպք կամ 30,1%):

2025 թվականի ընթացքում թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 26,3%՝ 2024 թվականի 13,8%-ի դիմաց: Ընդ որում, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **25,4%՝** 2024 թվականի **13,4%-ի** դիմաց, իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **13,2%՝** 2024 թվականի **8,2%-ի** դիմաց, թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **21,8%՝** 2024 թվականի **10,9%-ի** դիմաց:



- թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների բացահայտում
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտում
- իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտում
- թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի բացահայտում

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ տվյալներին՝[6] հարկ է նշել, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների 2025 թվականի շարժընթացի վերաբերյալ տվյալների սխեմատիկ պատկերն՝ ըստ տարածքների հետևյալն է.

Տարածք	2025թ. ապօրինի շրջանառություն դեպքերի թիվը	Աճ/նվազում	2025թ. իրացման նպատակով շրջանառություն	Աճ/նվազում
Հայաստանի Հանրապետություն	4595	+685 (+19,7%)	2426	+243 (+12,6%)
Երևան	2467	+604 (38,1%)	1536	+319 (+30,5%)
Էրեբունի	305	+68 (31,9%)	144	-2 (-1,5%)
Նուբարաշեն	100	+86 (1228,6%)	63	+53 (+1060%)
Քանաքեռ-Զեյթուն	178	+73 (76%)	111	+39 (+58,2%)
Արաբկիր	388	+155 (78,7%)	231	+60 (+39,5%)
Մալաթիա-Սեբաստիա	172	+63 (+64,3%)	136	+57 (+75%)
Կենտրոն	270	+12 (+7,1%)	239	+20 (+14%)
Նորք-Մարաշ	61	+41 (+410%)	49	+37 (+616,7%)
Նոր Նորք	219	-26 (-11,1%)	155	-46 (-24,1%)
Ավան	123	+111 (1850%)	71	+63 (+1575%)
Աջափնյակ	111	-43 (-32,6%)	79	-44 (-40%)
Դավիթաշեն	84	+53 (+353,3%)	61	+31 (+206,7%)
Շենգավիթ	375	+51 (+16,7%)	185	+57 (+45,6%)
Մարզեր	2128		890	
Շիրակ	424	-13 (-3,2%)	204	-82 (-31,2%)
Արմավիր	471	-155 (-26,1%)	191	-94 (-34,9%)
Տավուշ	57	+25 (+78,1%)	19	+9 (+90%)
Արագածոտն	228	+45 (+27,1%)	100	+8 (+9,6%)
Լոռի	196	+61 (+47,3%)	84	+18 +(28,1%)
Վայոց ձոր	43	-17 (-29,8%)	13	-10 (-47,6%)
Կոտայք	193	+13 (+7,9%)	92	+10 (+14,5%)
Արարատ	203	+52 (+37,1%)	93	+36 (+66,7%)
Գեղարքունիք	93	+29 (+55,8%)	36	+12 (+54,5%)
Սյունիք	220	+41 (+25,3%)	58	+17 (+53,1%)

6. Հանրապետական տվյալների շարքում առանձին չեն ներկայացվել ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ տվյալները, իսկ մայրաքաղաքի տվյալներում Մետրոպոլիտենի և «Զվարթնոց» օդանավակայանի ստորաբաժանումների տվյալները:

2024 թվականի համեմատ՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության բացահայտման ցուցանիշն աճել է 5%-ով, իսկ Երևան քաղաքում՝ 2,7%-ով:

2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում ապօրինի շրջանառությունից առգրավվել են **768 կգ 886,6 գրամ տարբեր տեսակի թմրամիջոցներ**, նախորդ տարվա **426 կգ 563** գրամի դիմաց: Առգրավվել են նաև՝ **235,6 գրամ հոգեմետ նյութեր**, նախորդ տարվա **750,17** գրամի դիմաց:

2025 թվականի ընթացքում առգրավվել են **434,42 գրամ պրեկուրսորներ,** նախորդ տարվա **29,8** գրամի դիմաց:

Ստորև ներկայացվում են 2024 և 2025 թվականների ընթացքում ապօրինի շրջանառությունից դուրս բերված թմրամիջոցների՝ Ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից տրամադրված վիճակագրական համեմատական տվյալները.[7]

Թմրամիջոցների տեսակներ	2024թ.	2025թ.	Աճ/նվազում
Մեթամֆետամին	13 կգ 495,761 գր	40 կգ 181,7358 գր	+ 26 կգ 685,9748 գր
Հերոին	17 կգ 442,181 գր	169 կգ 665,335 գր	+ 152 կգ 223,154 գր
α-PVP	295,006 գր	445,905 գր	+ 150,899 գր
Մեֆեդրոն	4 կգ 115,41 գր	194,109 գր	- 3 կգ 921,301 գր
Սփայս	2 կգ 82,655 գր	333,329 գր	- 1 կգ 749,326 գր
4-CMC	991,67 գր	194,117 գր	- 797,553 գր
ՄԴՄԱ	113,239 գր	2 կգ 169,875 գր	+ 2 կգ 56,636 գր
Ացետիլացված ափիոն	6,4621 գր	36,211 գր	+ 29,7489 գր
Ամֆետամին	0,06 գր	0,902 գր	+ 0,842 գր
ԼՍԴ	0,058 գր	1,172 գր	+ 1,114 գր
Դիմեթիլտրիպտամին	-	5,72 գր	+ 5,72 գր
Բարբիտալ	-	666,61 գր	+ 666,61 գր
3-CMC	-	2,583 գր	+ 2,583 գր
Ֆենտանիլ	-	0,06098 գր	+ 0.06098 գր
2C-B	4,151 գր	-	- 4,151 գր
Մարիխուանա	327 կգ 288,734 գր	292 կգ 821,89 գր	- 344 կգ 66,844 գր
Կանեփ	49 կգ 626,217 գր	166 կգ 159,9226 գր	+ 116 կգ 533,7056 գր
Ափիոն	85,504 գր	5 կգ 519,386 գր	+ 5 կգ 433,882 գր
Կոկաին	5 կգ 210,426 գր	3 կգ 700,387 գր	- 1 կգ 510,039 գր
Հաշիշ	227,22 գր	78 կգ 103,953 գր	+ 77 կգ 876,733 գր
Հաշիշի յուղ	2 կգ 593,353 գր	2 կգ 608,7951 գր	+ 15,4421 գր
Տետրահիդրոկանաբինոլ	168,6 գր	11,9333 գր	- 156,6667 գր
ՏՀԿ պարուն. բուս. խառն.	2 կգ 634,0175 գր	3 կգ 328,8838 գր	+ 694,8663 գր
Բուպրենորֆին	20,65544 գր	23,529795 գր	+ 2,874355 գր
Կոդեին	9,06 գր	9,5678 գր	+ 0,5078 գր
Մեթադոն	130,21382 գր	216,307714 գր	+ 86,093894 գր
Պսիլոցին	20,89 գր	564,576 գր	+ 543,686 գր
Օքսիկոդոն	0,02 գր	1,025 գր	+ 1,005 գր
Տիլիդին	0,712 գր	11,05 գր	+ 10,338 գր
Օմնոպոն	0,83 գր	0,04 գր	- 0,79 գր
Դեզոմորֆին	0,28 գր	1 կգ 319,692 գր	+ 1 կգ 319,412 գր
Միտրագինին	-	17,602 գր	+ 17,602 գր
Դիհիդրոկոդեին	-	0,025 գր	+ 0,025 գր
Կակաչի ծղոտ	-	565,21 գր	+ 565,21 գր
Մորֆին	-	3.966 գր	+ 3.966 գր
Հիդրոկոդոն	-	1.2 գր	+ 1.2 գր
Կանեփի բույս	10066 հատ	39923 հատ	+ 29857 հատ
Կակաչի բույս	-	40 հատ	+ 40 հատ
Ընդհանուր	426 կգ 563 գրամ	768 կգ 886.6 գր	+ 342 կգ 323.6 գր

7. Տվյալները ներկայացվում են ըստ փորձագիտական հիմնարկներից ստացված եզրակացությունների:

Հաշվետու ժամանակահատվածում առգրավված թմրամիջոցների գերակշիռ մասը՝ 554 կգ 988,94 գրամը, բնական ծագման թմրամիջոցներ են (2024 թվականին՝ 388 կգ 16 գրամ), իսկ 213 կգ 897,66 գրամը՝ սինթետիկ ծագման թմրամիջոցներ (2024 թվականին՝ 38 կգ 547 գրամ):

Նախորդ տարվա համեմատությամբ արձանագրվել է ինչպես բնական, այնպես էլ սինթետիկ ծագման թմրամիջոցների առգրավված քանակների աճ:

Առգրավված բնական ծագման թմրամիջոցների աճը կազմել է շուրջ 166 կգ 972,94 գրամ (մոտ 43% աճ): Սինթետիկ թմրամիջոցների դեպքում աճը կազմել է շուրջ 175 կգ 350,66 գրամ (աճն ավելի քան 5 անգամ է):



Այս հանգամանքը վկայում է ոչ միայն ապօրինի շրջանառության ծավալների մեծացման, այլև՝ այս հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացման մասին:

«Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ից ստացված տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ «թմրամոլություն» ախտորոշմամբ հաշվառվել է 7650 անձ, 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 7772 անձ, 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 7612 անձ, 2022 թվականի հունվարի 1 դրությամբ՝ 7570 անձ, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 7392 անձ, 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 7209 անձ, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 6951 անձ, 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 6572 անձ:

Հաշվետու ժամանակահատվածում, 2024 թվականի համեմատությամբ, արձանագրվել է պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների 362 դեպքով կամ 7,8%-ով աճ (2024 թվականին՝ 4628 դեպք, 2025 թվականին՝ 4990 դեպք):

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին զուգահեռ՝ աճել է նաև այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 41,4%՝ 2024 թվականի 40,7%-ի դիմաց:

Թեև պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի ընդհանուր թիվն աճել է, սակայն **նվազել են կաշառք ստանալու, տալու, կաշառքի**

միջնորդության, պաշտոնական լիազորությունները չարաշահելու և անցնելու, իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը:

Այսպես, պաշտոնական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերը նվազել են 15-ով կամ 3,3%-ով (2024 թվականին՝ 456 դեպք, 2025 թվականին՝ 441 դեպք), կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության դեպքերը նվազել են 223-ով կամ 55,5%-ով (2024 թվականին՝ 402 դեպք, 2025 թվականին՝ 179 դեպք), իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը նվազել են 25-ով կամ 23,8%-ով (2024 թվականին՝ 105 դեպք, 2025 թվականին՝ 80 դեպք):



2025 թվականի ընթացքում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների թիվն աճել է 11-ով կամ 1%-ով (2024 թվականին՝ 1097 դեպք, 2025 թվականին՝ 1108 դեպք): Աճել է այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 12,2%՝ 2024 թվականի 4,6%-ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում տնտեսական գործունեության դեմ ուղղված առանձին հանցագործություններից հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերը նվազել են 13-ով կամ 5,4%-ով (2024 թվականին՝ 241 դեպք, 2025 թվականին՝ 228 դեպք), կեղծ փող, արժեթուղթ պատրաստելու պահելու կամ իրացնելու դեպքերը նվազել են 65-ով կամ 18,6%-ով (2024 թվականին՝ 350 դեպք, 2025 թվականին՝ 285 դեպք), 66-ով կամ 33,5%-ով աճել են ապօրինի ձեռնարկատիրական գործունեության դեպքերը (2024 թվականին՝ 197 դեպք, 2025 թվականին՝ 263 դեպք), 48-ով կամ 75%-ով աճել են փողերի լվացման դեպքերը (2024 թվականին՝ 64 դեպք, 2025 թվականին՝ 112 դեպք), տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը նվազել են 29-ով կամ 12%-ով (2024 թվականին՝ 241, 2025 թվականին՝ 212):

Գծապատկերը՝ ստորև.


400
350
300
250
200
150
100
50
0
241
350
197
64
241
228
285
263
112
212
2024
2025
տնտեսական գործունեության դեմ ուղղված առանձին հանցագործություններից հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքեր
կեղծ փող, արժեթուղթ պատրաստելու պահելու կամ իրացնելու դեպքեր
ապօրինի ձեռնարկատիրական գործունեության դեպքեր
տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքեր
փողերի լվացման դեպքեր

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒ 2025



2

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է 76.746 հաղորդման արձանագրման մասին օրենսդրության պահանջների կատարումը (2024 թվականին՝ 71.323):

76.746 հաղորդումից 58.554-ով (2024 թվականին՝ 58.895) նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 18.192-ով քննիչների կողմից վարույթ չի նախաձեռնվել, որոնցից 16.405-ի օրինականությունը հաստատվել է հսկող դատախազների կողմից, իսկ 1787-ով հանձնարարվել է նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն:

Քրեական վարույթ չնախաձեռնելու դեմ բերվել է 420 բողոք, որոնցից 39-ը վերադաս դատախազների կողմից բավարարվել է, 381-ը՝ մերժվել:

2025 թվականի ընթացքում նախաքննական մարմինների կողմից քննվել է 227.029 քրեական վարույթ (2024 թվականին՝ 209.421):

2024 թվականի համեմատությամբ՝ քննված քրեական վարույթների թիվն աճել է 17.608-ով կամ 8,4%-ով:

2025 թվականին քննված 227.029 քրեական վարույթից 158.236-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2024 թվականին՝ 140.835), որը 17.401-ով կամ 12,4%-ով ավելի է, քան 2024 թվականին, իսկ 68.793-ով նախաքննության կատարումը հանձնարարվել է քննիչին 2025 թվականի ընթացքում (2024 թվականին՝ 68.586), որը 207-ով կամ 0,3%-ով ավելի է, քան 2024 թվականին:

2025 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական հետապնդում է հարուցվել 19.209 անձի նկատմամբ (2024 թվականին՝ 15.074, աճը կազմել է 4135 անձ կամ 27,4%), կայացվել է քրեական հետապնդում չհարուցելու մասին 16.456 որոշում (2024 թվականին՝ 15.896, աճը կազմել է 560 որոշում կամ 3,5%), քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2119 որոշում (2024 թվականին՝ 2518, նվազումը կազմել է 399 որոշում կամ 15,8%), քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին 3968 որոշում (2024 թվականին՝ 2627, աճը կազմել է 1341 որոշում կամ 51%):



2025 թվականին ավարտվել է 41.553 քրեական վարույթ (2024 թվականին՝ 38.058), այդ թվում՝ 14.608-ը՝ 16.194 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024 թվականին՝ 11.801-ը՝ 13.179 անձի վերաբերյալ), 61-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2024 թվականին՝ 45), 26.884-ը կարճվել է (2024 թվականին՝ 26.212), որոնցից 16.416-ը՝ (2024 թվականին՝ 17.813) Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նախատեսված հիմքով:

Ավարտված քրեական վարույթ



Այսպիսով, 2025 թվականին ավարտվել է 3495-ով կամ 9,2%-ով ավելի քրեական վարույթ, քան 2024 թվականին, այդ թվում՝ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 2807-ով կամ 23,8%-ով ավելի քրեական վարույթ:

2025 թվականի ընթացքում ավարտված քրեական վարույթների 53,4%-ը (2024 թվականին՝ 42,1%) քննվել է մինչև 2 ամիս, 17,1%-ը (2024 թվականին՝ 21,5%)՝ մինչև 4 ամիս, 10%-ը (2024 թվականին՝ 15%)՝ մինչև 6 ամիս, 10,5%-ը (2024 թվականին՝ 11,9%)՝ մինչև 1 տարի, 9%-ը (2024 թվականին՝ 9,5%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:





Նախաքննության ժամկետների նվազման՝ վերջին տարիներին արձանագրված միտումը պահպանվել է նաև 2025 թվականի ընթացքում:

Մասնավորապես՝ 2025 թվականի 6 ամսից ավել է տևել քննված քրեական վարույթների 19,5%-ի նախաքննությունը, որը 2023 թվականի համապատասխան ցուցանիշից պակաս է 4%-ով, իսկ 2024 թվականի ցուցանիշից՝ 1,9%-ով: Ընդ որում, 2025 թվականին ավարտված քրեական վարույթների կեսից ավելին՝ 53,4%-ը քննվել է մինչև 2 ամիս ժամկետում, ինչը 2024 թվականի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 11,3%-ով:

2025 թվականին 7572 քրեական վարույթ միացվել է (2024 թվականին՝ 7035):

2025 թվականին 11 քրեական վարույթով (2024 թվականին՝ 29) նախաքննությունն իրականացվել է մեղադրյալի բացակայությամբ (հեռակա վարույթ)՝ համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված դրույթների:

2025 թվականի վերջին անավարտ է մնացել 170.879 քրեական վարույթ (2024 թվականի վերջին՝ 158.236), ինչը 12.643-ով կամ 8%-ով ավել է, քան 2024 թվականին: Անավարտ մնացած 170.879 քրեական վարույթից 149.222-ով կատարվել են վարութային և ապացուցողական գործողություններ:

2025 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է (վերստուգվել է) վարույթը կարճելու մասին 49.139 որոշման օրինականություն (2024 թվականին՝ 42.770 որոշման օրինականություն):

2025 թվականին վերացվել է՝

- քրեական վարույթը կարճելու մասին 710 որոշում կամ ստուգված որոշումների 1,4%-ը, որոնցից 3-ը կամ 0,4%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից (2024 թվականին՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին 661 որոշում կամ ստուգված որոշումների 1,55%-ը, որոնցից 17-ը կամ 2,6%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից),
- քրեական հետապնդում չհարուցելու մասին 119 որոշում, որոնցից 4-ը կամ 3,4%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից (2024 թվականին՝ քրեական հետապնդում չհարուցելու մասին 59 որոշում, որոնցից 1-ը կամ 1,7% -ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից),
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 26 որոշում, որոնցից 3-ը կամ 11,5%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից (2024 թվականին՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 30 որոշում, որոնցից 1-ը կամ 3,33%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից):

Քրեական վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 177 բողոք (2024 թվականին՝ 136), որոնցից բավարարվել է 25-ը (2024 թվականին՝ 16) կամ մոտ 14,1%-ը (2024 թվականին՝ 11,8%):

Քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումների դեմ բերվել է 163 բողոք (2024 թվականին՝ 90): Նշված բողոքներից բավարարվել է 14-ը (2024 թվականին՝ 3):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 36 բողոք (2024 թվականին՝ 47), որոնցից 2-ը բավարարվել է (2024 թվականին՝ 6):

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու որոշումների դեմ բերվել է 10 բողոք, որոնք մերժվել են:

Քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդում չհարուցելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2025 թվականին ավելացել է 103-ով կամ 37,7%-ով՝ կազմելով 376 բողոք՝ նախորդ տարվա 273-ի դիմաց: Բողոքներից բավարարվել է 41-ը կամ 10,9%-ը (2024 թվականին՝ 25-ը կամ 9,1%-ը):

Այսպիսով, 2025 թվականին ստուգվել է քրեական վարույթը կարճելու մասին 6369 որոշում ավելի, քան 2024 թվականին, իսկ վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ կայացված որոշումների թիվը ավելացել է 49-ով կամ 7,4%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ գործարկվել են ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի N 1922-Ն որոշմամբ ստեղծված՝ քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցների վճարման միասնական կարգավորումները:

Ըստ այդմ, քրեական վարույթներով վերականգնված միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են՝ ըստ Վերականգնված միջոցների միասնական հաշվին և Հարկ վճարողների միասնական հաշվին հաշվետու ժամանակահատվածում վճարված գումարների: Այսպես.

- Գործարկման օրվանից (2024 թվականի դեկտեմբերի 5) մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը Վերականգնված միջոցների միասնական հաշվին փոխանցվել է 21.458.058.668 դրամ:[1]
- Հարկ վճարողի միասնական հաշվին վճարվել է 18.437.786.846 դրամ:

Այսպիսով, Վերականգնված միջոցների միասնական հաշվին և Հարկ վճարողի միասնական հաշվին վճարվել է ընդհանուր առմամբ 39.895.845.514 դրամ:[2]

Նախաքննական մարմինների վարույթում քննված քրեական վարույթներով 2025 թվականի ընթացքում արգելանք է դրվել 943.041.435 ՀՀ դրամ, 80.945 եվրո, 7.616.970 ԱՄՆ դոլար և 1.822.095 չեխական կրոն ընդհանուր դրամական միջոցների վրա:

1. Գումարը ներառում է Քննչական կոմիտեի դեպոզիտային հաշվից փոխանցված 9.425.523.000 ՀՀ դրամը և Դատախազության դեպոզիտային հաշվից փոխանցված 4.368.396.700 ՀՀ դրամը:
2. Առանձին քրեական վարույթների առանձնահատկություններով պայմանավորված՝ պատճառված վնասների վերականգնումները տեղի են ունեցել ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի N 1922-Ն որոշմամբ չնախատեսված կարգով, մասնավորապես՝ առերևույթ հանցագործություն կատարած անձանց պատկանող գույքի՝ պետությանը փոխանցման կամ առանձին ընկերությունների դեբետ հաշիվներից նվազեցումների տեսքով:

2025 թվականի ընթացքում քննված քրեական վարույթներով դատարան է ներկայացվել 12.472 խուզարկության միջնորդություն (2024 թվականին՝ 9107), որոնցից բավարարվել է 11.107-ը կամ 89,1%-ը (2024 թվականին՝ 8273-ը կամ 90,8%-ը), մերժվել է 1365-ը կամ 10,9%-ը (2024 թվականին՝ 834-ը կամ 9,2%-ը):

2025 թվականի ընթացքում դատախազների կողմից լրացուցիչ քննության է վերադարձվել 616 քրեական վարույթ՝ 2024 թվականի 431-ի դիմաց: Այսինքն՝ լրացուցիչ քննության վերադարձված քրեական վարույթների թիվն աճել է 185-ով կամ 42,9%-ով:

2025 թվականի ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 76 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 22 անձ ենթարկվել է կարգապահական տույժի:

2025 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 426 անձ՝ նախորդ տարվա 201-ի դիմաց, այսինքն՝ վարույթից հեռացված անձանց թիվն աճել է 225-ով կամ 111,9%-ով:

2025 թվականի ընթացքում ձերբակալվել է 8047 անձ՝ նախորդ տարվա 7721-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվն աճել է 326-ով կամ 4,2%-ով:

Ձերբակալումից ազատվել է 5517 անձ՝ նախորդ տարվա 5461-ի դիմաց:

2025 թվականին Առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին 2559 միջնորդություն[3], որոնցից ամբողջությամբ բավարարվել է 1566-ը կամ 61,2%-ը, մասնակի բավարարվել՝ 672-ը կամ 26,3%-ը, մերժվել՝ 321-ը կամ 12,5%-ը (2024 թվականին՝ 2282 միջնորդություն, որոնցից ամբողջությամբ բավարարվել է 1581-ը կամ 69,3%-ը, մասնակի բավարարվել՝ 432-ը կամ 18,9%-ը, մերժվել՝ 269-ը կամ 11,8%-ը):

Թեև կալանք խափանման միջոցի կիրառման միջնորդությունների և դրանց բավարարման **բացարձակ թվերը վերջին տարիներին աճել են, այդուհանդերձ, պետք է փաստել, որ այն ուղիղ համեմատական է վերջին տարիներին արձանագրված՝ որպես մեղադրյալ ներգրավված անձանց թվի աճին:**

Այսպես, **2018 թվականի ընթացքում** որպես մեղադրյալ է ներգրավվել 5065 անձ (նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել է 205 անձ կամ 4,21%): Ներկայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 870 միջնորդություն (ներգրավված մեղադրյալների 17,2%), որից բավարարվել է 804-ը կամ 92,4%-ը (միջնորդությունների թիվը նվազել է 116-ով կամ 11,8%-ով, բավարարումների տոկոսը նվազել է 0,1%-ով):

3. Նշված թիվը վերաբերում է միայն առաջնային կալանքին, ինչպես նաև չի ներառում ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ և 462-րդ հոդվածներով մեղադրվող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների թիվը:

2019 թվականի ընթացքում որպես մեղադրյալ է ներգրավվել 6014 անձ (աճը կազմել է 949 անձ կամ 18,7%): Ներկայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 1092 միջնորդություն (ներգրավված մեղադրյալների 18,2%), որից բավարարվել է 968-ը կամ 88,6%-ը (միջնորդությունների թիվն աճել է 222-ով կամ 25,5%-ով, բավարարումների տոկոսը նվազել է 3,8%-ով):

2020 թվականի ընթացքում որպես մեղադրյալ է ներգրավվել 8505 անձ (աճը կազմել է 2491 անձ կամ 41,4%): Ներկայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 1223 միջնորդություն (ներգրավված մեղադրյալների 14,4%), որից բավարարվել է 961-ը կամ 78,6%-ը (միջնորդությունների թիվն աճել է 131-ով կամ 12%-ով, բավարարումների տոկոսը նվազել է 10%-ով):

2021 թվականի ընթացքում որպես մեղադրյալ է ներգրավվել 10.044 անձ (աճը կազմել է 1539 անձ կամ 15,3%): Ներկայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 1277 միջնորդություն (ներգրավված մեղադրյալների 12,7%), որից բավարարվել է 986-ը կամ 77,2%-ը (միջնորդությունների թիվն աճել է 54-ով կամ 4,4%-ով, բավարարումների տոկոսը նվազել է 1,4%-ով):

2022 թվականի ընթացքում որպես մեղադրյալ է ներգրավվել 10.508 անձ (աճը կազմել է 464 անձ կամ 4,6%): Ներկայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 1599 միջնորդություն (ներգրավված մեղադրյալների 15,2%), որից բավարարվել է 1207-ը կամ 75,5%-ը (միջնորդությունների թիվն աճել է 322-ով կամ 25.2%-ով, բավարարումների տոկոսը նվազել է 1,7%-ով):

2023 թվականի ընթացքում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 10.136 անձի նկատմամբ (նվազումը կազմել է 372 անձ կամ 3,5%): Ներկայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 2040 միջնորդություն (ներգրավված մեղադրյալների 20,1%), որից բավարարվել է 1559-ը կամ 76,4%-ը (միջնորդությունների թիվն աճել է 441-ով կամ 27,6%-ով, բավարարումների տոկոսն աճել է 0,9%-ով):

2024 թվականի ընթացքում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 15.074 անձի նկատմամբ (աճը կազմել է 4938 անձ կամ 48,7%): Ներկայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 2282 միջնորդություն (ներգրավված մեղադրյալների 15,1%), որից բավարարվել է 1581-ը կամ 69,3%-ը (միջնորդությունների թիվն աճել է 242-ով կամ 11,9%-ով, բավարարումների տոկոսը նվազել է 7,1%-ով):

2025 թվականի ընթացքում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 19.209 անձի նկատմամբ (աճը կազմել է 4135 անձ կամ 27,4%): Ներկայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 2559 միջնորդություն (ներգրավված մեղադրյալների 13,3%), որից բավարարվել է 1566-ը կամ 61,2%-ը (միջնորդությունների թիվն աճել է 277-ով կամ 12,1%-ով, բավարարումների տոկոսը նվազել է 8,1%-ով):

Հաշվետու ժամանակահատված	Որպես մեղադրյալ ներգրավված անձանց թիվ	Դատարան ներկայացված միջնորդությունների թիվ	Միջնորդությունների թվի տեսակարար կշիռը (տոկոս) մեղադրյալների ընդհանուր թվի համեմատությամբ	Բավարարումների թիվ	Բավարարումների թվի տեսակարար կշիռը (տոկոս) մեղադրյալների ընդհանուր թվի համեմատությամբ
2018	5065	870	17,2 %	804	15,9 %
2019	6014	1092	18,2 %	968	16,1 %
2020	8505	1223	14,4 %	961	11,3 %
2021	10.044	1277	12,7 %	986	9,8 %
2022	10.508	1599	15,2 %	1207	11,5 %
2023	10.136	2040	20,1 %	1559	15,4 %
2024	15.074	2282	15,1 %	1581	10,5 %
2025	19.209	2559	13,3 %	1566	8,2 %

Աղյուսակից ակնհայտ է առնվազն 2023-2025 թվականների ընթացքում ինչպես ներկայացված միջնորդությունների, այնպես էլ փաստացի դատարանի կողմից բավարարված միջնորդությունների տեսակարար կշռի նվազման միտումը՝ որպես մեղադրյալ ներգրավված անձանց թվի հետ համեմատությամբ:

Հարկ է ընդգծել նաև, որ 2025 թվականին դատարան ներկայացված միջնորդությունների տեսակարար կշիռը (13,3%) մեղադրյալների ընդհանուր թվի համեմատությամբ ցածր է վերջին 8 տարիների միջինացված (15,8%) ցուցանիշից 2,5%-ով, իսկ դատարանների կողմից բավարարումների թվի տեսակարար կշիռը (8,2%) նույն ցուցանիշից (12,3%) ցածր է 4,1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին 138 միջնորդություն (2024 թվականին՝ 210), որոնցից բավարարվել է 106-ը կամ 76,8%-ը (2024 թվականին՝ 185-ը կամ 88,1%-ը), մերժվել՝ 32-ը կամ 23,2%-ը (2024 թվականին՝ 25-ը կամ 11,9%-ը):

Հաշվետու ժամանակահատվածում, գրավը որպես խափանման միջոց կիրառվել է 441 անձի նկատմամբ (2024 թվականին՝ 317), իսկ պաշտոնավարման կասեցումը՝ 87 անձի (2024 թվականին՝ 96) նկատմամբ, որից 66-ը՝ կոռուպցիոն վարույթներով (2024 թվականին՝ 71):

2025 թվականի ընթացքում հետախուզվել է 17.044 մեղադրյալ[4], որոնցից հայտնաբերվել է 2806-ը կամ 16,5%-ը: Համեմատության համար նշենք, որ 2024 թվականի ընթացքում հետախուզվել է 16.007 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 2196-ը կամ 13,7%-ը:

Այսպիսով, 2024 թվականի համեմատությամբ, 2025 թվականին հետախուզվողների թիվը ավելացել է 1037-ով կամ 6,5%-ով: Զուգընթաց՝ ավելացել են հետախուզվողների հայտնաբերման քանակական և տոկոսային ցուցանիշները: Մասնավորապես, հայտնաբերված հետախուզվող մեղադրյալների թիվն ավելացել է 610-ով կամ 27,8%-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով՝ նույն տվյալները ներկայացվում են առանց նշված հոդվածով հետախուզվողների տվյալների: Այսպես.

- 2025 թվականին հետախուզվել է 5938 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 2086-ը կամ 35,1%-ը:
- 2024 թվականին հետախուզվել է 5097 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1635-ը կամ 32,1%-ը:

2024 թվականի համեմատությամբ, 2025 թվականին հետախուզվողների թիվն ավելացել է 841-ով կամ 16,5%-ով:

- 2025 թվականին Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվել է 11.106 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 720-ը կամ 6,5%-ը:
- 2024 թվականին Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվել է 10.910 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 561-ը կամ 5,1%-ը:

2024 թվականի համեմատությամբ՝ 2025 թվականին Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվողների թիվն աճել է 196-ով, աճել է նաև հայտնաբերման քանակական ցուցանիշը՝ 159-ով, իսկ տոկոսային ցուցանիշը՝ 28,3%-ով:

4. Հետախուզվող անձանց վերաբերելի տվյալները ներկայացվում են՝ ըստ Ներքին գործերի նախարարության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնից ստացված տվյալների:

Տարեթիվ	Հետախուզվել են			Հայտնաբերվել են			
	ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդված	ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներ	Ընդհանուր	ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդված	ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներ	Ընդհանուր	Հայտնաբերման %
2020	11.104	3850	14.954	642	1127	1769	11,8
2021	11.106	4475	15.581	1719	1459	3178	20,4
2022	9860	4616	14.476	422	1729	2151	14,9
2023	10.328	4581	14.909	398	1479	1877	12,6
2024	10.910	5097	16.007	561	1635	2196	13,7
2025	11.106	5938	17.044	720	2086	2806	16,5

Ի կատարումն Դատախազության կոլեգիայի՝ 2025 թվականի մարտի 14-ի նիստում ընդունված որոշման 3-րդ կետի՝ 2025 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում ամփոփվել են 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առանձնապես ծանր, ծանր և միջին ծանրության հանցագործություններ կատարելու մեջ մեղադրվող անձանց նկատմամբ հայտարարված ներպետական, միջպետական և միջազգային հետախուզումների վիճակը:

Իրականացված ամփոփումների արդյունքներով՝ 2026 թվականի ընթացքում նախատեսվում է Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստացված տվյալների համադրման հիման վրա պարզել նշված քրեական վարույթներով մեղադրյալների նկատմամբ միջպետական և միջազգային հետախուզում հայտարարելու հիմքերի առկայությունը և ապահովել հետախուզում հայտարարելու գործընթացը:

2025 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական վարույթներով տրվել է 5206 հանձնարարություն՝ նախորդ տարվա 5468-ի դիմաց, այսինքն՝ հանձնարարությունների թիվը նվազել է 262-ով կամ 4,8%-ով:

2025 թվականի ընթացքում դատախազների կողմից Քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 412 միջնորդագիր՝ նախորդ տարվա 360 միջնորդագրի դիմաց:

Դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի քննարկման արդյունքում հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցներ:

Միջնորդագրերից բացի, Դատախազությունում ուսումնասիրվել է Քրեական օրենսգրքով նախատեսված առանձին հանցագործությունների հատկանիշներով քննված քրեական վարույթների նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը: Ուսումնասիրության արդյունքներով մշակվել են առաջարկություններ, կազմակերպվել են քննարկումներ, հասցեագրվել են գրություններ:

Մասնավորապես՝

1. Քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի հատկանիշներով նախաձեռնված մի շարք քրեական վարույթների ուսումնասիրությամբ, ի թիվս այլնի, պարզվել է հետևյալը՝

- Հանցանք կատարած անձինք հասանելիություն են ստացել անձանց բանկային հաշիվներին, ինչպես նաև հնարավորություն են ունեցել կառավարել, տնօրինել այդ հաշիվները կամ անձանց անվամբ ինքնուրույն գրանցել նոր բանկային հաշիվներ, այդ թվում՝ տարբեր արժույթներով: Այդ հաշիվների գրանցումից առաջ բանկերի կողմից լրացուցիչ ստուգողական գործողություններ չեն կատարվել՝ համոզվելու համար, որ նոր բանկային հաշվի գրանցումն ու վարկի ստացումն իրականացվում է իրական օգտատիրոջ կողմից: Այլ խոսքով՝ անձանց էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվել են հանցավոր գործողություններ, որոնք մինչև վարկի տրամադրումը բանկերի կողմից լրացուցիչ (օրինակ՝ հեռախոսազանգի միջոցով) ստուգման չեն ենթարկվել:
- Հասանելիություն ունենալով էլեկտրոնային դրամապանակներին՝ հանցանք կատարած անձինք ձևակերպել են վարկային պայմանագրեր, այդ թվում՝ անձանց անուններով, ովքեր նախկինում վարկեր ստանալու մերժումներ են ստացել: Այնուհետև, վարկային պայմանագրերով տրամադրված գումարը փոխանցել են այլ անձանց բանկային հաշվեհամարներին, իսկ փոխանցումից հետո անձանց բանկային հաշվեհամարների քաղվածքներում կամ էլեկտրոնային դրամապանակներում փոխանցման հստակ ուղղությունները չեն արտացոլվել:
- Բանկերից ստացված հաղորդագրությունները եղել են անգլերեն, ինչով պայմանավորված՝ անձինք հնարավորություն չեն ունեցել հասկանալու հաղորդագրության բովանդակությունը և զրկվել են այլ անձանց կողմից իրենց էլեկտրոնային դրամապանակի միջոցով ինքնաշխատ եղանակով բանկային հաշիվներին հասանելիություն ստանալու, ինչպես նաև վարկային պայմանագրեր ձևակերպելու վտանգը գնահատելու հնարավորությունից:

- Որոշ դեպքերում հանցանքները կատարվել են անձանց անվամբ գրանցված այնպիսի դրամապանակների և բանկային հաշիվների միջոցով, որոնք ակտիվություն չեն ունեցել, ունեցել են ոչ մեծ չափերով գումարի շրջանառություն, դրանցով չեն կատարվել միջազգային փոխանցումներ: Այս հանգամանքը ևս, մինչև վարկի տրամադրումը բանկերի կողմից լրացուցիչ (օրինակ՝ հեռախոսազանգի միջոցով) ստուգման չի ենթարկվել:
- Բանկերի կողմից չի իրականացվել նույն սարքի միջոցով բազմաթիվ էլեկտրոնային դրամապանակներ մուտք գործելու տվյալների հավաքագրում (մոնիտորինգ, հաշվառում):

Վերոշարադրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ էլեկտրոնային առցանց վճարահաշվարկային համակարգերի ոչ բավարար պաշտպանվածությունը և բանկերում վերահսկողական անհրաժեշտ և բավարար մեխանիզմերի բացակայությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում նշված եղանակով հափշտակություններ կատարելու համար՝ **ՀՀ գլխավոր դատախազի՝ 2025 թվականի ապրիլի 1-ին միջնորդագրով ՀՀ կենտրոնական բանկի նախագահին առաջարկվել է բանկերի հետ քննարկել առցանց գործարքների կատարման ժամանակ անվտանգության մեխանիզմների կատարելագործման հնարավորություններն ու ուղղությունները, այդ թվում՝**

- այլ սարքավորումով համակարգ մուտք գործելու դեպքում վարկի տրամադրումը կասեցնելու հնարավորությունը՝ մինչև բանկի աշխատակցի կողմից հաճախորդի հետ կապ հաստատելը,
- անձի անվամբ նոր բանկային հաշիվ, այդ թվում՝ արտարժույթով, առցանց գրանցելու գործողությունը կասեցնելու հնարավորությունը՝ մինչև բանկի աշխատակցի կողմից հաճախորդի հետ կապ հաստատելը,
- վարկի ձևակերպման դեպքում գումարի փոխանցումը կասեցնելու հնարավորությունը՝ մինչև բանկի աշխատակցի կողմից հաճախորդի հետ կապ հաստատելը,
- անձանց ուղարկվող հաղորդագրությունների բովանդակությունը հայերենով փոխելու հարցը:

Կենտրոնական բանկից ստացված պատասխանի համաձայն՝ զեղծարարությունների՝ տարածված սխեմաների հետ կապված ռիսկերը նվազեցնելու նպատակով Կենտրոնական բանկն առևտրային բանկերին առաջարկել է հեռահար տարբերակով հաճախորդների նույնականացման գործընթացներում կիրառել նույնականացման առավել խստացված լուծումներ, որոնց զգալի մասն արդեն ներդրված է:

Նշված կարճաժամկետ լուծումները, ինչպես նաև զեղծարարության հետ կապված ռիսկերի նվազեցման ուղղությամբ համագործակցության բարելավման հնարավորությունները Կենտրոնական բանկի պատասխանատուները համատեղ քննարկել են նաև Դատախազության և Քննչական կոմիտեի ներկայացուցիչների հետ:

2. Առողջապահության նախարարի՝ «Բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգը և պայմանները հաստատելու մասին» 2018 թվականի օգոստոսի 15-ի N 17-Ն հրամանի հավելվածի 26-րդ կետի համաձայն՝ բուժառուներին թմրամիջոցներով բուժման ընթացքում թմրամիջոցների տրամադրման հաճախականությունը (ամեն օր, շաբաթական երեք անգամ, շաբաթական երկու անգամ, շաբաթական մեկ անգամ) որոշում է բուժող բժիշկը: Թմրամոլ պացիենտներին թմրամիջոցներով բուժման ընթացքում իրենց մշտական բնակության վայրից երկարատև բացակայության դեպքում բուժման շարունակական ընթացքը ապահովելու նպատակով բուժող բժիշկը կարող է տրամադրել թմրամիջոցներ պարունակող դեղեր բացակայության ողջ ընթացքի համար: Թմրամիջոցների ապօրինի իրացման դեպքերով նախաձեռնված մի շարք քրեական վարույթներով Գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ վերոնշյալ հրամանի հիման վրա ու դրանում սահմանված կարգով՝ բուժական նպատակներով տրամադրված թմրամիջոցի մի մասը չի ծառայում իր նպատակին և հանդիսանում է թմրամիջոցների ապօրինի իրացման առարկա: Այս եզրահանգումը հիմնավորվել է ինչպես 2024 թվականի ընթացքում «Մեթադոն» տեսակի թմրամիջոցի առգրավման ծավալների աճով (2023 թվականի համեմատությամբ՝ 2024 թվականին «Մեթադոն» տեսակի թմրամիջոցի առգրավման ծավալներն աճել են ավելի քան երեք անգամ՝ 38,96 գրամից դառնալով 130,21 գրամ), այնպես էլ այն հանգամանքով, որ թմրամիջոցներն ապօրինի իրացրել են Առողջապահության նախարարության «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում հաշվառված և հանցագործության առարկա հանդիսացած թմրամիջոցները նշված կազմակերպությունից ստացած անձինք:

Վերոգրյալի հիման վրա՝ ՀՀ գլխավոր դատախազի 2025 թվականի ապրիլի 14-ի գրությամբ ՀՀ առողջապահության նախարարին առաջարկվել է քննարկել այնպիսի կարգավորումների կիրառման հնարավորություն, որի դեպքում կբացառվի թմրամիջոցներ պարունակող դեղերով բուժվող թմրամոլ պացիենտների մոտ լրացուցիչ չափաբաժնի առկայությունը:

3. 2025 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել և ամփոփվել է 2024 թվականի ընթացքում նախադպրոցական կրթական

հաստատություններում երեխաների նկատմամբ կիրառված հոգեկան ներգործության, ֆիզիկական ներգործության, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու կապակցությամբ Քրեական օրենսգրքի 194-րդ, 195-րդ և 196-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշներով քննված քրեական վարույթների նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ նախադպրոցական կրթական հաստատություններում Քրեական օրենսգրքի 194-րդ, 195-րդ և 196-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշներով 2024 թվականի ընթացքում նախաձեռնվել է 3 քրեական վարույթ: Նշված քրեական վարույթներից առաջին երկուսի դեպքում հանցանքի մասին հաղորդումը ներկայացվել են նախադպրոցական կրթական հաստատության սաների մայրերի կողմից, իսկ երրորդի դեպքում՝ ուսումնական հաստատության ղեկավարի կողմից: Նշված քրեական վարույթներից 2-ով 2 անձի նկատմամբ Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Մյուս քրեական վարույթով 1 անձի նկատմամբ հսկող դատախազը սեփական նախաձեռնությամբ, վարույթի նյութերի հիման վրա, որոշում է կայացրել քրեական հետապնդում չհարուցելու մասին՝ Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

Ամփոփման արդյունքներով մշակվել են առաջարկություններ, որոնք նախատեսվում է ներկայացնել իրավասու մարմիններին:

4. 2025 թվականին ուսումնասիրվել և ամփոփվել է 2024 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով քննված քրեական վարույթներով (բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2024 թվականին նախաձեռնվել է 32 քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (2023 թվականին նախաձեռնվել է 62 քրեական վարույթ): Վարույթ չնախաձեռնելու մասին կայացվել է 6 որոշում, հսկող դատախազի կողմից տրվել է քրեական վարույթ նախաձեռնելու մասին 1 հանձնարարություն: Այսպիսով, 2024 թվականին քրեական վարույթների նախաձեռնումների թիվը 2023 թվականի համեմատությամբ նվազել է 30-ով կամ 48%-ով: 2024 թվականին քննվել է Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածով նախաձեռնված 64 քրեական վարույթ, 2023 թվականին՝ 117 քրեական վարույթ:

2024 թվականին 2023 թվականի համեմատությամբ նախաքննական մարմիններում վերոնշյալ հոդվածով քննված քրեական վարույթների թիվը նվազել է 53-ով կամ 45,3 %-ով:

2024 թվականի ընթացքում 9 քրեական վարույթով 9 անձի վերաբերյալ որոշում է կայացվել հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: 2 անձի նկատմամբ քրեական հետապնդման ժամկետը կասեցվել է՝ մեղադրյալի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով:

2024 թվականին դատարան է ուղարկվել 3 քրեական վարույթ 3 անձի վերաբերյալ:

2024 թվականի ընթացքում դատարանում ավարտված 1 գործով՝ 1 անձի նկատմամբ Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է, քրեական վարույթը կարճվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

2024 թվականին դատարանում ավարտված քրեական գործերով 3 անձ դատապարտվել է, նրանցից 1-ը՝ հանրային աշխատանքների՝ 100 ժամ, 1-ը՝ տուգանքի՝ 1.500.000 դրամի չափով, 1-ը՝ կարճատև ազատազրկման՝ 2 ամիս ժամկետով: Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպք չի արձանագրվել:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս հանցագործությունները կատարվել են հիմնականում սոցիալական հարթակներում հրապարակումներ կատարելու կամ հրապարակումները մեկնաբանելու եղանակով, ընդ որում՝ առավել տարածված են «Ֆեյսբուք» սոցիալական հարթակում կատարվող նմանօրինակ հրապարակումները:

5. Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել են 2024 թվականի և 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության շարժառիթով կատարված մարդու դեմ ուղղված հանցագործությունների պատճառների ու պայմանները: Կատարված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ 2024 թվականի ընթացքում ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության շարժառիթով կատարված մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 3 քրեական վարույթ:

Քրեական վարույթներից 1-ը նախաձեռնվել է Քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 1-ը՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 1-ը՝ Քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով:

2024 թվականից մինչև 2025 թվականի առաջին կիսամյակն ատելության շարժառիթով պայմանավորված մարդու դեմ ուղղված հանցագործության ընդամենը 3 դեպքով վարույթ նախաձեռնված լինելու պատճառները վերլուծելու և դրանցով պատշաճ քննություն կատարելու անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ 2025 թվականի ընթացքում Դատախազությունը ձեռնամուխ է եղել այս ոլորտում դատախազների շարունակական կրթության բարելավմանը:

2025 թվականին դատախազները մասնակցել են ատելության շարժառիթով պայմանավորված մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ մի շարք վերապատրաստումների: Մասնավորապես՝

- Գլխավոր դատախազության 7 դատախազներ 2025 թվականի մարտի 28-29-ը Ծաղկաձորում մասնակցել են «Խտրականության, ատելության խոսքի և ատելության շարժառիթով հանցագործությունների քննության առանձնահատկությունները» թեմայով աշխատաժողովին,
- Գլխավոր դատախազության ներկայացուցիչը 2025 թվականի ապրիլի 28-ին մասնակցել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպած՝ հանրային խոսույթում ատելության խոսքի դեմ պայքարելու նպատակով լրատվամիջոցների և պետական կառույցների միջև կապն ամրապնդելուն ուղղված աշխատանքային քննարկմանը,
- Գլխավոր դատախազության ներկայացուցիչը 2025 թվականի օգոստոսի 20-ին մասնակցել է Եվրոպայի խորհրդի՝ «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում կազմակերպված՝ ատելությամբ պայմանավորված հանցագործությունների և խտրականության հետ կապված տվյալների հավաքագրման մեխանիզմների վերաբերյալ դասընթացին,
- Գլխավոր դատախազության ներկայացուցիչը 2025 թվականի օգոստոսի 29-ին մասնակցել է Եվրոպայի խորհրդի՝ «Գործընկերություն հանուն լավ կառավարման III. Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում պետության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միջև կազմակերպված կլոր սեղան-քննարկմանը՝ ատելության խոսքի և խտրականության դեպքերի մասին զեկուցման համագործակցության վերաբերյալ,

- Գլխավոր դատախազության ներկայացուցիչը 2025 թվականի հոկտեմբերի 4-ին և 5-ին Ծաղկաձորում մասնակցել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպված՝ ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված բարձր մակարդակի քննարկմանը,
- Գլխավոր դատախազության ներկայացուցիչը 2025 թվականի հունիսի 1-ից հուլիսի 4-ը Վարշավայում մասնակցել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ)՝ դատախազների համար ատելության հանցագործության դեմ ուղղված հանցագործությունների ուսուցում (PAHCT) ծրագրի շրջանակներում դասընթացավարների վերապատրաստման միջազգային աշխատաժողովին:

6. Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել և ամփոփվել է 2023-2024 թվականների ընթացքում Քրեական օրենսգրքի 441-րդ (նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ և 309-րդ) (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը) հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը.

2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 441-րդ (նախկին քրեական օրենսգրքի 308-րդ) հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է 389 քրեական վարույթ (այդ թվում՝ այլ հանցանքների հետ համակցությամբ), իսկ 2024 թվականի ընթացքում՝ 368 քրեական վարույթ:

2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի հատկանիշներով քննվել է 862 քրեական վարույթ (այդ թվում՝ այլ հանցանքների հետ համակցությամբ), 2024 թվականի ընթացքում՝ 1068 քրեական վարույթ:

2023 թվականի ընթացքում նշված հոդվածով քննված քրեական վարույթներով 151 անձի վերաբերյալ որոշում է կայացվել հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, իսկ 2024 թվականի ընթացքում՝ 99 անձի նկատմամբ (այդ թվում՝ այլ հանցանքների հետ համակցությամբ):

2023 թվականի ընթացքում նշված հոդվածով քննված քրեական վարույթներով 122 անձի վերաբերյալ կայացվել է քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին որոշում, դրանցից՝ 83-ը ռեաբիլիտացնող, 39-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով:

2024 թվականի ընթացքում նշված հոդվածով քննված քրեական վարույթներով քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին որոշում է կայացվել 133 անձի վերաբերյալ, դրանցից՝ 43-ը ռեաբիլիտացնող, 90-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով:

2023 թվականի ընթացքում 177 քրեական վարույթով կայացվել է քրեական վարույթը կարճելու մասին որոշում, որոնցից 2-ով քրեական վարույթով հսկող դատախազը որոշում է կայացրել վարույթի նյութերը նախաքննության մարմնին վերադարձնելու մասին: 2024 թվականի ընթացքում կարճվել է 261 քրեական վարույթ, որոնցից 21-ով հսկող դատախազը որոշում է կայացրել վարույթի նյութերը նախաքննության մարմնին վերադարձնելու մասին:

Նշված հոդվածով քննված քրեական վարույթներով 2023 թվականի ընթացքում դատարան է ներկայացվել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 3 միջնորդություն, որոնցից 2-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել, միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշման դեմ ներկայացվել է 1 բողոք, որը մերժվել է: 2024 թվականի ընթացքում դատարան է ներկայացվել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 20 միջնորդություն, որոնցից 10-ը բավարարվել է, 4-ը՝ բավարարվել է մասնակի՝ կիրառվել է տնային կալանք, 6-ը՝ մերժվել, միջնորդությունը մերժելու կամ մասնակի բավարարելու մասին դատարանի որոշումների դեմ ներկայացվել են բողոքներ, որոնք մերժվել են:

2023 թվականի ընթացքում 22 քրեական վարույթ 46 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2024 թվականի ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 32 քրեական վարույթ 74 անձի վերաբերյալ:

2023 թվականի ընթացքում 2 քրեական վարույթով հսկող դատախազը չի հաստատել մեղադրական եզրակացությունը. քրեական վարույթը վերադարձվել է նախաքննության մարմին: 2024 թվականի ընթացքում դատախազը մեղադրական եզրակացությունը չի հաստատել 1 քրեական վարույթով:

2023 թվականի ընթացքում դատարանում ավարտվել է նշված հոդվածի հատկանիշներով քննվող 11 քրեական գործ՝ 29 անձի վերաբերյալ, իսկ 2024 թվականի ընթացքում՝ 14 քրեական գործ 31 անձի վերաբերյալ:

2023 թվականին դատապարտված անձանցից 4-ը դատապարտվել է ազատազրկման, 21-ը՝ տուգանքի, 2-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 2 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: 2024 թվականի դատապարտված անձանցից 13-ը դատապարտվել է ազատազրկման, 8-ը՝ տուգանքի, 1-ը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկման, 9-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

2023 թվականին 2 անձ 2 գործով արդարացվել է, իսկ 2024 թվականին արդարացվել է 1 անձ 1 գործով: 2023 թվականին արդարացման 2 վերդիկտը և 2024 թվականի արդարացման 1 վերդիկտը բողոքարկվել է վերադաս դատարան, սակայն բողոքները մերժվել են:

2023 թվականին 2 գործ 2 անձի նկատմամբ դատարանում կարճվել է վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, 2 անձի նկատմամբ որոշում է կայացվել քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով դադարեցնելու մասին: 2024 թվականին 4 գործ 5 անձի նկատմամբ դատարանում կարճվել է վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, 16 անձի նկատմամբ որոշում է կայացվել քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով դադարեցնելու մասին:

Իրականացված ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ ի տարբերություն նախկին Քրեական օրենսգրքի՝ գործող Քրեական օրենսգիրքը սահմանել է պաշտոնատար անձանց այլ շրջանակ: Մասնավորապես՝ նախկին Քրեական օրենսգրքով պաշտոնատար անձինք են համարվել մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք և պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Զինված ուժերում, այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք: Նոր Քրեական օրենսգիրքն ընդլայնել է պաշտոնատար անձանց շրջանակը՝ դրանում ներառելով հանրային ծառայողներին:

Քրեական օրենսգրքի իմաստով՝ «պաշտոնատար անձ» հասկացությունը կապվել է ոչ թե համապատասխան մարմիններում ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնելու հետ, այլ պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունենալու կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնելու հետ: Հետևաբար, Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով արարքները որակելիս, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սուբյեկտային կազմին:

Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է նաև, որ յուրաքանչյուր դեպքում ոչ գույքային վնասը «էական վնաս» գնահատելիս՝ պետք է հաշվի առնել կոնկրետ վարույթով առկա

տվյալները և գործի հանգամանքները: Բացի այդ, նշված հոդվածով արարքները որակելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ միայն պետական մարմինների հեղինակազրկումը, հանրորեն վտանգավոր այլ հետևանքների բացակայության պայմաններում, չի կարող գնահատվել իբրև էական վնաս:

7. 2025 թվականի ընթացքում ուսումնասիրվել և ամփոփվել է նաև Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախաձեռնված քրեական վարույթներով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը 2023-2024 թվականների ընթացքում:

Ուսումնասիրության արդյունքներով պարզվել է.

2023 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով (շորթում) նախաձեռնվել է 256 քրեական վարույթ, իսկ 2024 թվականին՝ 392 քրեական վարույթ:

Ըստ տարիների, արձանագրվել է շորթման դեպքերի հետևյալ շարժընթացը.

Տարեթիվ	Դեպք
2018 թվական	**86**
2019 թվական	**84**
2020 թվական	**110**
2021 թվական	**285**
2022 թվական	**189**
2023 թվական	**256**
2024 թվական	**392**

2023 թվականին Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով քննվել է 339 քրեական վարույթ, որոնցից 118-ը փոխանցվել է նախորդ տարվանից, իսկ 2024 թվականին՝ 772 քրեական վարույթ, որոնցից 326-ը փոխանցվել է նախորդ տարվանից:

2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով քննված քրեական վարույթներով 33 անձի վերաբերյալ որոշումներ են կայացվել հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, իսկ 2024 թվականի ընթացքում՝ 41 անձի վերաբերյալ:

2023 թվականին Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով քննված 15 քրեական վարույթներով 15 անձի վերաբերյալ հսկող դատախազի կողմից կայացվել են քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումներ, որոնցից 4-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 11-ը՝ ռեաբիլիտացնող հիմքով, 5 քրեական վարույթով 7 անձի վերաբերյալ հսկող դատախազի կողմից կայացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում՝ 6-ը՝ ռեաբիլիտացնող հիմքով, 1-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով: 2024 թվականին Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով քննված 28 քրեական վարույթով 31 անձի վերաբերյալ հսկող դատախազի կողմից կայացվել են քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումներ, որոնցից 8-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 23-ը՝ ռեաբիլիտացնող հիմքով, 10 քրեական վարույթով 10 անձի վերաբերյալ հսկող

դատախազի կողմից կայացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում՝ 10-ն էլ ռեաբիլիտացնող հիմքով:

2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով քննված քրեական վարույթներով 16 անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան. 13 միջնորդություն բավարարվել է, 1-ը բավարարվել է մասնակի և կիրառվել տնային կալանք, 2-ը՝ մերժվել: 2024 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով քննված քրեական վարույթներով 26 անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան. 1-ը բավարարվել է մասնակի և կիրառվել տնային կալանք, 2-ը մերժվել են, իսկ 23-ը՝ բավարարվել:

2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով դատարանում քննվող 6 քրեական գործ՝ 6 անձի վերաբերյալ ավարտվել է: 2024 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով դատարանում քննվող 10 քրեական գործ՝ 11 անձի վերաբերյալ ավարտվել է:

2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով դատարանում քննված 6 քրեական գործերով դատապարտվել է 6 անձ: 4 անձի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկումը, որոնցից 1-ով՝ Վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 1 անձի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է կարճաժամկետ ազատազրկում, 1 անձի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է տուգանք: 2024 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով դատարանում քննված 8 քրեական գործով դատապարտվել է 9 անձ: 7 անձի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկումը, որոնցից 1-ով պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 1 անձի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է կարճաժամկետ ազատազրկումը, որը պայմանականորեն չի կիրառվել, 1 անձի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է տուգանք:

2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով դատարանում քննված քրեական գործերով որևէ անձ չի արդարացվել: 2024 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներով դատարանում քննված 1 քրեական գործով 1 անձ արդարացվել է:

Շորթման վերաբերյալ գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցանք կատարած անձինք, որպես կանոն, մտերիմ հարաբերություններ են ձևավորում տուժողների հետ, մտնում ինտիմ կապի կամ հաղորդակցության մեջ, ձեռք բերում այդ անձանց մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ, այդ

թվում՝ լուսանկարներ կամ տեսագրություններ, որոնք հետագայում օգտագործվում են սպառնալիքի շրջանակներում:

Այլ խոսքով՝ շորթման առկա է վիկտիմիզացիա (զոհականացում), այսինքն՝ տուժողներն իրենք են հանցավորին վստահում իրենց անձնական կյանքի գաղտնիք համարվող տեղեկությունները, որոնց հրապարկումն օգտագործվում է որպես սպառնալիքի միջոց:

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից հսկողություն է իրականացվել Քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով (համապատասխանում է նախկին Քրեական օրենսգրքի 309.1-ին հոդվածին) նախաձեռնված 294 քրեական վարույթի օրինականության նկատմամբ (2024 թվականին՝ 319 քրեական վարույթ):

Նշված քրեական վարույթներից 137-ը կարճվել է (2024 թվականին՝ 95), 1-ն ուղարկվել է դատարան՝ 2 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 1), 10 վարույթ միացվել է (2024 թվականին՝ 20), 3-ն ուղարկվել է այլ մարմին (2024 թվականին՝ 4), իսկ 104-ը փոխանցվել է 2026 թվական (2024 թվականին՝ 199):

Հաշվետու ժամանակահատվածում վարչության դատախազների կողմից հսկողություն է իրականացվել Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է նախկին Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասին) նախաձեռնված 314 քրեական վարույթի օրինականության նկատմամբ (2024 թվականին՝ 330 քրեական վարույթ):

Նշված քրեական վարույթներից 118-ը կարճվել է (2024 թվականին՝ 71), 13 քրեական վարույթ՝ 20 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան՝ (2024 թվականին՝ 6 վարույթ՝ 6 անձի վերաբերյալ), 12 վարույթ միացվել է (2024 թվականին՝ 9), 2 վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024 թվականին՝ 5), 18 վարույթով կատարվել են վարութային գործողություններ, սակայն դեռևս չի պարզվել քրեական հետապնդման ենթակա անձը, իսկ 154 վարույթ փոխանցվել է 2026 թվական (2024 թվականին՝ 224):

Նախորդ տարիների համեմատ՝ աճել է խոշտանգման ու վատ վերաբերմունքի այլ դրսևորում հանդիսացող՝ պաշտոնատար անձի կողմից բռնություն գործադրելով զուգորդված լիազորությունների անցման դեպքերով դատարան ուղարկված քրեական վարույթների և մեղադրյալների թիվը: 2025 թվականի ընթացքում դատարան է ուղարկվել 14 քրեական վարույթ 22 անձի վերաբերյալ: Այլ խոսքով՝ նախորդ տարվա համեմատ կրկնակի աճ է գրանցվել:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2015 թվականից ի վեր այս ցուցանիշն ամենաբարձրն է:

▪ Հաշվետու ժամանակահատվածում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հետևողական և պատշաճ դատախազական հսկողության, ինչպես նաև շրջադարձային դատախազական ակտեր կայացնելու արդյունքում հաստատված մեղադրական եզրակացություններով դատարան են հանձնվել հետևյալ քրեական վարույթները.

1. ՀՀ երրորդ նախագահ Ս.Ս.-ի վերաբերյալ 3 քրեական վարույթ՝ ըստ մեղադրանքի.

▪նախկին Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին),

▪նախկին Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին), նախկին Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) և նախկին Քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 442-րդ հոդվածի 1-ին մասին)

▪17 դրվագ՝ նախկին Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին), 2 դրվագ՝ նախկին Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերին), 2 դրվագ՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերին) և 1 դրվագ՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին):

2. Ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախաձեռնված քրեական վարույթը, որով իրականացված նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ ՀՀ նախկին գլխավոր հարկադիր կատարող Մ.Պ.-ն խմբի կազմում, նախնական համաձայնությամբ իրացման նպատակով ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափերով «Կոկաին» տեսակի թմրամիջոց, ինչպես նաև՝ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, թաքցնելով մաքսային հսկողությունից, Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի Հայաստանի Հանրապետության է տեղափոխել առանձնապես խոշոր չափերով «Կոկաին» տեսակի թմրամիջոցը:

Մ.Պ.-ի և 4 այլ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Քրեական գործը 2025 թվականի դեկտեմբերի 12-ին մեղադրական եզրակացությամբ հանձնվել է դատարան:

3. Կառավարության, Ազգային ժողովի շենքերում և պետական նշանակության այլ օբյեկտներում ու հասարակական վայրերում բռնություն գործադրելով, ջարդ իրականացնելով, գույք ոչնչացնելով, վնասելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելով արտահայտված զանգվածային անկարգություններ կազմակերպելու, դրանց մասնակցելու, զանգվածային անկարգությունների ժամանակ մասնակիցների կողմից իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին չենթարկվելու կամ անձանց նկատմամբ բռնություն գործադրելու կոչերի, իշխանությունը զավթելուն, սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերի, ինչպես նաև Ազգային ժողովին և Կառավարությանը պարտադրելու, բացահայտ հափշտակություններ կատարելու դեպքերի առթիվ նախաձեռնված 4 քրեական վարույթ՝ 19 անձի վերաբերյալ:

4. Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց վերաբերյալ 1 քրեական վարույթ՝ ըստ մեղադրանքի Ռ.Պ.-ի՝ Քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով և 323-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, Պ.Գ.-ի՝ 322-րդ հոդվածի 1-ին մասով և 323-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, Գ.Հ.-ի՝ 322-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, Վ.Բ.-ի՝ 324-րդ հոդվածի 1-ին մասով, Ա.Հ.-ի՝ 324-րդ հոդվածի 1-ին մասով:

5. Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության էլեկտրագնացքների շահագործման և նորոգման մասնաճյուղից խարդախությամբ խոշոր չափերի գումարի հափշտակության վերաբերյալ քրեական վարույթը՝ ըստ մեղադրանքի՝ Ա.Վ.-ի, Ս.Հ.-ի, Ն.Ղ.-ի, Ա.Հ.-ի, Հ.Կ.-ի և Է.Խ.-ի՝ նախկին Քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

6. Երևանի նախկին քաղաքապետ Տ.Մ.-ի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, որն էական վնաս է պատճառել պետության և համայնքի իրավունքներին և օրինական շահերին, ինչն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև այլ անձանց օժանդակությամբ, իշխանական, ծառայողական լիազորությունները և դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու, հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույք օրինականացնելու, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթած անձանց նկատմամբ վարչական

իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ չկիրառելու վերաբերյալ քրեական վարույթը՝ ըստ մեղադրանքի՝

- Ա.Ճ.-ի՝ Քրեական օրենսգրքի 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, Ա.Ս.-ի՝ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով,
- Ա.Բ.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով,
- Ա.Ս.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով,
- Ա.Ի.-ի՝ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (2 դրվագ), 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (2 դրվագ),
- Ա.Ս.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով,
- Լ.Հ.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով,
- Լ.Ա.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով,
- Կ.Ու.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով,
- Կ.Ն.-ի՝ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով,
- Հ.Մ.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (2 դրվագ),
- Ս.Ռ.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով,
- Ս.Ի.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (2 դրվագ), Ս.Կ.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով,
- Տ.Մ.-ի՝ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (4 դրվագ), 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 447-րդ հոդվածի 1-ին մասով,
- Տ.Ս.-ի՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

7. Խ.Բ.-ի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքերի հանցավոր ծագումը, դրանց տեղաշարժը, տնօրինման եղանակը և պատկանելությունը թաքցնելու նպատակով հոր՝ Գյումրի քաղաքի նախկին քաղաքապետ Ս.Բ.-ի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գույքերը ձեռք բերելու վերաբերյալ քրեական վարույթը՝ ըստ մեղադրանքի.

- Խ.Բ.-ի՝ նախկին Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ)
- Ռ.Ս.-ի՝ Քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով և նախկին Քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով,
- Ս.Ջ.-ի՝ նախկին Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,
- Ս.Մ.-ի՝ նախկին Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

8. «ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից իր պաշտոնեական դիրքը և իշխանական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն կազմակերպության շահերին հակառակ օգտագործելու և դրա հետևանքով կազմակերպության իրավունքներին ու օրինական շահերին անզգուշությամբ

առանձնապես խոշոր չափերի՝ 78.511.385 դրամի գույքային վնաս պատճառելու վերաբերյալ քրեական վարույթը՝ ըստ մեղադրանքի՝ Հ.Հ.-ի՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով:

2008 թվականի մարտի 1-ի լույս 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների առթիվ նախաքննական մարմիններում իրականացվող քննությունը, ինչպես նաև Դատախազության կողմից մեղադրանքի պաշտպանության, պետական շահերի պաշտպանության և այլ, այդ թվում՝ ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ լիազորությունների շրջանակներում կատարված գործողությունները.

1. Գլխավոր դատախազի 2025 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ վերացվել է 2008 թվականի մարտի 1-ի դրությամբ ՀՀ ոստիկանության պետի տեղակալի պաշտոնն զբաղեցրած Ս.Ա.-ի նկատմամբ նախկին Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված հանրային քրեական հետապնդումը վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով դադարեցնելու մասին Հատուկ քննչական ծառայության քննիչի՝ 2020 թվականի հունվարի 30-ի որոշումը և այն հաստատելու մասին հսկող դատախազի վարութային ակտը՝ նկատի ունենալով, որ Ս.Ա.-ին վերագրվող արարքը հանդիսանում է վատ վերաբերմունքի դրսևորում, հավասարեցված է խոշտանգմանը, ինչով պայմանավորված՝ նրա նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը չէր կարող դադարեցվել վաղեմության ժամկետներ կիրառելու օրենսդրական արգելքի առկայության պատճառով:

Քննությամբ հիմնավորվել էր, որ Ս.Ա.-ն, ով 2008 թվականի փետրվարի 12-ին նշանակվել էր Կառավարությանն առընթեր Ոստիկանության պետի տեղակալի պաշտոնում, 2008 թվականի մարտի 1-ին, անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, այլ անձանց հետ հանցակցությամբ, կազմակերպել է ոստիկանության տարբեր ստորաբաժանումների կողմից բռնության և հատուկ միջոցների գործադրմամբ զուգորդված՝ Երևան քաղաքի «Ազատության» հրապարակում նստացույց անող խաղաղ ցուցարարներին ցրելու, ապա քաղաքի կենտրոնական հատվածներում նրանց կուտակումները, հնարավոր ցույցերն ու հավաքները բացառելու գործողությունները, որպիսի գործողություններով անձանց իրավունքներին և օրինական շահերին, հասարակության և պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

2019 թվականի հոկտեմբերի 26-ին որոշում էր կայացվել Ս.Ա.-ին Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին. նույն օրն առաջադրվել է մեղադրանք:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսել պաշտոնատար անձի կողմից

դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելու համար, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը):

Հոդվածի 2-րդ մասով նախատեսված է լիազորություններն անցնելու որակյալ հանցակազմը, այն է՝ նույն արարքը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով:

Մեղադրյալ Ս.Ա.-ն իր ցուցմունքով խնդրել է իր նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական հետապնդումը դադարեցնել վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Գտնելով, որ մեղադրյալ Ս.Ա.-ի կողմից բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելն ավարտվել է 2008 թվականի մարտի 1-ին, հետևաբար՝ Ս.Ա.-ին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է, վարույթն իրականացնող քննիչ՝ Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի կողմից 2020 թվականի հունվարի 30-ին որոշում է կայացվել Ս.Ա.-ի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Նախաքննության օրինականության նկատմամբ հսկող դատախազի կողմից չի վերացվել վերոգրյալ որոշումը՝ այդ կերպ հաստատելով դրա օրինականությունը:

Գլխավոր դատախազի 2025 թվականի օգոստոսի 11-ի որոշման համաձայն՝ Ս.Ա.-ի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին վարույթն իրականացնող քննիչի 2020 թվականի հունվարի 30-ին որոշումը, այն չվերացնելու մասին հսկող դատախազի վարութային ակտը օրինական և հիմնավոր չեն ու ենթակա են վերացման: Գլխավոր դատախազի որոշման հիմքում, ի թիվս ներպետական օրենսդրության, միջազգային փաստաթղթերի ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի, դրված է Վճռաբեկ դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը, որի

համաձայն՝ առնվազն 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա՝ 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ առկա է եղել խոշտանգման կամ դրան հավասարեցված վերաբերմունքի, այդ թվում՝ պաշտոնատար անձի կողմից բռնությամբ զուգորդված լիազորություններն անցնելու դեպքում վաղեմության ժամկետներ կիրառելու օրենսդրական արգելք: Հետևաբար, Ս.Ա.-ին մեղսագրված է եղել արարք, որը, որպես վատ վերաբերմունքի դրսևորում, հավասարեցված է խոշտանգմանը, ինչով պայմանավորված՝ Ս.Ա.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը չէր կարող դադարեցվել վաղեմության ժամկետներ կիրառելու օրենսդրական արգելքի առկայության պատճառով:

2025 թվականի դեկտեմբերի 25-ին որոշում է կայացվել Ս.Ա.-ի նկատմամբ նոր հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին և նույն օրը նրան մեղադրանք է ներկայացվել նախկին Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է Քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին) նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված այն արարքի համար, որ նա, 2008 թվականի մարտի 1-ին անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, Ոստիկանության այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ կազմակերպել է Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների կողմից բռնության և հատուկ միջոցների գործադրմամբ զուգորդված Երևան քաղաքի «Ազատության» հրապարակում իրականացվող խաղաղ ցույցը ցրելը, ցուցարարներին հրապարակից բռնության գործադրմամբ հարկադրաբար հեռացնելը, ապա քաղաքի կենտրոնական հատվածներում նրանց կուտակումները, հնարավոր ցույցերն ու հավաքները բացառելը, որպիսի գործողություններով անձանց իրավունքներին և օրինական շահերին, ինչպես նաև հասարակության և պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

2025 թվականի դեկտեմբերի 26-ին՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել քրեական վարույթից մեղադրյալ Ս.Ա.-ի (ըստ մեղադրանքի՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով) վերաբերյալ քրեական վարույթն անջատելու, անջատված քրեական վարույթին համար շնորհելու մասին: Քրեական վարույթը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2. Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 26-ի որոշմամբ Քրեական օրենսգրքի 300.1 հոդվածը (սահմանադրական կարգը տապալելը) ճանաչվել է Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր: Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ Առաջին ատյանի դատարանը

2021 թվականի ապրիլի 6-ին մեղադրյալներ Ռ.Ք.-ի, Ս.Օ.-ի և Յու.Խ.-ի նկատմամբ նախկին Քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասով և Ա.Գ.-ի նկատմամբ Քրեական օրենսգրքի 38-300.1 հոդվածով քրեական հետապնդումը դադարեցրել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով, և այդ մասով քրեական գործի վարույթը կարճվել է:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված բոլոր վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի ապրիլի 6-ի որոշումը թողնվել է անփոփոխ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազը՝ խնդրելով բեկանել ստորադաս դատական ատյանների որոշումները և քրեական գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի 2022 թվականի մարտի 18-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանը 2024 թվականի հունվարի 19-ի որոշմամբ դիմել է Սահմանադրական դատարան նախկին Քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ նախկին Քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող այն մեկնաբանությամբ, որ մեղադրողը կարող է մինչև դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը (նրան մեղսագրվող արարքի իրավական որակումը)՝ ամբաստանյալի արարքում քրեական օրենքով նախատեսված այլ արարքի հատկանիշների առկայության պարագայում՝ անկախ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտումից:

Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա՝ գործը քննող դատավորի լիազորությունները դադարեցվել են և քրեական գործը 2024 թվականի սեպտեմբերի 2-ին մակագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարանի մեկ այլ դատավորի:

2024 թվականի սեպտեմբերի 12-ին Վճռաբեկ դատարանը բեկանել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի ապրիլի 16-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ քրեական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը և գործն ուղարկել է Հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

Ի թիվս այլնի Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Սահմանադրական դատարանի 2024 թվականի հուլիսի 22-ի որոշման լույսի ներքո, եթե մեղադրողը գտնում է, որ կատարված արարքը կարող է որակվել Քրեական օրենսգրքի այլ

հոդվածով, ապա իրավասու է մեղադրանքի լրացմանը կամ փոփոխմանն ուղղված քայլեր ձեռնարկել:

2024 թվականի հոկտեմբերի 11-ին հանրային մեղադրողի կողմից կայացվել են Ռ.Ք.-ին, Ս.Օ.-ին, Յու.Խ.-ին և Ա.Գ.-ին՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասով վերագրված արարքի իրավական գնահատականը փոխելու և նրանց նոր՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով (համապատասխանում է գործող Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին) մեղադրանք ներկայացնելու մասին որոշումներ:

2025 թվականի նոյեմբերի 24-ին հանրային մեղադրողը դատարան է ներկայացրել Ռ.Ք.-ի, Ս.Օ.-ի, Յու.Խ.-ի և Ա.Գ.-ի վերաբերյալ նոր մեղադրանքի որոշումները:

2026 թվականի հունվարի 16-ին Հակակոռուպցիոն դատարանի դատավորը հաստատել է Ռ.Ք.-ի, Ս.Օ.-ի, Յու.Խ.-ի և Ա.Գ.-ի վերաբերյալ նոր մեղադրանքի որոշումները:

3. 2025 թվականի օգոստոսի 11-ին Գլխավոր դատախազությունը Հակակոռուպցիոն դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ Ռ.Ք.-ի, Ա.Գ.-ի, Ս.Օ.-ի, Յ.Խ.-ի՝ Հայաստանի Հանրապետության կողմից հատուցված 670 միլիոն դրամը՝ որպես հետադարձ պահանջ, համապարտության կարգով բռնագանձելու պահանջի մասին:

Հետադարձ պահանջի չափը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով՝

- Ազգային ժողովի կողմից 2009 թվականի հունիսի 4-ին ընդունված՝ «2008 թվականի մարտի 1-2-ը Երևան քաղաքում տեղիունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության մասին» ՀՀ օրենքը, որի հիման վրա Կառավարության կողմից 2019 թվականի օգոստոսի 8-ին ընդունվել է թիվ 990-Ն որոշումը:
- Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 2024 թվականի հոկտեմբերի 25-ի գրությունը, որի համաձայն՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևանում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց մինչ 2024 թվականի հոկտեմբերի 25-ը տրամադրված աջակցության չափը կազմում է 670 միլիոն դրամ:

Միաժամանակ, Գլխավոր դատախազությունը ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն՝ խնդրելով հայցագնի՝ 670 միլիոն դրամի չափով արգելանք դնել պատասխանողներ Ռ.Ք.-ին, Ա.Գ.-ին, Ս.Օ.-ին, Յ. Խ.-ին պատկանող գույքերի վրա:

Հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ հայցի ապահովման միջոց կիրառելու

վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է:

4. 2008 թվականի մարտի 1-2-ի իրադարձությունների ժամանակ զոհված 10 անձանց մահվան, այլ անձանց կողմից ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքերով նախաքննության շրջանակներում ընդհանուր առմամբ հետազոտվել են՝

- Զինված ուժերում հաշվառված՝ 93 հատ «ԱԿ-74» տեսակի, իսկ 23 հատ «ԱԿՍ-74ՈՒ» տեսակի, 5,45մմ տրամաչափի «Կալաշնիկով» տեսակի ինքնաձիգեր, 1 հատ՝ 5,45մմ տրամաչափի «ՌՊԿ-74» տեսակի ձեռքի գնդացիր և 1 հատ՝ 7,62մմ տրամաչափի «ՍՎԴ» տեսակի նշանառու հրացան:
- Հետազոտվել են նաև 1306 հատ 9մմ տրամաչափի «Մակարով» տեսակի ատրճանակներ, որոնցից 217 հատը՝ ներկայացվել է Ոստիկանության զորքերից, 300 հատը՝ Ներքին գործերի նախարարության ոստիկանության այլ ստորաբաժանումներից, իսկ 789 հատը՝ Պաշտպանության նախարարությունից:
- Ներկայում փորձագետի կողմից հետազոտվում են Ներքին գործերի նախարարության ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության հատուկ նշանակության գումարտակի հաշվեկշռում գտնվող «Մակարով» տեսակի ատրճանակները:

1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած դեպքի կազմակերպիչների վերաբերյալ իրականացվող քրեական վարույթով, նախաքննության համակողմանիությունն ապահովվելու նպատակով, վարույթն իրականացնող մարմնի կողմից 2025 թվականի ընթացքում կատարվում են ապացուցողական և այլ վարութային գործողություններ, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարվող հանցագործությունների բարձր հանրային վտանգավորությունը և բացահայտման դժվարությունները՝ 2025 թվականին ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությունում առանձնացվել են կիբեռհանցագործությունների գործերով մասնագիտացած դատախազների հաստիքներ:

Նշենք, որ դատախազության գործունեությանը վերաբերող միջազգային-իրավական փաստաթղթերում ևս դատախազների մասնագիտացման անհրաժեշտությունը մշտապես նշվել է որպես դատախազության գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման: Մասնավորապես՝ Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի (Consultative Council of European Prosecutors) 2014 թվականի դեկտեմբերի 17-ի՝ «Դատախազների վերաբերյալ եվրոպական նորմերը և սկզբունքները» թիվ 9 խորհրդատվական կարծիքի 119-րդ կետում, 2016 թվականի նոյեմբերի 18-ի՝

«Դատախազական աշխատանքի որակի և արդյունավետության վերաբերյալ՝ ներառյալ ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը» թիվ 11 կարծիքի 27-րդ և 54-րդ կետերում ամրագրված է, որ դատախազների մասնագիտացումն անհրաժեշտ է դիտարկել որպես առաջնահերթություն՝ դատախազների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև հանցավորության տարբեր դրսևորումներին պատշաճ արձագանքելու համար:

Այս համատեքստում, միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, մշակվել են ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությունում կիբեռհանցագործությունների գործերով մասնագիտացած դատախազներին ներկայացվող պահանջները: Այս աշխատանքի կատարման ընթացքում էական նշանակություն է ունեցել ՀՀ գլխավոր դատախազության և Նիդերլանդների Թագավորությունում գործող՝ Միջազգային իրավական համագործակցության կենտրոնի (Center for International Legal Cooperation (CILC), այսուհետ՝ Կենտրոն) միջև համագործակցությունը: Մասնավորապես՝ Կենտրոնի ներկայացուցիչները 2025 թվականի հուլիսի 15-17-ը այցելել են Հայաստանի Հանրապետություն, որի ընթացքում հանդիպումներ են ունեցել շահագրգիռ մարմիններում, գնահատել են համապատասխան մասնագիտացման դատախազներին և տեխնիկական անձնակազմին ներկայացվող պահանջները, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության կարիքները: Արդյունքում, մշակվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությունում կիբեռհանցագործությունների գործերով մասնագիտացած դատախազի պաշտոնին հավակնող անձանց հմտությունների ու կոմպետենցիաների ցանկ, որի հիման վրա հայտարարված բաց մրցույթի արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան վարչությունում նշանակվել է 2 դատախազ:

Նշենք նաև, որ կիբեռհանցագործությունների և տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող այլ հանցագործությունների դեպքերում Դատախազությունում կիրառվում է աշխատանքի բաժանման հետևյալ մոդելը. ստեղծվում է դատախազների խումբ, որում ընդգրկվում են կիբեռհանցագործությունների գործերով մասնագիտացված դատախազը և այն ստորաբաժանման դատախազը, որի գործառույթներին անմիջականորեն առնչվում է տվյալ հանցագործությունը:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒՄ 2025

3

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

2025 թվականին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարաններ է ուղարկվել 14.669 քրեական վարույթ՝ 16.256 անձի վերաբերյալ,[1] որոնցից 14.608-ը 16.194 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 61-ը՝ 62 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Համեմատության համար նշենք, որ 2024 թվականի ընթացքում Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարաններ է ուղարկվել 11.846 քրեական վարույթ՝ 13.224 անձի վերաբերյալ: **2025 թվականին դատարան ուղարկված քրեական վարույթների թիվը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 2823-ով կամ 23,8%-ով:**



Դատարաններում քննվել և ավարտվել է 10.787 քրեական գործ՝ 11.457 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 9830 գործ՝ 10.691 անձի վերաբերյալ, 2023 թվականին՝ 5080 գործ՝ 5485 անձի վերաբերյալ):

2025 թվականին դատարաններում քննվել և ավարտվել է 957-ով կամ 9,7%-ով ավելի գործ, քան 2024 թվականին:



1. Սույն հատվածում վիճակագրական տվյալները ներկայացված են՝ ըստ «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական տարեկան հաշվետվությունների: Ըստ այդմ, հնարավոր են որոշակի անհամապատասխանություններ Դատական դեպարտամենտի կողմից հրապարակվող վիճակագրական տվյալների հետ՝ կապված հաշվարկման մեթոդաբանության տարբերությունների հետ:

2025 թվականին դատարաններում քննված և ավարտված՝ 11.457 անձի վերաբերյալ 10.787 քրեական գործից 7998-ը կամ 74,1%-ը եղել է ոչ մեծ ծանրության՝ 8136 անձի նկատմամբ (71%), 1771-ը կամ 16,5%-ը՝ միջին ծանրության՝ 2014 անձի նկատմամբ (17,6%), 855-ը կամ 7,9%-ը՝ ծանր՝ 1115 անձի նկատմամբ (9,7%) և 163-ը կամ 1,5%-ը՝ առանձնապես ծանր՝ 192 անձի նկատմամբ (1,7%):



Նշված քրեական գործերից 9879-ով դատապարտվել է 10.348 անձ (2024 թվականին՝ 8660 գործով՝ 9224 անձ, 2023 թվականին՝ 4163 գործով՝ 4419 անձ):



Նշված անձանցից 7678-ը (2024 թվականին՝ 6650) կամ 74,2%-ը դատապարտվել են ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու համար, 1571-ը (2024 թվականին՝ 1424) կամ 15,2%-ը՝ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար, 966-ը (2024 թվականին՝ 995) կամ 9,3%-ը՝ ծանր հանցագործություն կատարելու համար, 133-ը (2024 թվականին՝ 155) կամ 1,3%-ը՝ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար:



62 քրեական գործով 62 անձի նկատմամբ Քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց (2024 թվականին՝ 61 քրեական գործով՝ 62 անձի նկատմամբ):

2025 թվականին ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը, 2024 թվականի համեմատ, աճել է 1028-ով կամ 15,5%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվն աճել է 147-ով կամ 10,3%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է 29-ով կամ 2,9%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է 22-ով կամ 14,2%-ով:

Դատապարտված անձանցից 32-ը եղել է անչափահաս (2024 թվականին՝ 19, 2023 թվականին՝ 21), 245-ը՝ կին (2024 թվականին՝ 129, 2023 թվականին՝ 113), 637-ը՝ նախկինում դատված (2024 թվականին՝ 438, 2023 թվականին՝ 247), 150-ը՝ օտարերկրացի (2024 թվականին՝ 150, 2023 թվականին՝ 84): 26 գործով 26 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2024 թվականին՝ 12 գործով՝ 13 անչափահասի նկատմամբ, 2023 թվականին՝ 8 գործով՝ 8 անչափահասի նկատմամբ):



2025 թվականին դատապարտված անչափահասների թիվը, նախորդ տարվա համեմատ, աճել է 13-ով կամ 68,4%-ով, դատապարտված կանանց թիվն աճել է 116-ով կամ 89,9%-ով, նախկինում դատված անձանց թիվն աճել է 199-ով կամ 45,4%-ով, իսկ դատապարտված օտարերկրացիների թիվը մնացել է նույնը:

2025 թվականի ընթացքում 294 գործով առաջին ատյանի դատարանների կողմից արդարացվել է 375 անձ (2024 թվականին՝ 174 գործով՝ 218 անձ), իսկ վերաքննիչ

դատարանի կողմից՝ 6 գործով 6 անձ (2024 թվականին՝ 1 գործով՝ 1 անձ), մասնակի արդարացվել է 8 անձ (2024 թվականին՝ 3 անձ):

Արդարացման դատավճիռները կազմել են դատավճիռների 2,7%-ը (2024 թվականին՝ 1,8%):

2025 թվականին արդարացման դատավճիռների թվի 0,9%-ով աճը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- **Քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի հատկանիշներով (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը) քննված 67 գործերով կայացված արդարացման դատավճիռներով. նշված գործերով արդարացվել է 67 անձ:**

Քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի վերաբերյալ դատական և մինչդատական պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանի կողմից 2025 թվականի օգոստոսի 12-ին կայացված թիվ ԵԴ1/0372/01/24 որոշումից հետո զարգանում է այն ուղղությամբ, որ բոլոր այն քրեական գործերով (վարույթներով), որոնցով վարչական մարմնի կողմից կայացված՝ անձին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու կամ այն կասեցնելու մասին վարչական ակտը վարչական կամ դատական կարգով անվավեր է ճանաչվում, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված արարք կատարած այն անձանց նկատմամբ, որոնց քրեական հետապնդման (կամ փաստացի քրեական հետապնդման) հիմքում ընկած է եղել հենց այդ վարչական ակտը, կայացվում է արդարացման վերդիկտ կամ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ արձանագրվել է հետևյալը. *«(…) ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասի գործողության նախապայմանը և այդ հոդվածով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ նրա վարչական պատասխանատվության ենթարկված լինելն է՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկվելը կամ վարելու իրավունքը կասեցվելը: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ վարելու իրավունքից զրկելը կամ այդ իրավունքը կասեցնելը պետք է լինի օրենքով սահմանված կարգով, այն է՝ իրավաչափ վարչական ակտի հիման վրա: Հակառակ պարագայում, եթե վարչական ակտը կայացվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ և վարչական կամ դատական կարգով անվավեր է ճանաչվել, ապա քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը բացակայում է, քանզի վերանում է քրեական պատասխանատվության ենթարկվելու պարտադիր նախապայմանը՝*

օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկված լինելը: (…)»:

- **Քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածով նախատեսված՝ զինծառայողի կողմից թմրամիջոց գործածած վիճակում ծառայության ներկայանալու հանցակազով 2025 թվականին 10 գործով արդարացման վերդիկտներ են կայացվել:**

Քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածով նախատեսված հանցակազմով նախաձեռնված քրեական վարույթներով ենթադրյալ հանցանք կատարած անձանց արարքներին վերջնական իրավական գնահատական տալիս դատարանների կողմից կայացվում են արդարացման ակտեր՝ *«թմրամիջոց գործածած վիճակում ծառայության ներկայանալու»* օրենսդրական ձևակերպման մեկնաբանման արդյունքում:

Վերոնշյալ օրենսդրական ձևակերպմանը գնահատական տալու և Քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածով միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով Դատախազության կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որն ընդունվել է վարույթ, սակայն դեռևս Վճռաբեկ դատարանի կողմից որոշում չի կայացվել:

2025 թվականի ընթացքում արդարացման դատավճիռների դեմ բերվել է 427 վերաքննիչ և վճռաբեկ բողոք:

2025 թվականին 526 քրեական գործով՝ 646 անձի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցվել է (2024 թվականին՝ 922 քրեական գործ՝ 1172 անձի վերաբերյալ), որոնցից 12 անձի նկատմամբ՝ Քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 2 անձի նկատմամբ՝ Քրեական դատավարության նախկին օրենսգրքի 37-րդ հոդվածով, 111 անձի նկատմամբ՝ Քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 16 անձի նկատմամբ՝ Քրեական դատավարության նախկին օրենսգրքով սահմանված այլ հիմքով, 21 անձի նկատմամբ՝ Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 383 անձի նկատմամբ՝ Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, որոնցից՝ 196 անձի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված հիմքով, 118 անձի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված հիմքով, 69 անձի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքով սահմանված այլ հիմքերով, ինչպես նաև 101 անձի նկատմամբ՝ Քրեական դատավարության օրենսգրքի այլ հիմքերով:

2025 թվականին դատարաններում քննված քրեական գործերից 2858-ով 2983 անձի նկատմամբ կիրառվել է համաձայնեցման կամ արագացված վարույթ:

2025 թվականին դատապարտված 10.348 անձից 820-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 7,9%-ը (2024 թվականին 9224 անձից ազատազրկման է դատապարտվել 905-ը կամ 9,8%-ը):



2025 թվականին որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել:

Կարճաժամկետ ազատազրկման է դատապարտվել 142 անձ (2024 թվականին՝ 81 անձ):

Տուգանքի է դատապարտվել 6344 անձ (2024 թվականին՝ 5659 անձ). տուգանքի դատապարտված անձանց թիվը կազմում է դատապարտված անձանց 61,3%-ը:

2025 թվականին 1649 անձի նկատմամբ, որը կազմում է դատապարտված անձանց 15,9%-ը, նշանակված պատիժը Քրեական օրենսգրքի 84-րդ (նախկին Քրեական օրենսգրքի 70-րդ) հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2024 թվականին չի կիրառվել 1690 անձի կամ 18,3%-ի նկատմամբ):

2025 թվականին դատապարտված 2 անձի նկատմամբ կիրառվել է Քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը (2024 թվականին՝ 11 անձի, 2023 թվականին՝ 18 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

2025 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 1306 վերաքննիչ բողոք, իսկ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին դատարանների վարույթում մնացորդ բողոքներն եղել են 371, որոնցից 15-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բողոքներից 333-ը կամ 19,9%-ը եղել է արդարացման, 98-ը կամ 5,8%-ը՝ կարճման, 903-ը կամ 53,8%-ը՝ պատժի մեղմության, 58-ը կամ 3,5%-ը՝ արարքի վերաորակման դեմ, իսկ 285-ը կամ 17%-ը՝ այլ հիմքերով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 219-ը կամ 13,1%-ը բավարարվել է, 73-ը կամ 4,4%-ը բավարարվել է մասնակի, 964-ը կամ 57,5%-ը մերժվել է, 13-ով կամ 0,8%-ով կայացվել է այլ որոշում, 381-ով կամ 22,7%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է, 10-ը կամ 0,5%-ը վարույթ չեն ընդունվել, 2-ը կամ 0,1%-ը բողոք բերած դատախազի կողմից հետ է վերցվել, իսկ 15-ով կամ 0,9%-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չի եղել վարույթ ընդունելու հարցը:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված

վերաքննիչ բողոքները 781-ն են, որոնցից 2-ով ամփոփման ժամանակահատվածում որոշված չի եղել վարույթ ընդունելու հարցը, իսկ 4 բողոք հետ է վերցվել: Բերված բողոքներից 3-ը կամ 0,4%-ը եղել է արդարացման, 6-ը կամ 0,8%-ը՝ կարճման, 11-ը կամ 1,4%-ը՝ պատժի մեղմության դեմ, 589-ը կամ 75,4%-ը՝ պատժի խստության դեմ, 172-ը կամ 22%-ը՝ այլ հիմքով:

Վարույթ ընդունված 775 բողոքներից բավարարվել է 79-ը կամ 10,2%-ը, 48-ը կամ 6,2%-ը բավարարվել է մասնակի, 496-ը կամ 64%-ը մերժվել է, 15-ով կամ 1,9%-ով կայացվել է այլ որոշում, 137-ով կամ 17,7%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2025 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից դատական ակտերի դեմ բերված 440 (2024 թվականին՝ 285) և նախորդ տարվանից փոխանցված 75 (2024 թվականին՝ 35) վճռաբեկ բողոքից 160-ով (2024 թվականին՝ 85) լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 241-ով (2024 թվականին՝ 144) որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 114-ը (2024 թվականին՝ 91) ընդունվել է վարույթ, որոնցից 23-ը (2024 թվականին՝ 36) բավարարվել է, 4-ը (2024 թվականին՝ 2) մասնակի է բավարարվել, 2-ը (2024 թվականին՝ 1) մերժվել է, 83-ի (2024 թվականին՝ 52) քննությունն ընթացքի մեջ է:

Այսինքն, 2025 թվականին Վճռաբեկ դատարանը վարույթ է ընդունել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ներկայացված՝ 23-ով կամ 25,2%-ով ավելի վճռաբեկ բողոք, քան 2024 թվականին:

Հաշվետու ժամանակահատվածում դատական ակտերի բողոքարկման սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներում, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների բողոքների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն ընդունել է մի շարք ուղենիշային որոշումներ, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումները միասնական, իրավակիրառ պրակտիկայի կայացման տեսանկյունից ունեն շրջադարձային նշանակություն:

Այսպես.

1. Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/1157/01/19 քրեական գործով 2025 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար ուղենիշային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշում է ձևավորել Քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված՝ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ մարդուն առևանգելու հանցակազմի մեկնաբանման վերաբերյալ:

Նշված որոշմամբ, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ գործող և նախկին Քրեական օրենսգրքերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկին օրենսգրքի բազմաթիվ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք

նախատեսված՝ հանցանքը որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարելու որակյալ հատկանիշն էական բովանդակային փոփոխության է ենթարկվել: Մասնավորապես, գործող քրեական օրենսդրության շրջանակներում կարևորվել է առարկայի կամ միջոցի՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, գործող քրեական օրենսդրության շրջանակներում որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք դիտարկելով կոնկրետ հանցանքը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելը, ի համեմատություն նախկին քրեական օրենսդրության, նեղացրել է վերոնշյալ որակյալ հանգամանքի բովանդակությունը: Մասնավորապես, եթե նախկինում արարքը ծանրացնող հանգամանքով որակելու համար ինքնին բավարար էր որպես զենք օգտագործվող առարկաների գործադրման փաստը, ապա կատարված փոփոխության պայմաններում, անհրաժեշտ է ոչ միայն հավաստել անձի կողմից համապատասխան առարկան կամ միջոցը գործադրելու, այլև դրանք մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու հանգամանքը:

Օրենսդրի վերոնշյալ մոտեցման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ հանցանքը նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելն է իրականում վկայում հանցավորի անձի բարձր վտանգավորության մասին, այլ ոչ թե պարզապես որպես զենք օգտագործվող առարկաների գործադրումը, երբ համապատասխան առարկան կարող է վերցվել նաև դեպքի վայրից:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը, ինչպես նաև վերհանելով կատարված փոփոխության բովանդակությունը և օրենսդրի նպատակը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որակյալ է համարվում ոչ թե առարկայի կամ միջոցի պարզապես օգտագործումը, այլ մարմնական վնասվածք պատճառելու համար որոշակի նախապատրաստական գործողությունների իրականացումը, այն է՝ առարկան կամ միջոցը նախապես պատրաստելը կամ հարմարեցնելը: Այլ կերպ՝ արարքը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ է նախ և առաջ ուշադրություն դարձնել հանցավորի սուբյեկտիվ ընկալմանը և վերջինիս կողմից օբյեկտիվորեն իրականացված գործողությունների բնույթին:

Մասնավորապես՝ վերոնշյալ որակյալ հանգամանքն անձին մեղսագրելու համար, կարևոր է, որ վերջինս մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես որոշակի ակտիվ

գործողություններ իրականացնի, այն է՝ պատրաստի կամ հարմարեցնի համապատասխան առարկան կամ միջոցը: Հաշվի առնելով «պատրաստել» կամ «հարմարեցնել» արտահայտությունների լեզվաբացատրական նշանակությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ առկա դոկտրինալ մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ առարկան կամ միջոցը պատրաստել ասելով պետք է հասկանալ ցանկացած գործողություն, որի արդյունքում մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստի առարկա կամ միջոց է ստացվում կամ ստեղծվում: Ինչ վերաբերում է առարկան կամ միջոցը հարմարեցնելուն, ապա այն ենթադրում է հանցավորի կողմից արդեն իսկ գոյություն ունեցող առարկայի կամ միջոցի նկատմամբ որևէ ներգործության իրականացում՝ լրիվ կամ մասնակի կառուցվածքային փոփոխության ենթարկում, կարգավորում կամ ձևափոխում, որպեսզի դրանք առավել արդյունավետ կամ հարմար լինեն օգտագործման համար (օրինակ՝ մետաղյա ձողը կամ խոհանոցային դանակը սրելը, մետաղական մալուխը ընդհանուր զանգվածից կտրելով առանձնացնելը և այլն):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ գործող Քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված որակյալ տեսակն անձին մեղսագրելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ առևանգումը կատարվել է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ առևանգման հանցակազմի քննարկվող որակյալ տեսակն անձին մեղսագրելու համար անհրաժեշտ է գործում առկա փաստական տվյալներով հաստատված համարել, որ առևանգումը կատարվել է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կատարված օրենսդրական փոփոխության հիմքում ընկած է այն գաղափարը, որ հանցանք կատարած անձի առավել բարձր վտանգավորության մասին է վկայում այն, որ վերջինս որոշակի քայլեր է ձեռնարկում՝ նախապես պատրաստում կամ հարմարեցնում է համապատասխան առարկան կամ միջոցը՝ մարմնական վնասվածք պատճառելու համար: Այլ կերպ՝ սույն ծանրացնող հանգամանքի դեպքում խոսք է գնում ոչ թե ընդհանրապես առարկայի կամ միջոցի՝ ի սկզբանե անձին մարմնական վնասվածք պատճառելու հատկություն ունենալու, այլ անձի կողմից այդ նպատակով՝ մարմնական վնասվածք պատճառելու համար, կոնկրետ գործողություններ իրականացնելու՝ նախապես պատրաստելու կամ հարմարացնելու մասին:

Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման հիման վրա մշակվել է «Հայաստանի

Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվել է փոփոխություն կատարել ՀՀ քրեական օրենսգրքի բոլոր այն հոդվածներում, որոնցում որպես որակյալ հանցակազմի տեսակ նախատեսված է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ արարքը կատարելը:

2. Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/0205/01/20 քրեական գործով 2025 թվականի հունվարի 10-ի որոշմամբ անդրադարձել է ապացույցի, մասնավորապես՝ փորձագետի եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու հարցին:

Նշված որոշմամբ, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ փորձաքննությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ հավաքելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով, և որը որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում է որպես թույլատրելի ապացույց և դրվում դատավարական ակտի հիմքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ փորձագետի եզրակացության թույլատրելիությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը պահպանված լինելը, փորձագետի եզրակացությունը կազմելու ճշտությունը և դրա մեջ օրենքով նախատեսված բոլոր ռեկվիզիտների առկայությունը, հետազոտության ներկայացված օբյեկտների ձեռքբերման և պահպանման դատավարական կարգը պահպանված լինելը:

Նույն որոշմամբ նաև արձանագրվել է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասը, ի թիվս այլնի, պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով սառը զենք կրելու համար, ինչից հետևում է, որ քրեաիրավական որակման տեսանկյունից որոշիչ է առարկայի՝ սառը զենք լինելու հանգամանքը, բայց ոչ երբեք դրա տեսակը:

3. Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ1/0048/13/24 գործով 2025 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ անդրադարձել է Քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի իրավակարգավորումներին:

Նշված որոշմամբ, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու ինստիտուտը գործադրելու համար, ի թիվս այլնի, անհրաժեշտ պայմաններ են հանդիսանում մեղադրական դատավճիռն ի կատար ածելու համար քրեական օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետի լրացած լինելը, ինչպես նաև նշված վաղեմության ժամկետի ընդհատված կամ կասեցված չլինելը:

Քննարկվող ինստիտուտի նախկին իրավակարգավորումները համեմատելով գործող Քրեական օրենսգրքի իրավակարգավորումների հետ՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործող Քրեական օրենսգրքով ամրագրված նոր իրավակարգավորումներով օրենսդիրը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետները սահմանում է՝ հաշվի առնելով ոչ թե անձի կողմից կատարված հանցագործության տեսակը, այլ հիմք է ընդունում հանցագործության կատարման համար անհատապես անձի նկատմամբ նշանակված պատժատեսակը և պատժաժամկետը: Ավելին՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետը հավասարեցվում է նրա նկատմամբ նշանակված պատժի ժամանակահատվածին: Այլ կերպ, ներկայումս գործող իրավակարգավորումը չի որոշակիացնում և հստակ չի սահմանում քննարկվող ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ վաղեմության ժամկետները, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որը դրանք կապում էր բացառապես հանցատեսակի հետ:

Միաժամանակ, անդրադառնալով քննարկվող ինստիտուտի շրջանակում վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման առանձնահատկություններին, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործող Քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի տրամաբանությունը կայանում է նրանում, որ դատապարտյալի կողմից հիմնական պատիժը կրելուց խուսափելու դեպքում, մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետի ընթացքը ենթակա է կասեցման մինչև դատապարտյալի ձերբակալման, մեղայականով ներկայանալու կամ խուսափելը դադարեցնելու պահը: Միայն վերոնշյալ պայմանների ի հայտ գալու դեպքում կարող է վերսկսվել դատապարտյալի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետի ընթացքի հաշվարկը՝ անկախ այն հանգամանքից, թե որքան է տևել անձի կողմից պատիժը կրելուց խուսափելու և վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված լինելու ժամանակահատվածը: Ավելին՝ կասեցման պարագայում, անձի նկատմամբ նշանակված պատժաժամկետին հավասարեցված վաղեմության ժամկետը երկարաձգվում է նույն պատժաժամկետի մեկ երկրորդի չափով: Այսինքն՝ գործող իրավակարգավորումը պատիժը կրելուց խուսափող դատապարտյալի համար որդեգրել է առավել խիստ մոտեցում: Բացի այն, որ դատավճռի վաղեմության ժամկետի կատարման ընթացքի համար ամրագրված չեն որոշակի և հստակ ժամկետներ, այլև վերջինի կողմից պատիժը կրելուց խուսափելու դեպքում այն երկարաձգվելու է դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժաչափի մեկ երկրորդով, ընդ որում

այն կարող է հոսել միայն պատժի կրումից խուսափող դատապարտյալի ի հայտ գալու պահից սկսած:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործող իրավակարգավորման պայմաններում, երբ դատապարտյալը խուսափում է իր նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատիժը կրելուց, տվյալ մեղադրական դատավճռի ի կատար ածման վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է՝ երկարաձգվելով վերջինիս պատժաժամկետի մեկ երկրորդի չափով և ենթակա չէ վերսկսման մինչև դատապարտյալի ի հայտ գալը: Այսինքն, կասեցված վաղեմության ժամկետի պայմաններում, նախատեսված չեն օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումը բացառող բացարձակ ժամկետներ, ավելին՝ վաղեմության կասեցված ժամկետի վերսկսման դեպքում այն երկարաձգվում է՝ փաստացի վատթարացնելով պատժից խուսափող դատապարտյալի վիճակը: Մինչդեռ նախկին իրավակարգավորումը կասեցված վաղեմության ժամկետի դեպքում բացառում է մեղադրական դատավճռի կատարումը, երբ անցել են պատժատեսակով պայմանավորված և բացարձակ համարվող հստակ ժամկետները՝ անկախ դատապարտյալի ի հայտ գալու հանգամանքից:

4. Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/0083/13/23 գործով 2025 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ անդրադարձել է միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա դատապարտյալին հիվանդության հիմքով պատժից ազատելու վերաբերյալ իրավաչափության հարցին այն պարագայում, երբ տվյալ եզրակացությունը չի պարունակում նշում քրեակատարողական հիմնարկի պայմաններում անհրաժեշտ բուժումը կամ խնամքը կազմակերպելու անհնարինության վերաբերյալ:

Նշված որոշմամբ, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի 825-Ն որոշման 98-րդ կետի վերլուծությունից բխում է, որ կոնկրետ հիվանդության առկայության մասին հետևության հետ մեկտեղ բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ պետք է նշվի քրեակատարողական հիմնարկի պայմաններում տվյալ հիվանդության համար խնամքի և բուժման կազմակերպման հնարավորության կամ անհնարինության մասին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավասու բժշկական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը չի կարող դատական նիստի ընթացքում լրացվել այդ հանձնաժողովի անդամի կողմից և վերջինիս կողմից տրված բացատրությունը չի կարող փոխարինել համապատասխան մասնագիտական գիտելիքներ և փորձ ունեցող հինգ անդամից բաղկացած հանձնաժողովի կողմից տրված բժշկական եզրակացությանը, և որ տվյալ հարցը ենթակա է լուծման բացառապես համապատասխան բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ:

5. Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/1445/06/22 գործով 2025 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու համար անհրաժեշտ նոր էական հանգամանքների հիմնահարցին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվել է նոր որակմամբ, ինչպես նաև ավելացվել է երկու դրվագ մեղադրանքի շրջանակներում: Նշված հանգամանքն ինքնին բացառում է Քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման կիրառումը, քանի որ գործ ունենք ոչ թե նույն, այլ նոր մեղադրանքի հետ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում «նոր մեղադրանքը» ներառել է ինչպես իրավական որակման, այնպես էլ փաստակազմի փոփոխություն:

Դատախազությունը 2025 թվականի ընթացքում դիմել է իրավասու մարմիններին՝ Արդարադատության նախարարին և Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ կոնկրետ գործերով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումներով:

2025 թվականի ընթացքում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Դատախազության կողմից ՀՀ արդարադատության նախարարին է է ներկայացվել 17 հաղորդում (2024 թվականին՝ 11), որոնցից 8-ի դեպքում մերժվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը, 3-ը դեռևս քննարկման փուլում է, իսկ 6 հաղորդման դեպքում հարուցվել է 6 կարգապահական վարույթ, որոնցից 5-ը հետագայում կարճվել են, իսկ 1 դեպքում Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը միջնորդություն է ներկայացրել Բարձրագույն դատական խորհրդին՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Նշված միջնորդության քննության արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին հայտարարվել է «խիստ նկատողություն»:

2025 թվականին ՀՀ գլխավոր դատախազն Ազգային ժողով է ներկայացրել Ազգային ժողովի 5 պատգամավորի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու վերաբերյալ 5 միջնորդագիր, որոնք բավարարվել են:

2025 թվականին ՀՀ գլխավոր դատախազը Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացրել հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու վերաբերյալ 4 միջնորդություն՝ 3 դատավորի նկատմամբ (միջնորդություններից 2-ը վերաբերել են նույն գործով՝ նույն դատավորին): Ներկայացված միջնորդություններից 3-ը՝ 3 դատավորի նկատմամբ բավարարվել է (1 դատավորի նկատմամբ մերժված միջնորդությունը կրկին ներկայացվել և բավարարվել է):

4

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 2248 դեպք (2024 թվականին՝ 2093 դեպք): Աճ է արձանագրվել 155 դեպքով կամ 7,4%-ով: Արձանագրված դեպքերից 1027-ը կամ 45,7%-ը եղել են պատահարներ (2024 թվականին՝ 762), 1221-ը կամ 54,3%-ը հանցագործություններ (2024 թվականին՝ 1331), այդ թվում՝ 687-ը կամ 56,3%-ը՝ զինվորական (2024 թվականին՝ 715), 534-ը կամ 43,7%-ը՝ այլ հանցագործություններ (2024 թվականին՝ 616):

2024 թվականի համեմատ՝ պատահարներն աճել են 265-ով կամ 34,8%-ով[1], հանցագործությունները նվազել են 110-ով կամ 8,3%-ով: Ընդ որում, ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերը նվազել են 82-ով կամ 13,3%-ով, իսկ զինվորական հանցագործությունների դեպքերը նվազել են 28-ով կամ 3,9%-ով:



Եթե 2024 թվականի ընթացքում արձանագրված 1331 հանցագործություններից 217-ը կամ 16,3% են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 178-ը՝ ծանր, իսկ 39-ը՝ առանձնապես ծանր հանցագործություն, ապա 2025 թվականին արձանագրված 1221 հանցագործության դեպքերից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 143-ը կամ 11,7%-ը, որոնցից 130-ը՝ ծանր, 13-ը՝ առանձնապես ծանր:

1. Պատահարների թվի աճը պայմանավորված է հետաքննության մարմնից ստացված հաղորդումների հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների աճով. հետաքննության մարմնի կողմից ներկայացված հաղորդումներում առկա տեղեկատվությունը ստուգվել է քրեական վարույթի շրջանակներում պատշաճ քրեադատավարական ընթացակարգերով:

2024 թվականի համեմատ՝ ծանր հանցագործությունները նվազել են 48-ով կամ 26,9%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները նվազել են 26-ով կամ 66,7%-ով:



2025 թվականին ՀՀ զինված ուժերում զինծառայողների՝ ծառայության հետ կապված հանգամանքներում արձանագրվել են մահվան հետևյալ դեպքերը՝ ժամկետային 6 զինծառայող, ԱԱԾ սահմանապահ զորքերի 2 ժամկետային զինծառայող և 1 աշխարհազորային. ընդհանուր՝ ծառայության հետ կապված մահվան 9 դեպք՝ 2024 թվականի 27 դեպքի համեմատ:

Ծառայության հետ կապված մահվան դեպքերը հետևյալն են՝

- անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու 4 դեպք,
- զինվորական պաշտոնեական անփութության 1 դեպք,
- բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով մարդու մահ առաջացնելու 1 դեպք,
- կայծակնահարության 1 դեպք,
- հիվանդության 2 դեպք:

2025 թվականի ընթացքում ծառայության հետ կապված՝ զինծառայողների մահվան դեպքերը նվազել են 18-ով կամ 66,7 %-ով (2024 թվականին՝ 27):



2025 թվականին Հայաստանի Հանրապետության զինված ուժերում սպանության դեպք չի արձանագրվել:

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 375 զինծառայողներ, որոնց թվում՝ 44 զինծառայողներ ստացել են ծանր, 303-ը՝ միջին ծանրության, թեթև և թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, իսկ 28-ի ծանրության աստիճանը 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ պարզված չի եղել:

Զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրված 1221 հանցագործության դեպքերը, 2024 թվականին արձանագրված 1331-ի համեմատ, ըստ հանցատեսակների, ունեն հետևյալ պատկերը.

- Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 516-524 հոդվածներ)՝ 351 (2024 թվականին՝ 317. աճ՝ 34-ով կամ 10,7%-ով),
- Զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 525-531 հոդվածներ)՝ 211 (2024 թվականին՝ 218. նվազում՝ 7-ով կամ 3,2%-ով),
- Ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 532-537 հոդվածներ)՝ 25 (2024 թվականին՝ 17. աճ՝ 8-ով կամ 47%-ով),
- Ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 538-539 հոդվածներ)՝ 37 (2024 թվականին՝ 51. նվազում՝ 14-ով կամ 27,4%-ով),

- Հատուկ ծառայությունների կրման և հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 540-548 հոդվածներ)՝ 6 (2024 թվականին՝ 7. նվազում՝ 1-ով կամ 14,3%-ով),
- Զինվորական պաշտոնեական հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 549-550 հոդվածներ)՝ 57 (2024 թվականին՝ 105. նվազում՝ 48-ով կամ 45,7%-ով):

Այսպիսով՝ արձանագրվել է զինվորական հանցագործությունների 687 դեպք՝ նախորդ տարվա 715-ի դիմաց. 2025 թվականին զինվորական հանցագործությունների դեպքերը նվազել են 28-ով:

Այլ հանցագործությունների վիճակագրությունը, ըստ հանցատեսակների, 2024 թվականի համեմատությամբ, հետևյալն է.

- Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 155-187 հոդվածներ)՝ 18 (2024 թվականին՝ 39. նվազում՝ 21-ով կամ 53,8%-ով),
- Անձի ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 188-197 հոդվածներ)՝ 34 (2024 թվականին՝ 66. նվազում՝ 32-ով կամ 48,5%-ով),
- Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 198-202 հոդվածներ)՝ 6 (2024 թվականին՝ 8. նվազում՝ 2-ով կամ 25%-ով),
- Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 252-266 հոդվածներ)՝ 79 (2024 թվականին՝ 150. նվազում՝ 71-ով կամ 47,3%-ով),
- Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 297-307 հոդվածներ)՝ 11 (2024 թվականին՝ 9. աճ՝ 2-ով կամ 22,2%-ով),
- Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 308-392 հոդվածներ)՝ 235 (2024 թվականին՝ 164. աճ՝ 71-ով կամ 43,3%-ով),
- Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 393-406 հոդվածներ)՝ 93 (2024 թվականին՝ 135. նվազում՝ 42-ով կամ 31,1%-ով),
- Այլ հանցակազմեր՝ 58 (2024 թվականին՝ 45. աճ՝ 13-ով կամ 28,9%-ով):

2025 թվականի ընթացքում արձանագրված 1221 հանցագործություններից 100-ով կամ 8,2%-ով հնարավոր չի եղել պարզել քրեական պատասխանատվության ենթակա անձին: Այլ խոսքով՝ հանցագործությունների բացահայտումը կազմել է 91,8% (2024 թվականին՝ 93,6%): Դրանցից 561-ը կատարվել են ժամկետային զինծառայողների, 440-ը՝ պայմանագրային զինծառայողների, մնացածն այլ զինծառայողների (անձանց) կողմից: Հանցանք կատարած զինծառայողներից 123-ը եղել են սպաներ:

2025 թվականին հանցագործություն կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմել է 10,6% (2024 թվականին՝ 15,2%), ենթասպաներինը՝ 2,4% (2024 թվականին՝ 2,2%), պայմանագրային զինծառայողներինը՝ 38% (2024 թվականին՝ 30,8%), ժամկետային զինծառայողներինը՝ 48,5% (2024 թվականին՝ 52%):



2025 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի հատկանիշներ պարունակող (պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը) հանցագործություններ է կատարել 1164 անձ (2024 թվականին՝ 1463). նվազում է գրանցվել 299-ով կամ 20,4%-ով:

Կատարված վերլուծություններով պարզվել է նաև, որ 2025 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի հատկանիշներ պարունակող (վարժական հավաքից խուսափելը) հանցագործություններ է կատարել 532 անձ (2024 թվականին՝ 303). աճ է արձանագրվել 229-ով կամ 75,6%-ով:

2025 թվականի ընթացքում քննվել է կոռուպցիոն բնույթի 200 քրեական վարույթ (2024 թվականին՝ 214): 36 քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է (2024 թվականին՝ 58): Դրանցից 24-ով՝ վարույթները կարճվել են (2024 թվականին՝ 50), որոնցից 21-ով վարույթները կարճվել են ռեաբիլիտացնող

(2024 թվականին՝ 34), 3-ով՝ ոչ ռեաբիլիտացնող (2024 թվականին՝ 16) հիմքերով: 12 քրեական վարույթ 24 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024 թվականին՝ 8 քրեական վարույթ՝ 12 անձի վերաբերյալ):

2025 թվականի ընթացքում ավարտված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով վնասը կազմել է 175.027.409 դրամ (2024 թվականին՝ 35.776.402 դրամ), որից մինչդատական վարույթում վերականգնվել է 18.871.435 դրամը (2024 թվականին՝ 3.169.620 դրամ):

Հաշվետու տարում 3818 քրեական վարույթների նախաքննությունն ավարտվել է (2024 թվականին՝ 3523): Ավարտված քրեական վարույթներից 943-ը՝ 1070 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024 թվականին՝ 904-ը՝ 1026 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, 1 քրեական վարույթ 1 անձի նկատմամբ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու վերաբերյալ եզրափակիչ ակտով):

2875 քրեական վարույթ կարճվել է (2024 թվականին՝ 2618), որից 2072-ը՝ ռեաբիլիտացնող հիմքով (2024 թվականին՝ 1398), 803-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024 թվականին՝ 1220):

2025 թվականի ընթացքում վերացվել է քրեական վարույթը կարճելու մասին 41 (2024 թվականին՝ 38) որոշում, որոնցից 28-ը՝ ՀՀ զինվորական դատախազի և տեղակալների կողմից: Կարճումը վերացված վարույթներից 6-ն ուղարկվել է դատարան:

2025 թվականի ընթացքում վերացվել է քրեական հետապնդում չհարուցելու 5 որոշում (2024 թվականին՝ 5) և քրեական հետապնդումը դադարեցնելու 2 որոշում (2024 թվականին՝ 1):

2025 թվականի ընթացքում հսկող դատախազները ստացել են անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին քննիչի 1617 միջնորդություն (2024 թվականին՝ 1582), քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 863 միջնորդություն (2024 թվականին՝ 939), քրեական հետապնդում չհարուցելու մասին 2624 միջնորդություն (2024 թվականին՝ 3416), հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին 1963 միջնորդություն (2024 թվականին՝ 2042)՝ ընդհանուր 7067 միջնորդություն (2024 թվականին՝ 7979), որից 6817-ը բավարարվել է (2024 թվականին՝ 7716), մասնակի բավարարված

միջնորդություններ չեն եղել (2024 թվականին՝ 1), իսկ 250-ը՝ մերժվել (2024 թվականին՝ 262):

Հսկող դատախազների նախաձեռնությամբ 596 անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդում հարուցելու մասին (2024 թվականին՝ 743), 529 անձի նկատմամբ՝ քրեական հետապնդում չհարուցելու մասին (2024 թվականին՝ 511) և 98 անձի նկատմամբ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին (2024 թվականին՝ 133) որոշում:

2025 թվականի ընթացքում կալանաքը, որպես խափանման միջոց կիրառելու 795 միջնորդություն է ներկայացվել դատարան (2024 թվականին՝ 1020): Դրանցից 740-ը՝ բավարարվել է (2024 թվականին՝ 976), որից 721-ը՝ լրիվ (2024 թվականին՝ 969), 19-ը՝ մասնակի (2024 թվականին՝ 7), իսկ 55-ը՝ մերժվել (2024 թվականին՝ 44): Մերժման որոշումներից 47-ի դեմ դատախազների կողմից բերվել է վերաքննիչ բողոք (2024 թվականին՝ 14), որոնցից 31-ը՝ մերժվել է (2024 թվականին՝ 4), 9-ը՝ բավարարվել (2024 թվականին՝ 1), 7-ի քննությունն ընթացքի մեջ է (2024 թվականին՝ 8):

Հաշվետու ժամանակահատվածում դատախազների կողմից 114 միջնորդագրեր (2024 թվականին՝ 87) և 89 հաղորդումներ (2024 թվականին՝ 38) են ուղարկվել պատկան մարմիններին ու կազմակերպություններին:

Միջնորդագրերից 7-ն ուղարկվել են ՀՀ զինվորական դատախազի, 1-ը՝ զինվորական դատախազի տեղակալի կողմից:

Միջնորդագրերի հիման վրա՝ իրականացվել են ծառայողական քննություններ, կարգապահական խախտումներ թույլ տված լինելու դեպքերում զինծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև իրականացվել են միջնորդագրերից բխող այլ միջոցառումներ:

2025 թվականի ընթացքում քննված քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասի չափը կազմել է 411.728.063 դրամ (2024 թվականին՝ 1.479.117.389 դրամ), որից մինչդատական վարույթում վերականգնվել է 108.712.388 դրամը (2024 թվականին՝ 51.935.493 դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 943 քրեական վարույթ՝ 1070 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 905 վարույթ՝ 1027 անձի վերաբերյալ, այդ թվում՝ եզրափակիչ ակտով՝ 1 քրեական վարույթ՝ 1 անձի վերաբերյալ):

2024 թվականից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ՝ ընդհանուր առմամբ 856 քրեական գործ՝ 951 անձի վերաբերյալ, քննվել և ավարտվել է դատարանում (2024 թվականին՝ 937 գործ՝ 1089 անձի վերաբերյալ), որոնցից 708 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է մեղադրական դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 785 անձ (2024 թվականին՝ 751 գործ՝ 842 անձ):



Դատարանների որոշումներով 102 քրեական գործ՝ 113 անձի վերաբերյալ, կարճվել է (2024 թվականին՝ 162 գործ՝ 219 անձի վերաբերյալ):

43 քրեական գործով՝ 49 անձի վերաբերյալ, կայացվել են արդարացման դատավճիռներ (2024 թվականին՝ 24 գործով 28 անձի վերաբերյալ): 1 քրեական գործով 1 անձ արդարացվել է մեղադրողի միջնորդությամբ (2024 թվականին՝ 4 գործով 4 անձի վերաբերյալ): Եվս 3 գործով 4 անձ արդարացվել է մասնակի:

2025 թվականի ընթացքում Զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է 152 խախտում (2024 թվականին՝ 118):

Պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով՝ պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ դատախազների կողմից տրվել է 50 նախազգուշացում (2024 թվականին՝ 43), ներկայացվել է 38 միջնորդագիր (2024 թվականին՝ 32):

2025 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է պետությանը պատճառված 1.432.493.526 դրամի վնաս (2024 թվականին՝ 5.677.550.703 դրամ):

Դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ՝

վերականգնվել է պետությանը պատճառված 938.080.961 դրամի վնասը (2024 թվականին՝ 4.462.706.271 դրամ):

2024 թվականին կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված վնասներից, 2025 թվականի ընթացքում դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերականգնվել է 92.213.499 դրամը (2024 թվականին՝ 44.408.105 դրամ):

2025 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով՝ նախաձեռնվել է **42 քրեական վարույթ** (2024 թվականին՝ 31 քրեական վարույթ):

2025 թվականին պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցվել է 24 հայց (2024 թվականին՝ 19), որոնցից 4-ը քաղաքացիական դատավարության կարգով, իսկ 20-ը՝ քրեական դատավարության կարգով (գույքային հայց)՝ 4.564.117.886 դրամ բռնագանձելու ընդհանուր պահանջով (2024 թվականին՝ 134.275.731 դրամ):

Պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցված հայցեր



Հայցերից 5-ը բավարարվել են ամբողջությամբ, 19-ի քննությունը դեռևս չի ավարտվել:

Ամբողջությամբ բավարարված 5 գույքային հայցերով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարի չափը կազմում է 11.466.397 դրամ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒՄ 2025

5

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Ըստ Ներքին գործերի նախարարության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնից ստացված տվյալների՝ 2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է կոռուպցիոն հանցագործության 996 դեպք (2024 թվականին՝ 1116): Նախորդ տարվա համեմատությամբ՝ հանցագործության դեպքերը նվազել են 120-ով կամ 10,8%-ով:



Կոռուպցիոն հանցագործությունների թվի նվազումը հիմնականում պայմանավորվել է կաշառք տալու (2025 թվականին՝ 100 դեպք, 2024 թվականին՝ 153), կաշառք ստանալու (2025 թվականին՝ 114 դեպք, 2024 թվականին՝ 245), պաշտոնեական կեղծիքի (2025 թվականին՝ 85 դեպք, 2024 թվականին՝ 99), իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով վստահված գույքը հափշտակելու (2025 թվականին՝ 64 դեպք, 2024 թվականին՝ 79), պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալու (2025 թվականին՝ 3 դեպք, 2024 թվականին՝ 17) դեպքերի նվազմամբ:



Հաշվետու ժամանակահատվածում աճել են իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով խարդախության (2025 թվականին՝ 41 դեպք, 2024 թվականին՝ 26), մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու (2025 թվականին՝ 49 դեպք, 2024 թվականին՝ 38), իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով փողերի լվացման (2025 թվականին՝ 46 դեպք, 2024 թվականին՝ 15), պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու (2025 թվականին՝ 389 դեպք, 2024 թվականին՝ 364), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու կամ հայտարարագիր չներկայացնելու (2025 թվականին՝ 22 դեպք, 2024 թվականին՝ 13) դեպքերը:

Հայաստանի Հանրապետությունում երկրորդ տարին անընդմեջ գրանցվում է կոռուպցիոն հանցագործությունների թվի նվազում (2023 թվական՝ 1368, 2024 թվական՝ 1116, 2025 թվական՝ 996):

2025 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ստացվել է 2127 հաղորդում (2024 թվականին՝ 2297), որոնցից 1118-ով նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 2024 թվականի 1175-ի դիմաց, իսկ 1009-ով վարույթ չի նախաձեռնվել[1]:

2025 թվականի ընթացքում նախաքննական մարմինների կողմից քննվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 3024 քրեական վարույթ (2024 թվականին՝ 3526): 2024 թվականի համեմատությամբ՝ քննված քրեական վարույթների թիվը նվազել է 502-ով կամ 14,2%-ով:

2025 թվականի ընթացքում նախաքննական մարմինների վարույթում քննված 3024 քրեական վարույթից ավարտվել է 980-ը (2024 թվականին՝ 1097), որոնցից 669-ը կարճվել է (2024 թվականին՝ 880), այդ թվում՝ 489-ը՝ արդարացման (2024 թվականին՝ 473), իսկ 180-ը՝ ոչ արդարացման հիմքերով (2024 թվականին՝ 407): 311 քրեական վարույթ՝ 772 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 217 քրեական վարույթ՝ 493 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 411 քրեական վարույթ միացվել է այլ քրեական վարույթների, իսկ անավարտ է մնացել 1329 քրեական վարույթ:



1. Նախաքննության վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են ըստ «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության ձևի և նախաքննական մարմինների կողմից տրամադրված վիճակագրական տվյալների համադրման:

Ըստ կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների՝ հաշվետու տարում քննված քրեական վարույթների շարժը ներկայացվում է ստորև.[2]

Քրեական օրենսգրքի հոդվածը	Ստացված հաղորդումների թիվը	Նախաձեռնված վարույթների թիվը	Քննված վարույթների թիվը	Կարճված վարույթների թիվը	Մեղադրական եզրակացությամբ իրավասու դատարան հանձնված գործերի թիվը (գործ/անձ, որից կալանքի տակ գտնվող)	Անավարտ մնացած վարույթների թիվը (որոնցով կալանքի տակ գտնվող անձանց թիվը)	Մեղադրական դատավճիռների թիվը (գործ/մարդ)
218-220-րդ հոդվածներ	6	6	19	2	2/5	14	4/9
221-րդ հոդված	8	8	9	2	3/5	2	-
231-րդ հոդված	-	-	1	-	-	1	-
255-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս	67	67	163	20	15/23 3 անձ գտնվել է կալանքի տակ	78 1 անձ գտնվել է կալանքի տակ	4/7
256-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս	164	164	485	150	46/122 3 անձ գտնվել է կալանքի տակ	210 4 անձ գտնվել է կալանքի տակ	16/25
258-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ կետ և 3-րդ մաս	2	2	5	1	-	2	-
272-րդ և 273-րդ հոդվածներ	15	15	36	7	8/23	10	1/1
276-րդ հոդված	6	6	13	7	1/1	2	-
277-րդ հոդված (չարաշահելը)	54	52	174	40	4/5	73	-
282-րդ հոդվածի 2-րդ մաս 1-ին կետ և 3-րդ մաս	1	1	1	-	-	-	-
284-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս	3	3	6	-	-	4	-
296-րդ հոդվածի 3-րդ մաս, 2-րդ կետ	35	33	95	1	26/73 5 անձ գտնվել է կալանքի տակ	42 14 անձ գտնվել է կալանքի տակ	2/4
435-րդ հոդված	134	132	400	52	64/241 51 անձ գտնվել է կալանքի տակ	219 3 անձ գտնվել է կալանքի տակ	23/30
436-րդ հոդված	45	45	109	10	44/89 1 անձ գտնվել է կալանքի տակ	32	24/62
437-րդ հոդված	-	-	2	-	-	2	-
438-րդ հոդված	2	2	10	1	3/10	3	1/6
439-րդ հոդված	-	-	1	-	1/2	-	2/4
440-րդ հոդված	11	11	22	1	6/8 1 անձ գտնվել է կալանքի տակ	6	3/4
441-րդ հոդված	397	372	932	208	52/110 2 անձ գտնվել է կալանքի տակ	427 1 անձ գտնվել է կալանքի տակ	10/19
442-րդ հոդված	3	3	7	1	-	4	-
443-րդ հոդված	7	7	13	1	-	8	-
444-րդ հոդված	30	30	57	13	11/12 1 անձ գտնվել է կալանքի տակ	25	5/5
445-րդ հոդված	125	118	290	100	18/35	101	11/15
477-րդ հոդված	-	-	3	1	-	2	-
481-րդ հոդված	-	-	1	1	-	-	-
482-րդ հոդված	2	2	4	-	-	1	-
486-րդ հոդված 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս	-	-	5	2	-	2	-
496-րդ հոդված	1	1	3	-	1/1	1	-
497-րդ հոդված	-	-	1	-	-	1	-
549-րդ հոդված	38	38	157	48	6/7	57	1/2

2. Աղյուսակում ներկայացված են միայն այն կոռուպցիոն հանցագործությունները, որոնցով հաշվետու ժամանակահատվածում ստացվել են հաղորդումներ, նախաձեռնվել են քրեական վարույթներ, քննվել են քրեական վարույթներ կամ մեղադրական եզրակացությամբ հանձնվել են իրավասու դատարան: Քրեական օրենսգրքի 221.1-րդ հոդվածով, 232-րդ հոդվածով, 268-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 269-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 274-րդ հոդվածով, 275-րդ հոդվածով և 480-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով հաշվետու ժամանակահատվածում դեպքեր չեն արձանագրվել:

Ընդ որում, աղյուսակում ստացված հաղորդումների թվի հանրագումարը (1156) չի համապատասխանում 2025 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումների՝ սույն հաղորդման մեջ նշված թվին (2127), քանի որ 971 հաղորդումների դեպքում հնարավոր չի եղել տալ կոռուպցիոն որևէ հանցանքին համապատասխանության նախնական իրավական գնահատական:

2025 թվականին վերացվել է կոռուպցիոն բնույթի՝

- քրեական վարույթը կարճելու մասին 68 որոշում, որոնցից 1-ը կամ 1,5%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից (2024 թվականին՝ 48 որոշում, որոնցից 3-ը կամ 6,3%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից),
- քրեական հետապնդում չհարուցելու մասին 2 որոշում (2024 թվականին՝ 7 որոշում),
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2 որոշում, որոնցից 1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից (2024 թվականին՝ 4 որոշում):



Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով՝ վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 40 բողոք (2024 թվականին՝ 60), որոնցից բավարարվել է 2-ը (2024 թվականին՝ 5) կամ 5%-ը (2024 թվականին՝ 8,3%): Քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումների դեմ բերվել է 14 բողոք (2024 թվականին՝ 7): Նշված բողոքները մերժվել են: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 10 բողոք (2024 թվականին՝ 13), որոնցից 2-ը բավարարվել է (2024 թվականին՝ 3):

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով դատախազների կողմից տրվել է 131 հանձնարարություն (2024 թվականին՝ 168), Քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 27 միջնորդագիր (2024 թվականին՝ 17):

Լրացուցիչ քննության է վերադարձվել 12 քրեական վարույթ՝ 2024 թվականի 9-ի դիմաց. լրացուցիչ քննության վերադարձված քրեական վարույթների թիվը նվազել է 3-ով կամ 33,3%-ով:

2025 թվականին կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 2 միջնորդություն:

2025 թվականի ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 157 քրեական գործ (2024 թվականին՝ 163)՝ 282 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 362): Նշված քրեական գործերից 107-ով (2024 թվականին՝ 126) 193 անձ դատապարտվել է (2024 թվականին՝ 272), որոնցից 27 անձ (2024 թվականին՝ 37)՝ ազատազրկման, 27 անձ (2024 թվականին՝ 46)՝ տուգանքի, 9 անձ (2024 թվականին՝ 4)՝ հիմնական այլ պատժի, 133 անձի (2024 թվականին՝ 185) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 13 անձի (2024 թվականին՝ 17) նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 32 գործով 55 անձ արդարացվել է (2024 թվականին՝ 11 գործով 17 անձ):

Դատարաններում քննված և ավարտված կոռուպցիոն բնույթի քրեական գործեր





Դատարանում կարճվել է 18 գործ 34 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 26 գործ 73 անձի վերաբերյալ): 2025 թվականին կարճված 18 գործով անցնող 34 անձից 1-ի (2024 թվականին՝ 1) վերաբերյալ գործը կարճվել է համաներման ակտի կիրառմամբ, 28-ի (2024 թվականին՝ 41) վերաբերյալ՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, իսկ 5-ի (2024 թվականին՝ 31) վերաբերյալ՝ այլ հիմքերով:

Դատախազությունում 2025 թվականի ընթացքում ներքին ազդարարման դեպքեր չեն գրանցվել: Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով 2025 թվականին ստացվել է 600 (2024 թվականին՝ 380) հաղորդում, որից 508-ը՝ անանուն, 92-ը՝ տվյալներով: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգման է ուղարկվել 352 (2024 թվականին՝ 237) հաղորդում, հիշյալ հաղորդումների ստուգման արդյունքներով նախաձեռնվել է 26 քրեական վարույթ (2024 թվականին՝ 21):



Հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթներով կոռուպցիոն հանցագործություններ կատարելու համար դատի են տրվել 298 (2024 թվականին՝ 173) նախկին և գործող պաշտոնատար անձ, ովքեր ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների հանդիսացել են՝



- ՀՀ պաշտոնաթող նախագահ՝ 1 (նույն անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել երկու տարբեր քրեական վարույթների շրջանակներում),
- ՀՀ պաշտոնաթող վարչապետ՝ 1,
- Ազգային ժողովի պատգամավոր՝ 1,
- ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետ՝ 1,
- Դատական իշխանության աշխատակից՝ 5, այդ թվում՝
  - դատավոր - 2,
  - դատավորի օգնական - 2,
  - աշխատակից – 1,
- Պաշտպանության նախարարության աշխատակից՝ 47, այդ թվում՝
  - զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ - 1,
  - զորամասի հրամանատար - 2,
  - զորամասի հրամանատարի տեղակալ - 6,
  - գումարտակի հրամանատար - 1,
  - գումարտակի հրամանատարի տեղակալ - 2,
  - վաշտի հրամանատար - 1,
  - դասակի հրամանատար - 2,
  - ջոկի հրամանատար - 1,
  - ծառայության պետ - 5,
  - զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության աշխատակից - 5,
  - բաժնի պետ - 2,
  - ՌՈ բաժնի պետի տեղակալ – 1,
  - բաժանմունքի պետ - 2,
  - աշխատակից - 16,
- Արդարադատության նախարարության աշխատակից՝ 6, այդ թվում՝
  - ՀԿԱԾ հարկադիր կատարող - 1,
  - ՀԿԱԾ աշխատակից - 1,
  - ՔԿՀ պետի տեղակալ – 1,
  - ՔԿՀ աշխատակից – 3,
- ՆԳՆ ոստիկանության աշխատակից՝ 66, այդ թվում՝
  - ոստիկանության պետի տեղակալ – 1,
  - բաժնի պետ - 3,
  - բաժնի պետի տեղակալ - 2,
  - գումարտակի հրամանատար - 1,
  - վաշտի հրամանատար - 1,
  - դասակի հրամանատար - 2,
  - տեսուչ - 9,
  - ԱՎՎ աշխատակից - 2,
  - ոստիկան - 6,
  - օպերլիազոր – 2,
  - պարեկ - 26,
  - աշխատակից – 11,
- Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի աշխատակից՝ 2, այդ թվում՝
  - բաժանմունքի պետ - 1,
  - աշխատակից - 1,
- Շրջակա միջավայրի նախարարության աշխատակից՝ 14, այդ թվում՝
- էկոպարեկ - 6,
- աշխատակից - 1,
- «Հայանտառ» ՊՈԱԿ տնօրեն – 1,
- «Հայանտառ» ՊՈԱԿ աշխատակից – 6,
- Էկոնոմիկայի նախարարության աշխատակից՝ 1,

- Առողջապահության նախարարության աշխատակից՝ 4,
- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակից՝ 1,
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակից՝ 5,
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակից՝ 5, այդ թվում՝
  - բաժնի պետ - 2,
  - սոցիալական աշխատող - 3,
- ՔԿ պաշտոնատար անձինք ՝ 7, այդ թվում՝
  - վարչության պետ – 1,
  - վարչության պետի տեղակալ – 2,
  - քննիչ - 3,
  - աշխատակից - 1,
- ՊԵԿ աշխատակից ՝ 17, այդ թվում՝
  - բաժնի պետի տեղակալ - 2,
  - տեսուչ - 11,
  - օպերլիազոր - 2,
  - աշխատակից - 2,
- Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչ՝ 1,
- ԲՏԱ ռազմաարդյունաբերական կոմիտեի նախագահ՝ 1,
- Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի աշխատակից՝ 6, այդ թվում՝
  - ղեկավար – 1,
  - տեսուչ – 4,
  - աշխատակից - 1,
- Կադաստրի կոմիտեի աշխատակից ՝ 6, այդ թվում՝
  - բաժնի պետ – 1,
  - ստորաբաժանման ղեկավարի տեղակալ – 1,
  - աշխատակից - 4,
- Ջրային կոմիտեի աշխատակից՝ 3,
- ՀՀ նախկին վարչապետի անվտանգության աշխատակից՝ 1,
- Քաղաքապետարանի աշխատակից՝ 32, այդ թվում՝
  - քաղաքապետ - 3,
  - քաղաքապետի տեղակալ - 1,
  - վարչական շրջանի ղեկավար – 3,
  - վարչական շրջանի ղեկավարի տեղակալ – 1,
  - վարչության պետ - 3,
  - վարչության պետի տեղակալ - 1,
  - բաժնի պետ – 3,
  - ՀՈԱԿ տնօրեն – 1,
  - ծառայության պետ – 1,
  - աշխատակից - 15,
- Մարզպետարանի աշխատակից՝ 9, այդ թվում՝
  - ՊՈԱԿ տնօրեն - 8,
  - ՊՈԱԿ տնօրենի տեղակալ - 1,
- Համայնքապետարանի աշխատակից՝ 53, այդ թվում՝
  - համայնքի ղեկավար - 28,
  - համայնքի ղեկավարի տեղակալ - 3,
  - բնակավայրի ղեկավար – 9,
  - բաժնի պետ - 7,
  - բաժնի պետի տեղակալ - 1,
  - աշխատակից – 5,
- Երևանի Մ. Հերացու անվան թիվ 1 հիվանդանոցային համալիրի ակնաբուժական կլինիկայի աշխատակից՝ 1:

2025 թվականի ընթացքում դատարան հանձնված վարույթների թվում են նաև բազմադրվագ, հանրային հետաքրքրություն ունեցող հետևյալ վարույթները՝

❑ ՀՀ նախկին վարչապետի և այլ պաշտոններ զբաղեցրած Հ.Ա.-ի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքերն օրինականացնելու, այդ թվում՝

- պաշտոնեական լիազորություններն անցնելով ավազի արդյունահանմամբ զբաղվող առևտրային կազմակերպության բաժնեմասն իրեն փոխկապակցված անձանց փոխանցելու,
- ավազի արդյունահանման ոլորտում առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների գործունեությանը մասնակցելու,
- իր կողմից հովանավորվող առևտրային գործունեության ընթացքում թույլ տրված խախտումների կապակցությամբ միջոցներ չձեռնարկելու և ծանր հետևանքներ առաջացնելու,
- վերագրվող հանցավոր արարքների կատարման արդյունքում առաջացած ֆինանսական միջոցները շարժական ու անշարժ գույքի փոխակերպելու միջոցով օրինականացնելու վերաբերյալ վարույթը:

❑ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի ղեկավարի, Երևանի քաղաքապետի և այլ պաշտոններ զբաղեցրած Գ.Բ.-ի կողմից պաշտոնեական լիազորությունների չարաշահմամբ, վերջինիս դրդմամբ այլ պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորությունների չարաշահմամբ Երևան քաղաքի Կենտրոն, իսկ հետագայում նաև Երևան համայնքին պատկանող շուրջ 2 միլիարդ 327 միլիոն 584 հազար դրամ արժեք ունեցող 25 անշարժ գույք ձեռք բերելու, 2 անշարժ գույքն իր հետ փոխկապակցված անձին փոխանցելու, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքերը, այլ անձանց օժանդակությամբ, օրինականացնելու վերաբերյալ քրեական վարույթը:

❑ Զինված ուժերում բարձր պաշտոններ զբաղեցրած Հ.Բ.-ի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու, արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներն օրինականացնելու, ներկայացված հայտարարագրերում գույքերի և եկամուտների վերաբերյալ տվյալները թաքցնելու, առանձնապես խոշոր չափերով գույքերը և եկամուտները չհայտարարագրելու վերաբերյալ քրեական վարույթը:

❑ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորի կողմից կաշառք տվողի օգտին, իր իշխանական և ծառայողական լիազորություններն օգտագործելով, ապօրինի գործողություններ կատարելու և անգործություն դրսևորելու համար խոշոր չափերով կաշառք պահանջելու վերաբերյալ վարույթը:

❑ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից իշխանական և ծառայողական լիազորությունները չարաշահելու, ծանր հետևանքներ առաջացնելու և ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու վերաբերյալ վարույթը:

❑ 2008-2015 թվականների ընթացքում Աբովյանի քաղաքապետի պաշտոնը զբաղեցրած Կ.Գ.-ի կողմից, իր լիազորությունները չարաշահելով Աբովյանի քաղաքապետարանի այլ պաշտոնատար անձանց կամ այլ քաղաքացիների օժանդակությամբ, ընդհանուր՝ 65 դրվագով Աբովյան համայնքի զբոսայգիների, պուրակների և փողոցների տարածքներում գտնվող հողերն ուղղակի վաճառքով կամ կեղծ աճուրդների միջոցով տարբեր անձանց օտարելու (այդ թվում՝ 2 դեպքով, պաշտոնեական դիրքն օգտագործելով, իր հետ փոխկապակցված անձանց հետ նախնական համաձայնությամբ, հանցավոր գործունեության հետևանքով ստացված, առանձնապես խոշոր չափերով գույքը օրինականացնելու) վերաբերյալ վարույթը:

❑ Ազգային ժողովի պատգամավոր Հ.Ա.-ի կողմից իր իշխանական լիազորությունները և դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով գործողություն կատարելու դիմաց առանձնապես խոշոր չափերով կաշառք պահանջելու և ստանալու, այլ պաշտոնատար անձի նկատմամբ իր ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար առանձնապես խոշոր չափերով գումար պահանջելու վերաբերյալ վարույթը:

❑ Գյումրի համայնքի ղեկավար Վ.Ղ.-ի կողմից ապօրինի գործողության համար խոշոր չափերով կաշառք պահանջելու, մի խումբ պաշտոնատար անձանց հետ նախնական համաձայնությամբ պաշտոնական կեղծիք կատարելու վերաբերյալ վարույթը:

❑ Աբովյան համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Վ.Գ.-ի կողմից իշխանական և ծառայողական լիազորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելու, պաշտոնեական կեղծիք կատարելու, համայնքին պատկանող առանձնապես խոշոր չափերով գույքն ապօրինի ձեռք բերելու և օրինականացնելու վերաբերյալ վարույթը:

❑ Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Դ.Գ.-ի կողմից, իր հետ փոխկապակցված անձանց օժանդակությամբ, իր իշխանական և ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու, լիազորություններն անցնելու, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, իշխանական և ծառայողական լիազորություններն օգտագործելով, առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման վերաբերյալ վարույթը:

Հաշվետու ժամանակահատվածում կայացված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած, մի շարք կոռուպցիոն գործերով դատավճիռների մասին տվյալները ներկայացվում են ստորև.

2020 թվականի հունիսի 1-ին ՀՀ ոստիկանության նախկին պետ Վ.Գ.-ին մեղադրանք էր առաջադրվել նախկին Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով վատնում) (երկու դրվագ) և 308-րդ հոդվածի 2-րդ մասով (ծանրացուցիչ հանգամանքներում պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) նախատեսված արարքներ կատարելու համար (երկու դրվագ): 2020 թվականի հունիսի 24-ին դատախազը քրեական գործից անջատված մասը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնել էր Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Դատախազը նաև քաղաքացիական հայց էր հարուցել ամբաստանյալներ՝ ՀՀ ոստիկանության նախկին պետ Վ.Գ.-ի, ՀՀ ոստիկանության պետի նախկին տեղակալ Լ.Ե.-ի, Ոստիկանության ներքին աուդիտի վարչության նախկին պետ Վ.Թ.-ի և Ոստիկանության զորքերի զորամասի նախկին հրամանատար Գ.Գ.-ի դեմ՝ հայցելով՝

- ամբաստանյալ Վ.Գ.-ից՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 35 միլիոն 200 հազար դրամ,
- ամբաստանյալ Վ.Թ.-ից՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 6 միլիոն 513 հազար դրամ,
- ամբաստանյալ Լ.Ե.-ից, Վ.Թ.-ից և Գ.Գ.-ից՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության համապարտորեն բռնագանձել 7 միլիոն 954 հազար դրամ:

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հուլիսի 9-ի դատավճռով՝ **Վ. Գ.-ին մեղավոր է ճանաչել նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ (երկու դրվագ) և ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Վ.Գ.-ն մեղավոր է ճանաչվել նաև Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (երկու դրվագ) և նրա նկատմամբ, որպես պատիժ է նշանակվել յուրաքանչյուր դրվագի համար ազատազրկում՝ 5 տարի ժամկետով: Վ.Գ.-ի նկատմամբ՝ յուրաքանչյուր դրվագով ազատազրկման ձևով նշանակված հիմնական պատիժները մասնակի գումարելու միջոցով վերջնական հիմնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 տարի ժամկետով: 2018 թվականի նոյեմբերի 6-ին ուժի մեջ մտած՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի կիրառմամբ՝ Վ.Գ.-ն ազատվել է ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելուց:**

Ամբաստանյալներ Լ.Ե.-ն, Վ.Թ.-ն և Գ.Գ.-ն ևս մեղավոր են ճանաչվել, ազատվել են քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցնելու

հիմքով և, այդ թվում՝ համաներում կիրառելու արդյունքում, ազատվել են ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելուց:

Դատախազության կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակի:

2024 թվականի օգոստոսի 16-ին դատախազը վերաքննիչ բողոք է ներկայացրել:

2025 թվականի մայիսի 27-ին Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 9-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու և բեկանված մասով նոր դատական ակտ կայացնելու մասին: Մասնավորապես՝ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատական ակտով Վ.Թ.-ն մեկ դրվագով արդարացվել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Վ.Գ.-ից ՀՀ պետական բյուջե, որպես հանցագործություններով պատճառված վնասի հատուցում, 35 միլիոն դրամ բռնագանձելու մասին դատախազի պահանջը բավարարվել է:

Միաժամանակ, Հակակոռուպցիոն դատարանի կողմից բավարարված՝ Լ.Ե.-ի, Վ.Թ.-ի և Գ.Գ.-ի դեմ ներկայացված 7 միլիոն 954 հազար դրամի քաղաքացիական հայցը թողնվել է առանց լուծման, իսկ Վ.Թ.-ի դեմ 6 միլիոն դրամի հայցը բավարարվել է մասնակի: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ:

- 2025 թվականի սեպտեմբերի 30-ին **Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանն անփոփոխ է թողել ՀՀ արդարադատության նախկին նախարար Հ.Թ.-ի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը՝ մեղավոր ճանաչելով նրան նախկին Քրեական 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ**: Մեղսագրված արարքները վերաբերել են Հ.Թ.-ի կողմից ՀՀ արդարադատության նախարար աշխատած ժամանակահատվածում պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն: Մասնավորապես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 20-ի դատավճռով մեղավոր էր ճանաչել Հ.Թ.-ին՝ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ (երկու դրվագ) և նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետները 2019 թվականին անցած լինելու պատճառաբանությամբ:

Դատավճռի դեմ՝ արարքների վերաորակման և վաղեմության ժամկետի կիրառման մասով, դատախազի կողմից ներկայացվել էր վերաքննիչ բողոք, իսկ պաշտպանների կողմից ներկայացվել էին

բողոքներ՝ խնդրելով ճանաչել նրա անմեղությունը:

Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 30-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու և դատավճիռն անփոփոխ թողնելու մասին:

Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավճիռը 2026 թվականի փետրվարի 12-ին մտել է օրինական ուժի մեջ:

- Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 26-ի դատավճռով՝ **Սիսիան համայնքի նախկին ղեկավար, ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ա.Ս.-ն մեղավոր է ճանաչվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու մեջ** նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով: Ա.Ս.-ի հետ հանցակցությամբ նույնաբնույթ արարքներ կատարած 6 անձինք (այդ թվում՝ պաշտոնատար) ևս մեղավոր են ճանաչվել:

Ա.Ս.-ին մեղադրանք էր ներկայացվել Սիսիանի համայնքապետարանի միջոցներով համայնքի կարիքների համար իրականացված գնման գործընթացում, այլ անձանց հետ հանցակցությամբ, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու համար, որի արդյունքում Սիսիան համայնքին պատճառվել էր 3 միլիոն 631 հազար դրամի գույքային վնաս:

Վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով Ա.Ս.-ն ազատվել է քրեական պատասխանատվությունից:

- Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել է, որ Արարատի մարզի համայնքներից մեկի բնակիչ Կ.Խ.-ն 2021 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, այցելել է նույն համայնքի բնակիչ Ա.Վ.-ի բնակարան և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի օգտին յուրաքանչյուր քվեի դիմաց՝ որպես ընտրակաշառք, առաջարկել 30 հազար դրամ: Քաղաքացին մերժել էր առաջարկը: Բացի այդ, Կ.Խ.-ն ընտրակաշառք էր առաջարկել նաև Ա.Վ.-ի երկու դուստրերին: Նրանցից մեկը համաձայնվել էր առաջարկին և ստացել 30 հազար դրամի չափով ընտրակաշառք:

Կ.Խ.-ի գտնվելու վայրը պարզ չլինելու և քննությունից թաքնվելու հիմքերով՝ նրա նկատմամբ 2021 թվականի հուլիսի 1-ին հայտարարվել էր հետախուզում, իսկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց էր ընտրվել կալանավորումը:

2024 թվականի մարտի 5-ին Կ.Խ.-ն ներկայացել էր Ներքին գործերի նախարարության ոստիկանության Արարատի բաժին, որտեղ ձերբակալվել էր ու ներկայացվել վարույթն իրականացնող մարմին: Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի մարտի 6-ի որոշմամբ՝ մեղադրյալ Կ.Խ.-ի նկատմամբ կիրառվել

էին համակցված այլընտրանքային խափանման միջոցներ՝ տնային կալանք՝ 2 ամիս ժամանակով, 1 մլն դրամի չափով գրավ և բացակայելու արգելք:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի մայիսի 17-ի դատավճռով **Կ.Խ.-ն մեղավոր էր ճանաչվել, նրա նկատմամբ վերջնական պատիժ էր նշանակվել ազատազրկումը՝ 4 տարի 6 ամիս ժամկետով (պատիժը պայմանականորեն չէր կիրառվել, սահմանվել էր փորձաշրջան՝ 4 տարի ժամկետով):**

Կ.Խ.-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեմ Գլխավոր դատախազության կողմից բերվել էր վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ, մերժվել էր:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացվել էր վճռաբեկ բողոք, որը բավարարվել է:

Մասնավորապես՝ **Վճռաբեկ դատարանը 2025 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ փոփոխել է Կ.Խ.-ի վերաբերյալ Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի մայիսի 17-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 15-ի որոշումը, վերացրել է Կ.Խ.-ի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը և թողել կրելու 4 տարի 1 ամիս 17 օր ժամկետով ազատազրկումը:**

6

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Դատախազությունը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ լիազորության շրջանակում 2025 թվականին կատարել է 540 ուսումնասիրություն (2024 թվականին՝ 435), հայտնաբերել է 485 իրավախախտում (2024 թվականին՝ 328):



Ուսումնասիրություններն ընդգրկել են պետական և համայնքային գույքի օտարման իրավաչափության, հողային օրենսդրության պահանջների պահպանության, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և քաղաքաշինության ոլորտներին վերաբերող հարցեր:

Դատախազության կողմից հաշվետու ժամանակահատվածում դատարան է ներկայացվել 350 հայց, որոնցից 183-ը՝ քաղաքացիական դատավարության կարգով՝ ընդհանուր 2 միլիարդ 524 միլիոն 486 հազար դրամի բռնագանձման պահանջով, 36-ը՝ քրեական դատավարության կարգով՝ ընդհանուր 230 միլիոն 82 հազար դրամ վնասի հատուցման համար գումարի բռնագանձման պահանջով և 131 հայց՝ վարչական դատավարության կարգով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց վարչական ակտերի, գործողությունների դեմ, որոնցով պետությանը կամ համայնքներին պատկանող գույքն ապօրինի օտարվել է:

Նշված հայցապահանջներով պետությանը կամ համայնքին վերադարձման ենթակա գույքերի արժեքը որոշակիացված չէ՝ հաշվի առնելով դրանց՝ գնահատման գործընթացում գտնվելու կամ դեռևս գնահատված չլինելու հանգամանքները:

Հաշվետու և նախորդ տարիներին ներկայացված հայցերով 2025 թվականի ընթացքում կայացված դատական ակտերով կամ դատախազական ներգործության միջոցների կիրառման արդյունքում Հայաստանի Հանրապետության և համայնքների սեփականությանը կամ տիրապետմանն է վերադարձվել նախնական գնահատմամբ շուրջ 66 միլիարդ 934 միլիոն դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 124 գույք, այդ թվում՝ մանկապարտեզներ, մշակույթի տուն, մարզադաշտ, բնության հուշարձան, պուրակներ, հողատարածքներ:

2025 թվականի ընթացքում կայացված դատական ակտերով պետության սեփականության իրավունքն է վերականգնվել հետևյալ գույքերի նկատմամբ՝

1. Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի Աղավնու աղբյուր թաղամաս 31 հասցեում գտնվող՝ «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ, 9 միլիոն 388 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 5000 քմ մակերեսով հողամասի նկատմամբ: 2025 թվականի դեկտեմբերի 18-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

2. Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Մ.Մկրտչյան փողոց 30/1 հողամաս հասցեում գտնվող՝ «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ, շուրջ 375 միլիոն 297 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 2.32 հա մակերեսով հողամասի նկատմամբ: 2025 թվականի դեկտեմբերի 18-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

3. Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող՝ շուրջ 360 միլիոն 690 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, «անտառային, բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 9420 քմ մակերեսով հողամասի նկատմամբ: 2025 թվականի մայիսի 29-ին գույքն ամրացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

4. Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող՝ 254 միլիոն 244 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 6640 քմ մակերեսով, «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ: 2025 թվականի մայիսի 29-ին գույքն ամրացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

5. Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոցի հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող՝ 645 միլիոն 950 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 16870 քմ մակերեսով, «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ: 2025 թվականի օգոստոսի 14-ին գույքն ամրացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

6. Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող՝ 658 միլիոն 586 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 17 հազար 200 քմ մակերեսով, «անտառային» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ: 2025 թվականի օգոստոսի 14-ին գույքն ամրացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

7. Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող՝ 1 միլիարդ 44 միլիոն 444 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 17 հազար 730 քմ մակերեսով, «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ: 2025 թվականի օգոստոսի 7-ին գույքն ամրացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

8. Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոցի հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող՝ 417 միլիոն 659 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 7090 քմ մակերեսով, «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ: 2026 թվականի մարտի 19-ին գույքն ամրացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

9. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շիրազի փողոցի ձախակողմյան հատվածում գտնվող՝ 18 միլիոն դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 735 քմ մակերեսով, «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ: 2025 թվականի հոկտեմբերի 2-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

10. Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծովազարդ գյուղում գտնվող՝ 13 միլիոն 68 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 1.5 հա մակերեսով, «հատուկ պահպանվող տարածքների» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ : 2025 թվականի դեկտեմբերի 11-ին գույքն ամրացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

11. Տավուշի մարզի Բերդ համայնքի Նավուր գյուղի 2-րդ փողոց, 112 պահակատուն հասցեում գտնվող՝ 4 միլիոն 580 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 3 հա մակերեսով «հատուկ նշանակության» նպատակային նշանակությամբ հողատարածքի և 16.6 քմ մակերեսով շինության նկատմամբ: 2025 թվականի դեկտեմբերի 18-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

12. Ընդհանուր 1 միլիարդ 639 միլիոն 650 հազար դրամ շուկայական արժեքով՝ Երևան քաղաքի Ղափանցյան 59 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ շուրջ 2.8 հա մակերեսով հողատարածքի, 35.2 քմ մակերեսով հյուրանոցի, 10.9 քմ մակերեսով պահակատան, 41.2 քմ մակերեսով գրասենյակի, 182.8 քմ մակերեսով արհեստանոցի, 14.7 քմ և 198.9 քմ մակերեսով պահեստների, ինչպես նաև Ղափանցյան 59/11 հասցեում գտնվող՝ 0.0376 հա մակերեսով հողամասի նկատմամբ : 2025 թվականի դեկտեմբերի 18-ին գույքերն ամրացվել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

13. Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն գյուղում գտնվող՝ 20 միլիոն 592 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 4 հա մակերեսով «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» նպատակային նշանակությամբ հողատարածքի նկատմամբ: 2025 թվականի դեկտեմբերի 18-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

14. Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Ֆ. Նանսենի փողոց 45 ավտոդրոմ հասցեում գտնվող՝ 77 միլիոն 140 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 6 հա մակերեսով «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ հողատարածքի և 88.9 քմ մակերեսով ավտոդրոմի նկատմամբ: 2025 թվականի դեկտեմբերի 18-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

15. Երևան քաղաքի Նուբարաշեն 11-րդ փողոցի 16/18 հողամաս հասցեում գտնվող՝ 413 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 0.006 հա մակերեսով, «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ հողատարածքի նկատմամբ: 2026 թվականի փետրվարի 19-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

16. Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օրգով բնակավայրի՝ շուրջ 31 միլիոն 680 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 4 հա մակերեսով, «հատուկ պահպանվող տարածքների» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ: 2025 թվականի հունիսի 5-ին գույքն ամրացվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

2025 թվականի ընթացքում կայացված դատական ակտերով՝ համայնքների սեփականության իրավունքն է վերականգնվել կամ համայնքի տիրապետմանն են վերադարձվել հետևյալ գույքերը՝

1. Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Եղեգնաձոր համայնքում գտնվող՝ «գյուղատնտեսական» նպատակային նշանակությամբ երկու հողամասերի նկատմամբ, որոնցից մեկը՝ 10.000 քմ մակերեսով, իսկ մյուսը՝ 5000 քմ մակերեսով: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ 354 հազար դրամ:

2. Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Եղեգնաձոր համայնքի Գետափ գյուղի 29-րդ փողոց 6 հողամաս և Գետափ գյուղի 29-րդ փողոց 4 հողամաս հասցեներում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ երկու հողամասերի նկատմամբ ՝ յուրաքանչյուրը 800 քմ մակերեսով: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ 976 հազար դրամ:

3. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի տիրապետմանն են վերադարձվել Ջերմուկ համայնքի Մյասնիկյան փողոց 1/1 արհեստական լճակ հասցեում և Մյասնիկյան փողոց 2/4 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ երկու հողամասերը, որոնցից մեկը՝ 13.930 քմ մակերեսով և 226 միլիոն 037 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, մյուսը՝ 2661 քմ մակերեսով և 45 միլիոն 207 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով:

Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է նշված գույքերի նկատմամբ «Ջերմուկի ըմպելասրահ» ՍՊ ընկերության վարձակալության իրավունքը:

4. Վայոց ձորի մարզի Վայք համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Սարավանում գտնվող՝ «գյուղատնտեսական» նպատակային նշանակությամբ 1.0172 հա մակերեսով

5. Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի 2 փողոց, 1/1 հասցեում գտնվող՝ 0.07 հա մակերեսով, «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ հողամասի նկատմամբ:

Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ 554 հազար դրամ:

6. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևան քաղաքի Անկախության փողոց 1/41 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ շուրջ 10 միլիոն դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 1500 քմ մակերեսով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացիների կառուցապատման իրավունքը:

7. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևան քաղաքի Թատերական փողոցի 18/6 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.03 հա մակերեսով, 2 միլիոն 200 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

8. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևան քաղաքի Վալանսի փողոց 1/27 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.03 հա մակերեսով, 2 միլիոն 400 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

9. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևան քաղաքի Վալանսի փողոց 1/29 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.06 հա մակերեսով և 4 միլիոն 134 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

10. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևան քաղաքի Անկախության փողոց 1/62 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.00198 հա մակերեսով՝ 135 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

11. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևան քաղաքի Թատերական փողոցի 18/7 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 350.1 քմ մակերեսով՝ 2 միլիոն 392 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

12. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևան քաղաքի Թատերական փողոցի 18/5 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 19.8 քմ մակերեսով՝ 135 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

13. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևան քաղաքի Թատերական փողոցի 18 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 19 քմ մակերեսով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

14. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևանի Անկախության 1/54 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 436.8 քմ մակերեսով հողամասը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է քաղաքացու կառուցապատման իրավունքի պետական գրանցումը:

15. Տավուշի մարզի Դիլիջան համայնքին է վերադարձվել Ծահումյան փողոցի թիվ 34 հասցեում գտնվող՝ 891.1 քմ մակերեսով, 85 միլիոն 935 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով անշարժ գույքը՝ մանկապարտեզի մասնաշենքը: Դատարանի վճռի հիման վրա՝ դադարել է գույքի նկատմամբ «Առաջինը երեխաներին» հասարակական կազմակերպության անվամբ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցումը:

2025 թվականի ընթացքում դատախազական ակտերի հիման վրա պետության և համայնքների սեփականության կամ տիրապետման իրավունքն է վերականգնվել հետևյալ գույքերի նկատմամբ՝

1. Հայաստանի Հանրապետության տիրապետմանն են վերադարձվել Արարատի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող բնապահպանական հողերից 60 միլիարդ 553 միլիոն 218 հազար դրամ արժեքով շուրջ 4886 հա մակերեսով հողատարածքները (65 գույքային միավոր). հողատարածքների նկատմամբ դադարել է «Կենդանիների աշխարհ» ՍՊ ընկերության անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցումը:

2. Հայաստանի Հանրապետության տիրապետմանն է վերադարձվել Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Հանգստի գոտի 2-րդ փողոցի 47 հասցեում գտնվող՝ «հատուկ պահպանվող տարածքներ» նպատակային նշանակությամբ 68 միլիոն 343 հազար դրամ կադաստրային արժեքով 1 հա մակերեսով հողամասը. ուժը կորցրած է ճանաչվել «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի և քաղաքացու միջև կնքված՝ հողամասի վարձակալության իրավունքի գրանցումը:

3. Սյունիքի մարզի Կապան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Կապանի Վազգեն Սարգսյանի անվան զբոսայգու տարածքում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 475 քմ մակերեսով հողատարածքը. դադարեցվել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

4. Սյունիքի մարզի Կապան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Կապանի Վազգեն Սարգսյանի անվան զբոսայգու տարածքում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 190 քմ մակերեսով հողատարածքը. դադարեցվել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

5. Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Կապան համայնքի Սյունիք գյուղի 25 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 4.16 հա մակերեսով, 32 միլիոն 947 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ:

6. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Իջևանի Անկախության 1/55 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 436 քմ մակերեսով՝ 2 միլիոն 985 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը. դադարեցվել է քաղաքացու կառուցապատման իրավունքի պետական գրանցումը:

7. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Սպանդարյան փողոցի 1/91 հասցեում գտնվող՝ զբոսայգու շատրվաններին կից՝ 0.03265 հա մակերեսով, 1 միլիոն 450 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը. դադարեցվել է քաղաքացու կառուցապատման իրավունքը:

8. Տավուշի մարզի Իջևան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Խաշթառակ բնակավայրի 9-րդ փողոցի 11 հասցեում գտնվող՝ 198.45 քմ մակերեսով, 44 միլիոն 121 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով մանկապարտեզի մասնաշենքը. դադարեցվել է քաղաքացու վարձակալության իրավունքը:

9. Տավուշի մարզի Դիլիջան համայնքի տիրապետմանն է վերադարձվել Օրջոնիկիձե փողոցի 63/2 հասցեում գտնվող՝ 286.5 քմ մակերեսով, 30 միլիոն 838 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով մանկապարտեզի մասնաշենքը. դադարեցվել է «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքը:

10. Արարատի մարզի Արարատ համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Սուրենավան բնակավայրի Բարեկամության փողոցի 23/3 հասցեում գտնվող՝ 22 միլիոն 248 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 625.33 քմ մակերեսով մանկապարտեզի մասնաշենքի և դրանով ծանրաբեռնված՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.15878 հա մակերեսով հողատարածքի նկատմամբ:

11. Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Քաղցրաշեն բնակավայրի Շահումյան փողոցի 1/1 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.01 հա մակերեսով, 122 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ:

12. Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Քաղցրաշեն բնակավայրի Շահումյան փողոցի 2/1 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.015 հա մակերեսով, 183 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ:

13. Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Նարեկ բնակավայրի Դավիթ Բեկ փողոցի 2/1 հասցեում գտնվող՝ 13 միլիոն 411 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 257 քմ մակերեսով մշակույթի տան և դրանով ծանրաբեռնված՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.09 հա մակերեսով հողատարածքի նկատմամբ:

14. Արարատի մարզի Ջրաշեն համայնքի տիրապետմանն է վերադարձվել Բաղրամյան փողոցի 14 հասցեում գտնվող՝ 17 միլիոն 865 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով մանկապարտեզի շենքը և դրանով ծանրաբեռնված՝

«բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 0.26466 հա մակերեսով հողատարածքը:

15. Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել 69 միլիոն 727 հազար դրամ ընդհանուր կադաստրային արժեք ունեցող՝ Գավառ համայնքում գտնվող՝ 0.2967 հա մակերեսով, 1.303 հա մակերեսով, 3.2104 հա մակերեսով, 0,8041 հա մակերեսով, «գյուղատնտեսական» նպատակային նշանակությամբ հողամասերի նկատմամբ: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել Գավառ համայնքի և «Երյունա» ՍՊ ընկերության միջև «գյուղատնտեսական» նպատակային նշանակությամբ 35 հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի հիման վրա տրված վարձակալության իրավունքի պետական գրանցումը:

16. Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տիրապետմանն է վերադարձվել 123 միլիոն 224 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, Գետափնյա 2-րդ փողոց 22 հասցեում գտնվող՝ «բնակավայրերի» նպատակային նշանակությամբ 6.5 հա մակերեսով հողամասը (մարզադաշտը). դադարեցվել է քաղաքացու վարձակալության իրավունքը:

17. Գառնի համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել Կոտայքի մարզի Գառնի համայնքում գտնվող՝ «Բազալտե երգեհոն» («Քարերի սիմֆոնիա») բնության հուշարձան հանդիսացող՝ 0.10519 հա մակերեսով հողամասի նկատմամբ: 2025 թվականի դեկտեմբերի 4-ին գույքն ամրացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

18. Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել 0.45 հա մակերեսով, 0.39 հա մակերեսով, 0.13 հա մակերեսով, 0.7 հա մակերեսով «գյուղատնտեսական» նպատակային նշանակությամբ հողամասերի նկատմամբ:

2025 թվականի ընթացքում գումարի բռնագանձման հայցերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով բավարարվել է 342 միլիոն 786 հազար դրամ հայցապահանջով 55 հայց (2024 թվականին՝ 207 միլիոն 583 հազար դրամ հայցապահանջով 43 հայց):



Նախորդ տարիներին դատարան ներկայացված հայցերով՝ 2025 թվականին փաստացի վերականգնվել է 113 միլիոն 405 հազար դրամի վնաս:

2025 թվականի ընթացքում Դատախազության ստորաբաժանումների կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում, ներկայացվել է հանցանքի մասին 92 հաղորդում, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ՝ պաշտոնատար անձանց կողմից լիազորությունների չարաշահման, պաշտոնեական անփութության, կեղծիքի և այլ հանցագործությունների հատկանիշներով (2024 թվականին՝ 63 հաղորդում):

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության և Գեղարքունիքի մարզի դատախազության կողմից ուսումնասիրություններ են իրականացվել Սևանա լճի ափամերձ տարածքներում օրենքի խախտմամբ օտարված կամ վարձակալության հանձնված գույքերը պետությանը վերադարձնելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ 2025 թվականի ընթացքում Շրջակա միջավայրի նախարարությանը և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին Դատախազության կողմից հասցեագրվել են միջնորդագրեր:

Միջնորդագրերից բացի, Դատախազության կողմից դատարան են ներկայացվել հայցեր, որոնք, ի թիվս այլնի, վերաբերում են.

- **Ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի կողմից ապօրինի կառուցված Սևանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 97 հասցե),**
- **«Հարսնաքար» հյուրանոցի վարչական համալիրին (Սևան քաղաքի Երևանյան խճուղի 50 հասցե), «Հարսնաքար» հյուրանոցի քոթեջներին (Սևան քաղաքի Երևանյան խճուղի 48/6 հասցե),**
- **Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախկին նախագահ, ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի կողմից ապօրինի կառուցված Սևանի առանձնատանը (Սևան քաղաքի Հանգստի գոտի 3-րդ փողոց 38 հասցե),**
- **ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի կողմից ապօրինի կառուցված Սևանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցե),**
- **«Կապավոր» ՍՊ ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Արման Հակոբջանյանի կողմից ապօրինի կառուցված Սևանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 88 հասցե):**

Դատախազության միջնորդագրերի **հիման վրա՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ, Սևանա լճի ափամերձ՝ բացարձակ նիշից ցածր 11 հողամասերում ապամոնտաժվել (քանդվել) է տարբեր անձանց կողմից ապօրինի կառուցված՝ հիմնական և ոչ հիմնական 20-ից ավելի շենք-շինություն, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից լուծվել է (դադարեցվել է) 2 պայմանագիր:**

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒՄ 2025

7

ԱՊՈՐԻՆԻ ՇԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ

- Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում (այսուհետ նաև՝ Վարչություն) 2025 թվականի ընթացքում՝
  - մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից ստացվել են 146 զեկուցագրեր (2024 թվականին՝ 121)՝ 180 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 201):



  - օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից Վարչությունում ստացվել է 22 տեղեկանք (2024 թվականին՝ 16)՝ 22 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 16): Ներկայացված տեղեկանքներից 16-ը ստացվել է Ազգային անվտանգության ծառայությունից, 4-ը՝ Ներքին գործերի նախարարությունից, 2-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեից:



Հաշվետու տարում ներկայացված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է 157 ուսումնասիրություն սկսելու մասին որոշում (2024 թվականին՝ 163):

Ուսումնասիրություն սկսելու մասին 157 որոշումներից 132-ը կայացվել են դատախազների զեկուցագրերի հիման վրա (3 զեկուցագիր փոխանցված է եղել 2024 թվականից), 19-ը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմնի կողմից տրամադրված նյութերի հիման վրա, իսկ 6-ը՝ (2024 թվականին՝ 7) Վարչության դատախազների կողմից սկսված ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված տվյալների հիման վրա:



Ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքում 48 նյութով 49 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 45 նյութերով 54 անձի վերաբերյալ) որոշում է կայացվել ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին: Նշված որոշումներից 45-ը՝ 46 անձի վերաբերյալ կայացվել է դատախազների զեկուցագրերի հիման վրա, իսկ 2-ը՝ 2 անձի վերաբերյալ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմնի կողմից տրամադրված նյութերի հիման վրա: Բացի այդ, 1 որոշում 1 անձի վերաբերյալ կայացվել է 2024 թվականից ստացված դատախազի զեկուցագրի հիման վրա:

Ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին 48 որոշումներից՝

- 37-ով (2024 թվականին՝ 35-ով) ուսումնասիրություն չնախաձեռնելու հիմք է հանդիսացել այն, որ բացակայել են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ 50.000.000 դրամը գերազանցող ապօրինի ծագման գույքի վերաբերյալ տվյալներ,
- 2-ով (2024 թվականին՝ 8-ով) ուսումնասիրություն չնախաձեռնելու հիմք է հանդիսացել նախաձեռնված քրեական վարույթներով անձանց նկատմամբ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով չնախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման համար քրեական հետապնդում հարուցված լինելը,
- 4-ով (2024 թվականին՝ 2-ով) ուսումնասիրություն չնախաձեռնելու հիմք է հանդիսացել այն, որ տվյալները վերաբերել են Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ չհանդիսացողի,
- 1-ով ուսումնասիրություն չի նախաձեռնվել, քանի որ խախտվել է Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը,
- 3-ով ուսումնասիրություն չնախաձեռնելու հիմք է հանդիսացել այն, որ բացակայում է հանցանքի կատարման՝ Օրենքում նախատեսված եղանակը,
- 1-ով առկա է եղել Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արգելքը, մասնավորապես՝ նախորդիվ առկա է եղել ուսումնասիրություն, իսկ նոր ստացված նյութի հիմքերը չեն տարբերվել:

2025 թվականին 48 (2024 թվականին՝ 59) ուսումնասիրության շրջանակում Հակակոռուպցիոն դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) է ներկայացվել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ 60 (2024 թվականին՝ 79) դիմում, որոնցից 47-ն ամբողջությամբ բավարարվել է, 5-ով Դատարանն ամբողջությամբ մերժել է դիմումը, իսկ 8-ով բավարարել է մասնակի:

Հակակոռուպցիոն դատարանի կողմից հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումն ամբողջությամբ մերժելու մասին 3 որոշումների դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: Ներկայացված 3 բողոքները մերժվել են Վերաքննիչ դատարանի կողմից: Դիմումը մասնակի բավարարելու մասին որոշումներից 4-ով ներկայացվել է վերաքննիչ բողոք, որից 2-ով Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել բողոքն ամբողջությամբ բավարարելու մասին, իսկ մյուս 2 բողոքները մերժվել են:

Հաշվետու ժամանակահատվածում 44 ուսումնասիրության շրջանակում (2024 թվականին՝ 47) կազմվել է ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփման վերաբերյալ 44 եզրակացություն, որից 2-ով (2024 թվականին՝ 3) որոշում է կայացվել ավարտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով ուսումնասիրությունը, իսկ 42-ով (2024 թվականին՝ 44) Հակակոռուպցիոն դատարան ներկայացվել են հայցեր, որոնք ընդունվել են վարույթ:

Ներկայացված հայցադիմումներից 38-ը քննվում են Դատարանում: Հաշվետու տարում ներկայացված հայցադիմումներից 4-ով դատախազը հրաժարվել է հայցից՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1776 որոշմամբ արտահայտված դիրքորոշումները:

2025 թվականին Դատարան ներկայացված և քննվող 38 հայցադիմումներով ընդհանուր պահանջվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- **230 անշարժ գույք,**
- **68 շարժական գույք,**
- **76 իրավաբանական անձանցում մասնակցություն:**

Դրամական պահանջն այդ հայցերով կազմում է 31 միլիարդ 540 միլիոն 434 հազար դրամ, իսկ ընդհանուր հայցագինը՝ 35 միլիարդ 993 միլիոն 262 հազար դրամ:[1]

Հաշվետու տարում Հակակոռուպցիոն դատարան, ի թիվս այլնի, ներկայացվել են հետևյալ հայցերը՝

1. 2025 թվականի օգոստոսի 15-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով պահանջ է ներկայացվել ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար, Ազգային անվտանգության խորհրդի նախկին քարտուղար, ՀՀ նախկին փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախկին նախարար, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Անդրանիկի Գևորգյանից և նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

1. Ընդհանուր հայցագնի մեջ ներառված չեն իրավաբանական անձանցում մասնակցության, ինչպես նաև մի շարք այլ գույքերի շուկայական արժեքները:

- 14 անշարժ գույք,
- 2 տրանսպորտային միջոց,
- 2 իրավաբանական անձում մասնակցություն,
- 1.085.099.435 դրամի փոխառության պահանջի իրավունք,
- 1100 հատ արժեթուղթ,
- 18.000 հատ բաժնետոմս,
- 1.522.267.485 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

2. 2025 թվականի հունիսի 10-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով պահանջվել է ՀՀ ոստիկանապետի նախկին առաջին տեղակալ, ՀՀ Սյունիքի նախկին մարզպետ Հունան Հրաչի Պողոսյանից և նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 3 անշարժ գույք,
- 1 տրանսպորտային միջոց,
- 764.569.711 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

3. 2025 թվականի մարտի 21-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով պահանջվել է ՀՀ Ազգային Ժողովի նախկին պատգամավոր Արայիկ Թեմուրի Գրիգորյանից և վերջինիս հետ փոխկապակցված անձից՝ որդուց, հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 7 անշարժ գույք,
- 1 իրավաբանական անձում մասնակցություն,
- 5.814.398.309 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

4. 2025 թվականի մարտի 25-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով պահանջվել է Երևանի Շահումյանի շրջանի (հետագայում՝ Մալաթիա-Սեբաստիա համայնքի) դատախազության նախկին ստաժոր-քննիչ, «Դերժավա-Ս» և «Սլավ Գրուպ» ընկերությունների նախկին նախագահ, ԱԺ նախկին պատգամավոր Արկադի Ստանիսլավի Համբարձումյանից և վերջինիս հետ փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 8 անշարժ գույք,
- 5 տրանսպորտային միջոց,
- 10 իրավաբանական անձում մասնակցություն,
- 1.759.513.933 դրամի փոխառության պահանջի իրավունք,

- 6.805.162.751 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

5. 2025 թվականի հունիսի 11-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով պահանջվել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի նախկին գլխավոր վարչության պետ Արտյոմ Մովսեսյանից և վերջինիս փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 8 անշարժ գույք,
- 4 տրանսպորտային միջոց,
- 5 իրավաբանական անձում մասնակցություն,
- 1.663.892.363 դրամի փոխառության պահանջի իրավունք,
- 580.032.536 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

6. 2025 թվականի հունիսի 27-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով պահանջվել է Սիսիանի նախկին քաղաքապետ, ԱԺ պատգամավոր Արթուր Լավրենտի Սարգսյանից և նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 2 անշարժ գույք Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում, 2 անշարժ գույք Սիսիան քաղաքում,
- 3 ավտոմեքենա,
- 6 իրավաբանական անձում մասնակցություն,
- Առևտրային բանկերում ներդրված 5 ավանդ՝ 11.865 ԱՄՆ դոլարի և 1.104.900 դրամի չափով,
- 1 փոխառության պահանջի իրավունք՝ 1.400.000 դրամի չափով,
- 1.053.195.804 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

Հաշվետու տարում դատարանների կողմից հայցադիմումների քննության արդյունքում կայացվել է 7 վճիռ, որոնցից 2-ը բավարարվել են մասնակի, 5-ը՝ մերժվել:

Հաշվետու տարում դատարանի կողմից մասնակի բավարարվել են հետևյալ հայցերը՝

- Հակակոռուպցիոն դատարանը մասնակի բավարարել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում, ՀՀ ոստիկանությունում և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում տարբեր պաշտոններ զբաղեցրած

- Սերոբ Հարությունյանի և վերջինիս փոխկապակցված անձանց վերաբերյալ Վարչության պահանջը: Նշված ակտով հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման 4 անշարժ գույք, որից 3-ը գտնվում են Կենտրոն վարչական շրջանում: Նշենք, որ գույքերի շուկայական արժեքը կազմում է է ավելի քան 324 միլիոն 600 հազար դրամ: Վճռով բավարարվել է նաև Վարչության կողմից ներկայացված դրամական պահանջը. այն կազմում է 207 միլիոն 452 հազար դրամ:
- Հակակոռուպցիոն դատարանը մասնակի բավարարել է ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Մանվել Գրիգորյանի ժառանգների և նրան փոխկապակցված անձանց վերաբերյալ՝ Վարչության պահանջը: Նշված ակտով Դատարանը որոշել է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 9 անշարժ և 6 շարժական գույք, որոնց շուկայական արժեքը կազմում է 876 միլիոն 600 հազար դրամ, ինչպես նաև մեկ իրավաբանական անձում մասնակցություն, մասնավորապես՝ «ԷՄ-ԷՆ-Ժի» ՍՊԸ-ի 15.9456% բաժնեմասը: Կայացված դատական ակտով բավարարված ավանդի, փոխառության պահանջի իրավունքի և դրամական պահանջի հանրագումարը կազմում է 340.623.000 դրամ:

2025 թվականին ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակում կնքվել է մեկ հաշտության համաձայնություն, որի արդյունքում՝ որպես ապօրինի ծագում ունեցող գույք Հայաստանի Հանրապետության օգտին բռնագանձման է ենթակա 87.622.000 դրամ, որից 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձվել է 65.675.850 դրամը:

2025 թվականին օրինական ուժի մեջ է մտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով առաջին վճիռը: Վճռի հիման վրա՝ ՀՀ սեփականության իրավունքն է գրանցվել Երևան քաղաքի Վարդանանց փողոցում գտնվող 1 բնակարանի և Կոտայքի մարզի Առինջ համայնքում գտնվող 1 բնակելի տան նկատմամբ, որոնց ընդհանուր միջին շուկայական արժեքը կազմում է 300 միլիոն 650 հազար դրամ (շուրջ 750 հազար ԱՄՆ դոլար): Բացի այդ, Վերականգնված միջոցների միասնական հաշվին փոխանցվել է 50 հազար եվրոյին համարժեք 20 միլիոն 634 հազար դրամ և 878 հազար դրամ:

Ամփոփելով նշենք, որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դատարաններում քննվող հայցերի թիվը 155 է, որոնց ընդհանուր հայցագինը կազմում է 595 միլիարդ 817 միլիոն դրամ: Այդ հայցերով Դատախազությունը պահանջում է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- **324 շարժական գույք,**
- **1463 անշարժ գույք,**
- **440 իրավաբանական անձանցում մասնակցություն,**
- **518 միլիարդ 428 միլիոն դրամ (այս թիվն ունի աճման միտում՝ պայմանավորված նրանով, որ ոչ բոլոր գույքերի շուկայական արժեքն է պարզված, պարզված չեն նաև իրավաբանական անձում մասնակցությունների արժեքները):**

Վարչությունն իր ձևավորման օրվանից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը կնքել է հաշտության 9 համաձայնություն: Հաշտության համաձայնությունների հիման վրա՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձվել է 7 անշարժ գույք, 2 շարժական գույք և դրամական միջոց, որոնց հանրագումարը կազմում է 5 միլիարդ 126 միլիոն դրամ:

2025 թվականի ընթացքում միջազգային իրավական ակտերի հիման վրա Վարչության կողմից ուղարկվել է 6 պաշտոնական միջազգային հարցում (2024 թվականին՝ 17), որոնցից՝ 3 ԱՄԷ իրավասու մարմիններին, 1-ը՝ Ֆրանսիայի իրավասու մարմիններին, 1-ական՝ Վրաստանի և Նիդերլանդների Թագավորության իրավասու մարմիններին:

ՀՀ ՊԱՏԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒՄ 2025

8

ՊԱՏԻԺՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում՝ հայտնաբերվել է 167 խախտում (2024 թվականին՝ 323): Պատկան մարմիններին ուղարկվել է 28 հաղորդում (2024 թվականին՝ 53), 87 միջնորդագիր (2024 թվականին՝ 40), որոնց հիման վրա վերանայվել է 67 ակտ (2024 թվականին՝ 31): Դատախազության կողմից կասեցվել է 2 ակտ (2024 թվականին՝ 3), իրականացվել է 19 ծառայողական քննություն (2024 թվականին՝ 9):

2025 թվականին ազատվել է Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ Քրեակատարողական հիմնարկ) պահվող անձանցից (այսուհետ՝ Պահվող անձ) 2396-ը (2024 թվականին՝ 1850), որից 680-ը՝ պատժի լրիվ կրումով (2024 թվականին՝ 331), 170-ը՝ պայմանական վաղաժամկետ (2024 թվականին՝ 138), 1-ը՝ ներման կարգով (2024 թվականին՝ 1), 2-ը՝ համաներումով (2024 թվականին՝ 2), 1229-ը՝ խափանման միջոց կալանքը փոփոխելով (2024 թվականին՝ 1110), 61-ը՝ դատարանի դահլիճից (2024 թվականին՝ 65 անձ), 11-ը՝ հիվանդության պատճառով (2024 թվականին՝ 12), 234-ը՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ (2024 թվականին՝ 188), 8-ը՝ այլ հիմքերով (2024 թվականին՝ 3):

2024թ.

2025թ.

Հաշվետու ժամանակաշրջանում Քրեակատարողական հիմնարկներում պահվող 24 անձ է մահացել (2024 թվականին՝ 12), որից 16-ը՝ կենսաբանական մահ, 8-ը՝ ինքնասպանություն (2024 թվականի ընթացքում Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության դեպք չի արձանագրվել):

Կենսաբանական մահվան 16 դեպքից 9-ն արձանագրվել է քաղաքացիական բժշկական հաստատություններում, իսկ 7-ը՝ Քրեակատարողական հիմնարկներում:

2015-2025 թվականների ընթացքում Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց մահվան դինամիկան	
2015 թվական	28 պահվող անձ
2016 թվական	29 պահվող անձ
2017 թվական	17 պահվող անձ
2018 թվական	18 պահվող անձ
2019 թվական	21 պահվող անձ
2020 թվական	5 պահվող անձ
2021 թվական	13 պահվող անձ
2022 թվական	18 պահվող անձ
2023 թվական	16 պահվող անձ
2024 թվական	12 պահվող անձ
2025 թվական	24 պահվող անձ

2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 2854 (2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 2686), որոնցից 1392-ը՝ կալանավորված անձ, կալանավորված անձանցից 27-ը՝ կին, 6 անչափահաս տղա և 1 չափահաս՝ մինչև 21 տարեկան տղա (2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1401 կալանավորված անձ, կալանավորված անձանցից 45-ը՝ կին, 1 անչափահաս տղա), 1462 դատապարտյալ, որոնցից 44-ը՝ կին, 2 չափահաս՝ մինչև 21 տարեկան տղա (2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1285 դատապարտյալ, որոնցից 26-ը՝ կին, 1 անչափահաս տղա և 1 չափահաս՝ մինչև 21 տարեկան տղա):

Քրեակատարողական հիմնարկներում 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ պահվել է 370 օտարերկրյա քաղաքացի (2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 312 օտարերկրյա քաղաքացի):

2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ Քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրել ցմահ ազատազրկման դատապարտված 80 անձ (2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 83):

Քրեակատարողական հիմնարկներում 2025 թվականի ընթացքում ստացվել է 202 անձի կողմից հացադուլ հայտարարելու 329 դիմում: Հացադուլ հայտարարելու վերաբերյալ դեպքերով հացադուլ հայտարարած անձը հարցման է ենթարկվել:

Քրեակատարողական հիմնարկներում 2025 թվականի ընթացքում արձանագրվել է 183 անձի կողմից ինքնավնասման կամ ինքնախեղման 617 դեպք (2024 թվականին՝ 205 անձի կողմից ինքնավնասման կամ ինքնախեղման 626 դեպք):

Հացադուլ հայտարարելու, ինքնավնասման դեպքերի պատճառները հիմնականում կապված են եղել առողջական խնդիրների, վարույթն իրականացնող մարմինների կայացրած որոշումների հետ անհամաձայնության, անվտանգային գոտու փոփոխության հետ, մի շարք դեպքերում ինքնավնասումը կատարվել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում, որոշ դեպքերում էլ ներկայացվել են չհիմնավորված պահանջներ:

Քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց կողմից հացադուլ հայտարարելու, ինքնավնասում կատարելու պատճառները պարզելու նպատակով, ինչպես նաև տարբեր այլ հիմքերով դատախազների կողմից հարցման է ենթարկվել 342 դատապարտյալ կամ կալանավորված անձ:

Պահվող անձանց կողմից ինքնավնասում, ինքնասպանություն կամ դրա փորձ կատարելու դեպքերի կապակցությամբ Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց հետ տարվող համապատասխան աշխատանքների արդյունավետությունը գնահատելու, ինչպես նաև 2025 թվականի ընթացքում Քրեակատարողական հիմնարկներում Պահվող անձանց մահվան դեպքերի, հատկապես՝ ինքնասպանության դեպքերի աճի պատճառները բացահայտելու նպատակով կատարվել է ուսումնասիրություն:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են՝

- Պահվող անձանց մոտ ինքնասպանության և ինքնավնասման ռիսկերը ճիշտ չգնահատելուն, այդ կապակցությամբ նպատակային, թիրախավորված, անհատականացված և հստակ հաջորդական քայլեր չիրականացնելուն,
- նույն անձի կողմից շարունակական ինքնավնասումներ իրականացնելու պայմաններում հիշյալ վարքի հիմքում ընկած պատճառների խորքային ուսումնասիրություն չապահովելուն,
- ինքնավնասման ակնհայտ հակում ունենալու վերաբերյալ տվյալների առկայության պայմաններում լրացուցիչ արգելված իրեր և առարկաներ չսահմանելուն,
- ինքնասպանության կամ ինքնավնասման ռիսկը նվազեցնելու ուղղությամբ պարբերաբար և շարունակական հոգեբանական աշխատանքներ չապահովելուն, այդ աշխատանքներում անհատական մոտեցում չցուցաբերելուն,
- Պահվող անձի մոտ հոգեկան առողջության հետ կապված խնդրի առկայության և հոգեբույժի

խորհրդատվության անհրաժեշտության պայմաններում հոգեբույժի մասնակցությունը չապահովելուն,

- վերաբերելի փաստաթղթերում հոգեբույժի կողմից անձի ախտորոշման, բուժման ընթացքի, արդյունքների մասին համապատասխան գրառումներ չիրականացնելուն,
- ակնհայտ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց տևական ժամանակ՝ առանց բժշկական հիմնավորման, մեկուսի պահելուն:

Անդրադառնալով ինքնավնասման, ինքնասպանության ռիսկի խմբին դասվող ազատությունից զրկված անձանց՝ անհրաժեշտ ժամանակահատվածով վտանգավոր իրերին և առարկաներին հասանելիությունը սահմանափակելու վերաբերյալ կարգավորումներին և գործնականում դրանց կիրառելիությանը՝ հարկ է նշել, որ այդ գործիքակազմը հաշվետու ժամանակահատվածում Քրեակատարողական հիմնարկներում քիչ է կիրառվել (կայացվել է 10 որոշում): Մինչդեռ, ուսումնասիրության շրջանակներում ռիսկի խմբում գտնվող առանձին անձանց կողմից իրականացված ինքնավնասումների առնվազն ժամանակագրական հաջորդականության վերլուծությունը բավարար է եղել արձանագրելու, որ անձն ունի ինքնավնասման ակնհայտ հակում և առկա է օբյեկտիվ անհրաժեշտություն վերջինիս վերաբերյալ լրացուցիչ՝ արգելված իրերի և առարկաների ցանկ սահմանելու, ինչի ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել: Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ առանձին առարկաների (օրինակ՝ ներարկիչ) առկայությունը քրեակատարողական հիմնարկներում Պահվող անձանց մոտ խնդրահարույց է: Օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ դատապարտյալը բազմակի ինքնավնասումներ է կատարել ներարկիչի միջոցով: Ինքնավնասման դեպքից հետո քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից խցում իրականացված խուզարկությամբ հայտնաբերվել են ներարկիչներ: Ընդ որում, հիշյալ դատապարտյալը տևական ժամանակ ՔԿՀ-ում պահվել է առանձին: Պարզվել է նաև, որ թեև հիշյալ անձի համար սահմանված է եղել լրացուցիչ արգելված իրերի և առարկաների ցանկ, այդ թվում՝ մեկանգամյա օգտագործման սափրիչ, սակայն նշված անձի կողմից հետագայում՝ մի քանի անգամ կատարվել են ինքնավնասումներ մեկանգամյա օգտագործման սափրիչի միջոցով:

Վտանգավոր իրերին և առարկաներին հասանելիությունը սահմանափակելու գործիքակազմի կիրառման արդյունավետությունը պայմանավորված է Քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից հետևողականության ցուցաբերմամբ, այդ թվում՝ խցում նախատեսված և չնախատեսված խուզարկությունների հաճախակի կատարմամբ:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ ազատությունից զրկված անձանց կողմից ինքնավնասում կատարվում է ցանկալի

նպատակին հասնելու համար (օրինակ՝ այլ ՔԿՀ կամ բժշկական հաստատություն տեղափոխվելու համար):

Կատարված ուսումնասիրության արդյունքներով՝ Դատախազության կողմից միջնորդագիր է ներկայացվել Քրեակատարողական ծառայություն՝ խնդրի լուծմանն ուղղված առաջարկություններով:

Հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումներով պարզվել է նաև, որ Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալներին պաշտպանական կամ կանխարգելիչ նպատակներով առանձին պահելու գործող ընթացակարգերն որոշ Քրեակատարողական հիմնարկներում չեն պահպանվել, վարչակազմի կողմից չեն ձեռնարկվել բավարար միջոցներ մեկուսացման համար հիմք հանդիսացող հանգամանքների չեզոքացման և վերացման ուղղությամբ:

Պարզվել է, որ մի խումբ դատապարտյալներ Քրեակատարողական հիմնարկներում տևական ժամանակ (ընդհուպ մինչև մեկ տարի) փաստացի պահվել են առանձին: Այս կապակցությամբ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից որոշումներ չեն կայացվել, իսկ որպես հիմնավորում՝ նշվել է, որ փաստացի առանձին պահելը պայմանավորված է եղել «համատեղելիության կամ համակեցության խնդիրներով»:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «համակեցության, համատեղելիության» խնդիրներով պայմանավորված փաստացի առանձին պահվող դատապարտյալների հետ չեն իրականացվել թիրախային միջոցառումներ՝ նրանց մեկուսացմանը նպաստող հանգամանքների վերացման ուղղությամբ, ավելին՝ վերաբերելի փաստաթղթերում նշված չի եղել, թե համակեցության կամ համատեղելիության խնդիրն ինչում է արտահայտվել:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ որոշ դատապարտյալներ, առանց բժշկական հիմնավորման, փաստացի մեկուսի են պահվել՝ հոգեկան առողջությամբ պայմանավորված՝ այլ անձանց հետ համատեղ կենցաղավարություն ունենալու անհամատեղելիության պատճառաբանությամբ: Մինչդեռ, սոցիալական նման մեկուսացումը կարող է նպաստել անձի մոտ հոգեկան և վարքային խանգարումների առաջացմանը և հանգեցնել ծանր հետևանքների: Օրինակ՝ «Արմավիր» ՔԿՀ դատապարտյալի կողմից 2025 թվականի ընթացքում կատարված ինքնասպանության դեպքին նախորդած ժամանակահատվածում տվյալ անձը տևական ժամանակ մեկուսի է պահվել, ունեցել է հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, այդ թվում՝ ինքնավնասման և ինքնասպանության հակում, պատժի կրման ընթացքում ինքնավնասումներ է կատարել աջ և ձախ ձեռքերի 10 մատներից 8-ի անդամահատման եղանակով:

Վերոնշյալ դատապարտյալի կողմից պարբերաբար ինքնավնասումներ կատարելու հանգամանքով պայմանավորված անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ դեռևս 2024 թվականին Դատախազության կողմից Քրեակատարողական ծառայություն է հասցեագրվել միջնորդագիր:

Հաշվետու ժամանակահատվածում ստուգվել են ընդհանուր 5366 որոշման համապատասխանություն գործող օրենսդրությանը, այդ թվում՝ 3131 որոշում կարգապահական տույժ կիրառելու մասին, 20 որոշում խրախուսանքի միջոց կիրառելու մասին, 736 որոշում դատապարտյալին տվյալ գոտու խիստ կամ մեղմ պայմաններում պահելու մասին, 1326 որոշում դատապարտյալի տեղաբաշխման վերաբերյալ, 142 որոշում դատապարտյալին կարճատև կամ երկարատև մեկնում տրամադրելու մասին, 11 որոշում համաներում կիրառելու մասին:

Ստուգմամբ արձանագրված՝ օրենսդրությանը հակասող ակտերի վերաբերյալ ներկայացվել է 69 միջնորդագիր: Ներկայացված միջնորդագրերի արդյունքում 23 որոշում վերանայվել և փոփոխվել է, իսկ 46 որոշում թողնվել է անփոփոխ (2024 թվականին՝ 31 միջնորդագիր, որոնց արդյունքում 22 որոշում վերանայվել և փոփոխվել է, 9-ը թողնվել է անփոփոխ):

Հաշվետու ժամանակահատվածում իրավասու պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված խախտումների կապակցությամբ Դատախազության կողմից ներկայացվել է ծառայողական քննություն իրականացնելու վերաբերյալ 19 միջնորդագիր: Միջնորդագրերի քննության արդյունքներով՝ 6 անձ ենթարկվել է կարգապահական տույժի, իսկ 3-ը կարգապահական տույժի չեն ենթարկվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու պատճառաբանությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Քրեակատարողական հիմնարկներում Պահվող անձինք կարգապահական տույժի են ենթարկվել առավելապես բջջային հեռախոսներ, բջջային հեռախոսների պարագաներ, ինտերնետ հասանելիություն ապահովող սարքեր պահելու և օգտագործելու համար:

Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ բջջային հեռախոսների միջոցով արտաքին աշխարհի հետ կապ պահպանելով՝ Պահվող անձինք կատարում են տարաբնույթ հանցավոր արարքներ, այդ թվում՝ կազմակերպում և իրականացնում են թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, խարդախության կամ շորթման եղանակով հափշտակություններ: Բացի այդ, քրեական ենթամշակույթին հարող և Քրեակատարողական հիմնարկներում

պահվող առանձին անձինք հեռախոսակապի միջոցով հնարավորություն են ունենում ղեկավարել քրեական ենթամշակույթ կրող խմբավորում՝ դրա կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ կատարելով:

Պահվող անձանց կողմից բջջային հեռախոսների միջոցով տարաբնույթ հանցագործություններ կատարելը կանխելու առաջնային երաշխիքը դրանց ներթափանցման և հայտնաբերմանն ուղղված արդյունավետ միջոցներ ձեռնարկելն է, մինչդեռ, ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ ուղղությամբ ձեռնարկված շարունակական միջոցառումները միշտ չէ, որ ապահովել են բավարար արդյունավետություն:

Մասնավորապես՝ քրեական ենթամշակույթին հարող անձի վերաբերյալ դատական ակտով հաստատվել է, որ քրեական միջավայրում կոնկրետ մականունով հայտնի անձը, մասնակցելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը, հիշյալ խմբավորման հետապնդած նպատակների իրականացման նպատակով, այդ թվում՝ համացանցային եղանակով, հեռախոսազրույց ունենալով «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվող առանձնապես ծանր հանցանքի համար կալանքի տակ գտնվող անձի հետ, իրականացրել է դրամական միջոցների և այլ առարկաների հավաքագրում՝ ՀՀ-ում գտնվող տարբեր Քրեակատարողական հիմնարկներ ուղարկելու նպատակով:

Միաժամանակ, դատական ակտով հաստատվել է նաև, որ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հիշյալ անդամը հեռախոսազրույցների ընթացքում տեղեկություններ է ստացել քրեակատարողական հիմնարկում պահվող կոնկրետ անձի վարքագծով պայմանավորված նրան «պատժելու» և այլնի վերաբերյալ:

Այս կապակցությամբ Դատախազության կողմից միջնորդագիր է ներկայացվել Քրեակատարողական ծառայություն, որով առաջարկվել է բջջային կապի հաճախականության ռադիոալիքների խլացման նպատակով քրեակատարողական հիմնարկներում տեղադրել ռադիոհաճախականությունների խլացուցիչ:

Տարբեր Քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձինք կամ դատապարտյալները Դատախազությանը հասցեագրած իրենց դիմումներով, ստուգումների, ինչպես նաև դատախազների կողմից հարցման ենթարկվելու ընթացքում կազմված արձանագրություններով բարձրացրել են հարցադրումներ՝ իրենց պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում չտրամադրելու վերաբերյալ:

Կատարված ստուգումների արդյունքում՝ Դատախազության կողմից միջնորդագիր է ներկայացվել Առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ:

2025 թվականի ընթացքում Դատախազության կողմից Առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում իրականացվել են ուսումնասիրություններ և ստուգումներ:

Պարզվել է, որ թեև Կառավարության կողմից համապատասխան որոշմամբ սահմանվել են յուրաքանչյուր բուժառուին հատկացվելիք հանդերձանքի, անկողնային և հիգիենիկ պարագաների չափաբաժինները, դրանց քանակն ու շահագործման ժամկետները, սակայն «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից դրանք կամ առհասարակ ձեռք չեն բերվել կամ ձեռք են բերվել սահմանված չափաբաժինների խախտումով, մատակարարող կազմակերպությունից ընդունվել է բուժառուների համար տեխնիկական բնութագրերով նախատեսված որակին և ստանդարտներին չհամապատասխանող սնունդ:

Դատախազության ստուգման արդյունքներով ներկայացված միջնորդագրի հիման վրա՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացվել է վերահսկողություն, որի արդյունքում հայտնաբերվել են մի շարք խախտումներ, տեսչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ, ընկերության տնօրենի նկատմամբ նշանակվել է տուգանք, որը վճարվել է:

Ստուգումներով արձանագրվել են նաև «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում հանձնաժողովային զննություններն առանձին դեպքերում պատշաճ չիրականացնելու, նույն անձի հիվանդության պատմագրում և դատարան ներկայացված բժշկական եզրակացության միջև էական տարբերության դեպքեր: Այս հանգամանքը հիմք է հանդիսացել առաջին ատյանի դատարանի կողմից անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը փոփոխելու վերաբերյալ ոչ իրավաչափ դատական ակտ կայացնելու համար, ինչը հետագայում դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա Վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ բեկանվել է:

Հայտնաբերվել են նաև դեպքեր, երբ դատական ակտով արտահիվանդանոցային հարկադիր բուժման դադարեցման պայմաններում, անձանց նկատմամբ փաստացի կիրառվել են հարկադիր բուժման ընթացակարգեր կամ անձի հոգեկան խանգարման վիճակը պահանջել է բուժման, խնամքի և հսկողության այնպիսի պայմաններ, որոնք կարող են իրականացվել միայն հիվանդանոցային ձևով, սակայն «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության իրավասու պաշտոնատար

անձինք շրջանցել են արտահիվանդանոցային և հիվանդանոցային հարկադիր բուժման ընթացակարգերին առնչվող իրավական մեխանիզմները, միջնորդություններ չեն ներկայացրել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը խստացման առումով փոփոխելու վերաբերյալ, որպիսի պայմաններում նշված անձանց հարկադիր բուժումը գտնվել է դատական վերահսկողությունից դուրս, իսկ որոշակի խումբ բուժառուների բժշկական կենտրոն չներկայանալու դեպքերում նրանց հայտնաբերելու և բժշկական կենտրոն ներկայացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները բավարար չեն եղել:

Խախտում թույլ տված իրավասու անձինք Դատախազության միջնորդագրի հիման վրա ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Հաշվետու ժամանակաշրջանում տուգանք պատժատեսակի կատարման վարույթներով գանձվել է 2.293.906.235 դրամ՝ 1.029.498.483 դրամ ավելի, քան նախորդ տարի (2024 թվականին՝ 1.264.407.752 դրամ):



Դատախազները հաշվետու ժամանակահատվածում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 4148 դատական քննության (2024 թվականին՝ 3245): Դրանցից 719-ը վերաբերել են դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն (2024 թվականին՝ 740), 76-ը՝ ՔԿՀ-ներում կատարված հանցագործություններով քրեական գործերով մեղադրանքի պաշտպանությանը (2024 թվականին՝ 63), 35-ը՝ պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելուն (2024 թվականին՝ 34), 3-ը՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն (2024 թվականին՝ 40), 117-ը՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելուն (2024 թվականին՝ 78), 198-ը՝ տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելուն (2024 թվականին՝ 235), 71-ը՝ հարկադիր բուժումը փոփոխելուն կամ դադարեցնելուն (2024 թվականին՝ 59), իսկ 2929-ը՝ դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերին (2024 թվականին՝ 1995):

Դատական քննության մասնակցություն՝ վարչության դատախազների կողմից



Դատախազների կողմից 2025 թվականի ընթացքում ներկայացվել է 170 վերաքննիչ բողոք (2024 թվականին՝ 160), որոնցից բավարարվել է 48-ը (2024 թվականին՝ 42): Վերաքննիչ բողոքներից 70-ը եղել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ, որոնցից բավարարվել է 11-ը: Պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելու վերաբերյալ գործերով բերվել է 11 բողոք, որից բավարարվել է 1-ը: Հարկադիր բուժումը փոփոխելու կամ դադարեցնելու վերաբերյալ գործերով բերվել է 15 բողոք, որից 5-ը բավարարվել է: Տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ գործերով բերվել է 19 վերաքննիչ բողոք, որից բավարարվել է 8-ը: Այլ բնույթի գործերով բերված 54 բողոքից բավարարվել է 23-ը:

2025 թվականին բերվել է 76 վճռաբեկ բողոք (2024 թվականին՝ 88), որոնցից բավարարվել է 4-ը (2024 թվականին՝ 19):

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒՄ 2025

9

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

- Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.
- **Քրեական վարույթներով փոխադարձ իրավական օգնության մասին հարցումներ.**

2025 թվականի ընթացքում օտարերկրյա պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական վարույթներով իրավական օգնության մասին 309 միջնորդություն (2024 թվականին՝ 365):

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու մասին օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 291 միջնորդություն (2024 թվականին՝ 203):

- **Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ.**

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունը կազմակերպել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 81 միջնորդությունների նախապատրաստման և ուղարկման աշխատանքները (2024 թվականին՝ 34):

Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված գրությունների հիման վրա՝ պահանջված փաստաթղթերի փաթեթներն ուսումնասիրվել են Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում, պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները, իսկ անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում միջազգային պայմանագրերի համաձայն՝ հայցվել և տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ:

Այս գործընթացի ճիշտ և ժամանակին կազմակերպման արդյունքում նվազել են հանձնման միջնորդությունների մերժումները:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 81 հանձնման միջնորդություններից 22-ը բավարարվել են, 13-ը՝ մերժվել, 46-ը գտնվում են քննարկման փուլում, բավարարվել են նաև նախկինում ներկայացված միջնորդություններից 6-ը, մերժվել՝ 5-ը:



Աճել է քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին ստացվող միջնորդությունների թիվը:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 82 միջնորդություններից (2024 թվականին՝ 73) բավարարվել է 26-ը, մերժվել՝ 7-ը, վերադարձվել՝ 6-ը, ուղարկվել է Արդարադատության նախարարություն՝ 8-ը, իսկ 35 միջնորդություն գտնվում է քննարկման փուլում:



Բավարարվել է նաև նախկինում փոխանցված 10 միջնորդություն, մերժվել՝ 3-ը, վերադարձվել՝ 3-ը, ուղարկվել Արդարադատության նախարարություն՝ 2-ը:

Աճել է նաև Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող անձանց թիվը:

Գլխավոր դատախազությունում հաղորդում է ստացվել Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 327 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 291):

- **Քրեական հետապնդում իրականացնելու մասին միջնորդությունների մասով կատարված աշխատանքներ.**

Գլխավոր դատախազության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ քրեական վարույթներ չեն ուղարկվել (2024 թվականին՝ 2):

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 18 քրեական վարույթ (2024 թվականին՝ 24):

- **Համագործակցություն այլ պետությունների դատախազությունների, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, միջազգային և տարածաշրջանային միջոցառումների ու երկկողմ հանդիպումների կազմակերպում և մասնակցություն.**

1. 2025 թվականի ապրիլի 21-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը մասնակցել է «Արդարադատությունը որպես արդարության հասնելու գործիք» խորագրով համաժողովին: Գլխավոր դատախազն անդրադարձել է նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության և վերահսկողության ժամկետներին, ծանր, առանձնապես ծանր, ինչպես նաև բազմադրվագ և հանրային հետաքրքրություն ներկայացնող քրեական վարույթների քննության առաջնահերթությանը, փորձաքննությունների կատարման ժամկետների պահպանման նկատմամբ դատախազական պատշաճ հսկողություն ապահովելու հանձնարարականին և դատարանում մեղադրանքի պաշտպանության ողջամիտ ժամկետների պահպանմանը:

2. Եվրոպայի խորհրդի հետ համատեղ 2025 թվականի հուլիսի 1-ին և 2-ին կազմակերպվել է «Դատախազների անկախությունն ու անաչառությունը՝ հանցագործություն կատարած պաշտոնատար անձանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համատեքստում. կոռուպցիա և փողերի լվացում» թեմայով երկօրյա բարձրաստիճան խորհրդաժողով: Խորհրդաժողովին ներկա են եղել Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, Դատախազության ներկայացուցիչներ, 9 պատվիրակության 15 ներկայացուցիչ՝ օտարերկրյա պետությունների գլխավոր դատախազություններից և միջազգային կազմակերպություններից (ընդհանուր՝ շուրջ 130 մասնակից):

3. 2025 թվականի հոկտեմբերի 2-ից 4-ը Դատախազության կողմից Երևանում կազմակերպվել է Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հոբելյանական՝ 10-րդ նիստը, որին մասնակցելու նպատակով Հայաստան են ժամանել 8 պատվիրակության 32 ներկայացուցիչ՝ ԱՊՀ անդամ 6 պետություններից և միջազգային կազմակերպությունից:

Նիստի արդյունքներով՝ Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նախագահությունը ստանձնել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, Խորհրդի նախագահը՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը:

3. Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-հիմնադրամի հետ համագործակցությամբ, 2025 թվականի հոկտեմբերի 29-ից 30-ը Երևանում կազմակերպվել է ««Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի»-ն՝ համաշխարհային հիշողության շտեմարանում.

արդի իրավունքի միջնադարյան ակունքները» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը:

Միջոցառմանը ներկա են եղել Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, Դատախազության և օտարերկրյա պետությունների դատախազության ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների, գիտական հանրույթի ներկայացուցիչներ, այլք: Գիտաժողովի բացման արարողությանը հաջորդել է «Գիրք Դատաստանի» ձեռագրի ցուցադրությունը՝ բերված Զմմառի Պատրիարքական Կղերի Միաբանությունից՝ Միաբանության Մայրավանքի ՓոխՄեծավոր, Մատենադարանի և Թանգարանի տնօրեն հայր Նարեկ Վարդապետ Լուիսյանի աջակցությամբ:

Միջոցառման շրջանակներում ներկայացվել է Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատության վերահրատարակված անգլերեն թարգմանությունը:

- **Գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, Եվրաջասթի ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների Համակարգող խորհրդի քարտուղարության, Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի, ԵԽ այլ միջկառավարական կոմիտեների ու ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:**

2025 թվականի ընթացքում ապահովվել է Հայաստանի Հանրապետության դատախազության ներգրավվածությունը միջազգային տարբեր հարթակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափով անցկացվող հանդիպումներին, քննարկումներին, սեմինարներին և նիստերին:

Մասնավորապես՝

1. 2025 թվականի սեպտեմբերի 7-ից 10-ը ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորած պատվիրակությունը Սինգապուրի Հանրապետությունում մասնակցել է Դատախազների միջազգային ասոցիացիայի 30-րդ տարեկան համաժողովին և Գլխավոր ժողովին: Համաժողովի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել «Քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցությունը. հաղորդակցության ուժը, հայաստանյան հեռանկարը» թեմայով ելույթով:

Համաժողովի շրջանակում՝ 2025 թվականի սեպտեմբերի 9-ին, ՀՀ գլխավոր դատախազն ընտրվել է Դատախազների միջազգային ասոցիացիայի գործադիր կոմիտեի անդամ:

- Սինգապուրի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հանդիպել է Սաուդյան Արաբիայի Թագավորության գլխավոր դատախազ Շեյխ Սաուդ Բին Աբդուլլահ Ալ-Մուջիբիի հետ: Հանդիպման ընթացքում ընդգծվել է երկու երկրների դատախազությունների միջև քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցությունը զարգացնելու հարցում ներուժի առկայությունը, անդրադարձ է կատարվել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի՝ քննարկելով համագործակցության հեռանկարները:

- Սինգապուրի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում, ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է նաև Շվեդիայի Թագավորության գլխավոր դատախազ Կատարինա Յոհանսոն Վելինի հետ: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել քրեական գործերով Հայաստանի և Շվեդիայի միջև միջազգային-իրավական համագործակցության զարգացման հնարավորություններին և Եվրաջասթի շրջանակում փոխգործակցության խորացման հեռանկարներին:

- Սինգապուրի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում, ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Դատախազների միջազգային ասոցիացիայի գլխավոր քարտուղար Ռոյլ Դոնայի և գործադիր տնօրեն Ջեյն Հեբների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում՝ Ասոցիացիայի շրջանակում համագործակցության հեռանկարները:

- Սինգապուրի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում, ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Շվեյցարիայի Համադաշնության գլխավոր դատախազ Սթեֆան Բլեթլերի հետ: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, բարձր է գնահատվել Հայաստանի և Շվեյցարիայի դատախազությունների միջև ձևավորված համագործակցությունը, այդ թվում՝ Հայաստանում քննվող՝ փողերի լվացման հանցակազմով քրեական վարույթներով Շվեյցարիայի գործընկերների կողմից ցուցաբերված աջակցության մակարդակը և որակը: Անդրադարձ է կատարվել նաև քրեական գործերով Հայաստանի և Շվեյցարիայի միջև միջազգային-իրավական համագործակցության զարգացման հնարավորություններին և Եվրաջասթի շրջանակում փոխգործակցության խորացման հեռանկարներին:

- Սինգապուրի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում, ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է նաև Դատախազների միջազգային ասոցիացիայի նախագահ, Բուենոս Այրեսի ինքնավար քաղաքի գլխավոր դատախազ Խուան Բաուտիստա Մահիկեսի հետ: Հանդիպմանն անդրադարձ է կատարվել ՀՀ գլխավոր դատախազի՝ ասոցիացիայի գործադիր կոմիտեի անդամ ընտրվելուն ու դատախազական միջազգային համայնքի հետ մասնագիտական երկխոսության այս նոր ձևաչափով աշխատանքը շարունակելու հնարավորությանը: Կարևորվել է Ասոցիացիայի մոտեցումը՝ ուղղված դատախազների մասնագիտական կրթության շարունակական բարելավմանը: Կողմերը պայմանավորվել են շարունակել խորացնել համագործակցությունը, քննարկվել է Ասոցիացիայի տարածաշրջանային համաժողովը Հայաստանում անցկացնելու հնարավորությունը:

- Սինգապուրի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում, ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Վրաստանի գլխավոր դատախազ Գեորգի Գվարակիձեի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցության զարգացմանը, քննարկել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

2. 2025 թվականի նոյեմբերի 6-ից 9-ը ՀՀ գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակությունը եռօրյա աշխատանքային այցով գտնվել է Իտալիայի Հանրապետությունում:

- Այցի ընթացքում 2025 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Իտալիայի Վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ Պիետրո Գաետայի հետ: Հանդիպման ընթացքում Աննա Վարդապետյանն ընդգծել է Իտալիայի իրավասու մարմինների կողմից իրավական օգնության շրջանակներում տրամադրված փաստաթղթերի և կատարված վարութային գործողությունների կարևորությունը՝ մի շարք քրեական գործեր մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու համար:

- 2025 թվականի նոյեմբերի 7-ին ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Իտալիայի Հանրապետության Գերագույն վճռաբեկ դատարանին կից գլխավոր զինվորական դատախազ Մաուրիցիո Բլոկի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը կարևորել են երկու երկրների զինվորական դատախազությունների միջև Համագործակցության խորացման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի ստորագրումը՝ նշելով, որ այն ևս մեկ

կարևոր գործիք կլինի կառուցողական մասնագիտական երկխոսությունն ու զինվորական դատախազների մասնագիտական փոխգործակցությունն ամրապնդելու հարցում:

- 2025 թվականի նոյեմբերի 7-ին ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է նաև Իտալիայի Հանրապետության Վերաքննիչ զինվորական դատարանի նախագահ Ջուզեպպե Մացիին և Վերաքննիչ դատարանի գլխավոր զինվորական դատախազ Մարկո դը Պաոլիսի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շրջանակ:

- 2025 թվականի նոյեմբերի 7-ին ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Իտալիայի Զինվորական դատական խորհրդի փոխնախագահ Պիետրո Լաֆրանկոյի և խորհրդի անդամների հետ՝ քննարկելով երկու երկրների զինվորական դատախազությունների միջև համագործակցության խորացման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի ստորագրման կարևորությունը և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շրջանակ:

- Իտալիայի Հանրապետություն կատարված այցի շրջանակում՝ 2025 թվականի նոյեմբերի 7-ին, ՀՀ գլխավոր դատախազի և Իտալիայի Հանրապետության Գերագույն վճռաբեկ դատարանին կից գլխավոր զինվորական դատախազ Մաուրիցիո Բլոկի միջև ստորագրվել է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության և Իտալիայի Հանրապետության Գերագույն վճռաբեկ դատարանին կից գլխավոր զինվորական դատախազության միջև համագործակցության ընդլայնման մասին փոխըմբռնման հուշագիր:

3. 2025 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ գլխավոր դատախազն առցանց մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների Համակարգող խորհրդի 35-րդ նիստին: Գլխավոր դատախազն իր ելույթում անդրադարձել է ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման արդի հարցերին՝ այդ համատեքստում ներկայացնելով հայկական փորձն ու գրանցած արդյունքները:

- **Ստանձնած միջազգային պարտավորությունների՝ Գլխավոր դատախազության մասով կատարման ընթացքը ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազը և գլխավոր դատախազի տեղակալները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների իրավասու կառույցների ներկայացուցիչների, դեսպանների, ինչպես նաև ՀՀ ժամանած այլ պաշտոնատար անձանց հետ:**

Մասնավորապես՝

1. 2025 թվականի փետրվարի 5-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Քրիստինա Քվինի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտներում փորձի փոխանակման ծրագրերին, որոնց շրջանակում Դատախազության ներկայացուցիչները հնարավորություն են ունենում օտարերկրյա ուսումնական հաստատություններում անցնել վերապատրաստումներ:

2. 2025 թվականի փետրվարի 7-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ԵԽ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների, արդարադատության և իրավական համագործակցության չափանիշների կիրարկման դեպարտամենտի ղեկավար Լիլյա Գրետարսդոտիրի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են ՀՀ դատախազության և ԵԽ համապատասխան մարմինների միջև համագործակցության արդի հարցերը, ընդգծվել է համատեղ փոխգործակցության արդյունավետությունը, նախանշվել են հետագա համագործակցության հեռանկարները, այդ թվում՝ ՀՀ-ում բարձրաստիճան հերթական խորհրդաժողով անցկացնելու հարցերը, անդրադարձ է կատարվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կիբերհանցավորության դեմ պայքարի ոլորտներին, այդ ուղղություններով իրականացված աշխատանքներին և արձանագրված արդյունքներին:

3. 2025 թվականի ապրիլի 15-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ԵԽ համագործակցության ծրագրերի բաժնի փոխտնօրեն Լիլիթ Դանեղյանի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են քրեական գործերով միջազգային իրավական օգնության ոլորտին,

դատախազների բարեվարքությանը վերաբերող մի շարք հարցեր, կարևորվել է վերաբերելի բնագավառներում եվրոպական փորձի շարունակական ներդրումը, համատեղ միջոցառումների իրականացումը:

4. 2025 թվականի մայիսի 27-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) ռեգիստրար Օսվալդո Զավալա Գիլերի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել ՀՀ կողմից ՄՔԴ կանոնադրության (Հռոմի ստատուտի) վավերացման գործընթացին, կարևորվել է միջազգային քրեական իրավունքի և միջազգային արդարադատության ոլորտում դատախազների գիտելիքների ընդլայնումը:

5. 2025 թվականի հունիսի 16-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Մարիկե Հարիետ Մոնրոյ-Վինթերի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են ՀՀ դատախազության և Հայաստանում Նիդերլանդների դեսպանության կողմից համատեղ իրականացվող ծրագրերը: Կողմերը բարձր են գնահատել դատախազների վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը և վերահաստատել են կրթական մի շարք ուղղություններով փոխգործակցությունը խորացնելու պատրաստակամությունը:

6. 2025 թվականի հունիսի 27-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մեհդի Սոբհանիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, որոնք հիմնականում վերաբերել են հետախուզվողների հանձնմանը և քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարմանը:

7. 2025 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հունաստանի Հանրապետության դատախազության պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում ընդգծվել է հանցավորության դեմ պայքարում ջանքերը համատեղելու կարևորությանը, որն իրավապահ մարմինների միջև համագործակցության բարձր մակարդակ ապահովելու հիմք է հանդիսանում:

8. 2025 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ավստրիայի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Ալեքսանդրա Ռամուշին: Հանդիպման ընթացքում կարևորվել են դատախազների անկախության վերաբերյալ հարցերը, քննարկվել են Հայաստանում դատախազների անկախության երաշխիքների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և ինստիտուցիոնալ մոտեցումները:

9. 2025 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Լեհաստանի Հանրապետության դատախազության պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել հանցավորության դեմ պայքարում ջանքերը համատեղելու կարևորությանը, որն իրավապահ մարմինների միջև համագործակցության բարձր մակարդակ ապահովելու հիմք է հանդիսանում:

10. 2025 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Լիտվայի Հանրապետության գլխավոր դատախազ Նիդա Գրունսկիենեի ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են Երևանում 2023 թվականին երկու երկրների գլխավոր դատախազների միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրին, որի նպատակն է ընդլայնել քրեական արդարադատության ոլորտում Հայաստանի և Լիտվայի դատախազությունների միջև համագործակցությունը՝ միտված մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովմանը և օրենքի գերակայության ամրապնդմանը, քննարկել են միջազգային-համագործակցությանն առնչվող երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

11. 2025 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Մալթայի Հանրապետության գլխավոր դատախազ Վիկտորիա Բութիջեյջի ղեկավարած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են Դատախազների միջազգային ասոցիացիայի 18-րդ տարածաշրջանային համաժողովին մասնակցելու նպատակով

ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակության՝ Մալթա կատարած այցին, քննարկել միջազգային-համագործակցությանն առնչվող երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

12. 2025 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Չեխիայի Հանրապետության դատախազության պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել հանցավորության դեմ պայքարում ջանքերը համատեղելու կարևորությանը, քննարկվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի վերաբերյալ Հայաստանում գործող օրենսդրական կարգավորումները և ինստիտուցիոնալ մոտեցումները:

13. 2025 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) ներկայացուցիչ Էրիկ Ֆոգելսբոյին: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել 2024 թվականի մարտի 7-ին և նոյեմբերի 6-ին Նիդերլանդների Թագավորություն կատարած աշխատանքային այցերի շրջանակում ՀՀ գլխավոր դատախազի՝ Եվրաջասթում ունեցած հանդիպումներին:

14. 2025 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Դատախազների միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Գիորգի Գոգաձեին: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել 2024 թվականի մարտի 5-ին Հաագայում և մայիսի 20-ին Երևանում Դատախազների միջազգային ասոցիացիայի գլխավոր քարտուղարի և ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումներին, քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

15. 2025 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բոլատ Իմանբաևի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են ՀՀ դատախազության և Ղազախստանի Հանրապետության իրավասու մարմինների համագործակցության հիմնական ուղղությունները, իրավական փոխօգնությանն ու երկկողմ համագործակցության զարգացմանն առնչվող հարցեր, ինչպես նաև անդրադարձ է կատարվել Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հոբելյանական՝ 10-րդ նիստին:

16. 2025 թվականի սեպտեմբերի 25-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ԻԻՀ արդարադատության նախարար Ամին Հոսեյն Ռահիմիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ջանքերը և այս համատեքստում անդրադարձ է կատարվել հետախուզվողների հանձնման, իրավական օգնության ապահովմանը վերաբերող մի շարք հարցերի:

17. 2025 թվականի հոկտեմբերի 2-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Տաջիկստանի Հանրապետության պետական ֆինանսական վերահսկողության և կոռուպցիայի դեմ պայքարի գործակալության նախագահ, Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի գործող նախագահ Սուլայմոն Սաիդ Սուլթոնզոդայի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են

Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հոբելյանական՝ 10-րդ նիստին, քննարկել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

18. 2025 թվականի հոկտեմբերի 2-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Բելառուսի գլխավոր դատախազի տեղակալ Սերգեյ Խմառուկի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների դատախազությունների միջև քրեական վարույթներով միջազգային-իրավական համագործակցությանն առնչվող հարցեր:

19. 2025 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի տեղակալ Պյոտր Գորոդովի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների դատախազությունների միջև քրեական վարույթներով միջազգային-իրավական համագործակցությանն առնչվող հարցեր:

20. 2025 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ուզբեկստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի գործակալության նախագահ Աքմալ Բուրխանովի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հոբելյանական՝ 10-րդ նիստին, քննարկել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

21. 2025 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ղազախստանի Հանրապետության Ազգային անվտանգության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ալի Ալթինբաևի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հոբելյանական՝ 10-րդ նիստին, քննարկել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

22. 2025 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազ Մակսատ Ասանալիևի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների դատախազությունների միջև քրեական վարույթներով միջազգային-իրավական համագործակցությանն առնչվող հարցեր:

23. 2025 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են հետախուզվողների հանձնման և իրավական օգնության ապահովմանը վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաև 2025 թվականի հոկտեմբերի 3-ին Երևանում կայացած Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հոբելյանական՝ 10-րդ նիստի արդյունքները:

24. 2025 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են 2025 թվականի նոյեմբերին ՀՀ գլխավոր դատախազի՝

Իտալիայի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի արդյունքները:

2025 թվականի ընթացքում հանցավորության շարժընթացի, իրավակիրառ պրակտիկայի և հանցագործությունների քննության վիճակագրական տվյալների վերլուծությունների հիման վրա, հաշվի առնելով Դատախազության ընդլայնված կոլեգիայի 2025 թվականի մարտի 14-ի նիստում հնչած կարծիքները, մշակվել են քրեական արդարադատության ոլորտին վերաբերող և Դատախազության գործունեությանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր, որոնք միտված են եղել ուժեղացնելու առանձին հանցատեսակների դեմ քրեաիրավական պայքարի գործիքակազմը, կատարելագործելու գործող օրենսդրությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության կողմից նախապատրաստվել և իրավասու պետական մարմիններ է ուղարկվել օրենսդրական 3 նախաձեռնություն:

Մասնավորապես՝

1. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվել է Քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել նոր խմբագրությամբ՝ դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի կամ ներկայացուցչի գործունեությանը քրեորեն պատժելի միջամտությունը կապելով ոչ միայն քրեական գործի, այլ նաև քրեական վարույթի քննությանը, ինչպես նաև առերևույթ հանցանքի մասին տվյալներ ստանալու պահից մինչև քրեական վարույթ նախաձեռնելը՝ հետաքննության մարմնի գործունեությանը խոչընդոտելու նպատակի հետ:

2. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվել է Քրեական օրենսգրքի 283-րդ հոդվածի դիսպոզիցիայում որպես հետևանք նախատեսել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս պատճառելը՝ օրենքի ներկայիս խմբագրությամբ նախատեսված խոշոր չափերի գույքային վնասի փոխարեն:

Նախագծով առաջարկվել է նաև գույքային վնասի դեպքում որպես էական վնաս դիտարկել խոշոր չափերի գույքային վնասը:

3. Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում առանձին պահվող կալանավորված անձանց վերաբերելի օրենսդրական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզվել է, որ ի տարբերություն Քրեակատարողական օրենսգրքի, որի 78-րդ հոդվածով ամրագրված են դատապարտյալներին պաշտպանական կամ կանխարգելիչ նպատակով առանձին պահելու վերաբերյալ իրավակարգավորումներ՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքը նման իրավակարգավորումներ չի նախատեսում:

Արդարադատության նախարարություն հասցեագրված գրությամբ առաջարկվել է քննարկել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու հարցը՝ բուժական և առողջապահական խնդիրների իրականացման առանձնահատկություններից, հիվանդությունների տեսակներից ու բնույթից ելնելով՝ կալանավորված անձանց անջատ պահելու վերաբերյալ կարգավորումներ նախատեսելու նպատակով:

Բացի այդ, Դատախազությունը գործուն մասնակցություն է ունեցել Միջազգային քրեական դատարանի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությանը վերաբերելի օրենսդրական փոփոխությունների աշխատանքներում:

Մասնավորապես՝ Դատախազության, Արդարադատության նախարարության և այլ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների համատեղ աշխատանքի արդյունքում՝ մշակվել և շրջանառվել է «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերի փաթեթը, որը ներկայում գտնվում է կարծիքների ամփոփման և դրանց հիման վրա լրամշակման փուլում: Նախագծով նախատեսվել են Միջազգային քրեական դատարանի հետ համագործակցությունը կանոնակարգող դրույթներ:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է Դատախազության ներգրավվածությունը 2023 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ քննչական գործողությունների պարտադիր տեսաձայնագրման գործընթացի պատշաճ կիրարկումն ապահովելու աշխատանքներում: Շարունակվել են աշխատանքները քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացման բնագավառում:

Ապահովվել է Կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի 1922-Ն որոշմամբ սահմանված կարգով վերականգնված դրամական միջոցների և արգելադրված դրամական միջոցների վերաբերյալ տվյալների հրապարակումը:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է տարբեր գերատեսչություններից ստացված՝ օրենսդրական 96 նախաձեռնությունների փաթեթների, կառավարության 87 որոշումների, ՀՀ վարչապետի և գործադիր մարմինների ղեկավարների որոշումների և այլ իրավական ակտերի 37 նախագծեր, որոնց վերաբերյալ Դատախազության դիրքորոշումները սահմանված կարգով ուղարկվել են համապատասխան պետական մարմիններին:

2025 թվականին Դատախազությունը ներգրավված է եղել «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2025-2028թթ. ազգային ռազմավարության», «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» Կառավարության որոշումներից բխող՝ Դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների կատարման աշխատանքներում:

Իրավասու պետական մարմիններ են ներկայացվել նաև վերոնշյալ ռազմավարությունների և գործողությունների ծրագրի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական մարմիններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին տրամադրվել է 73 վերլուծական փաստաթուղթ:

Մասնավորապես, ի թիվս այլնի, տեղեկատվություն է տրամադրվել՝

- ՏՀԶԿ ՍԻԳՄԱ-ի Հայաստանում պետական կառավարման սկզբունքների ուղղությամբ առաջընթացի գնահատման գործընթացի լիարժեք իրականացման վերաբերյալ,
- ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) կողմից Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի (UNCAC) վերանայման մեխանիզմի արդյունավետության վերաբերյալ,
- Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի քարտուղարության կողմից ստացված՝ 2020-2024 թվականների համար վիճակագրական և արդյունավետության հարցաշարի համապատասխան կետերի վերաբերյալ,
- «Վիրտուալ ակտիվներ և Կիբերհանցագործությունների մասին կոնվենցիայի և լրացուցիչ երկրորդ արձանագրության արդիականությունը» հարցաշարի վերաբերյալ,

- Իրավահավասարության ապահովման և խտրականության ապահովման ռազմավարական փաստաթղթի մշակման շրջանակում ներկայացված հարցաշարի վերաբերյալ,
- «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին. II փուլ» ԵՄ բյուջետային աջակցության գործընթացի շրջանակներում ներկայացված ինքնագնահատման զեկույցի վերաբերյալ,
- Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2025 թվականի հարցաշարի վերաբերյալ,
- Եվրոպական միության հետ մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագրի (VLAP) նախագծի վերաբերյալ,
- ԳՐԵԿՈ-ի 5-րդ փուլի գնահատման շրջանակներում՝ «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կենտրոնական մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում) և իրավապահ մարմիններում» խորագրով հարցաշարի վերաբերյալ,
- Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից ՀՀ-ին առաջադրված՝ արդարադատության համակարգի գնահատմանը վերաբերող հարցադրումներին ներկայացված պատասխանների հիման վրա հանձնաժողովի կողմից ուղարկված լրացուցիչ հարցադրումների վերաբերյալ,
- ՄԻՊ տարեկան հաղորդման կազմման համար Դատախազության գործունեությանը վերաբերող հարցադրումների վերաբերյալ,
- ԱՄՆ պետական դեպարտամենտի 2024 թվականի մարդու իրավունքների և կրոնական ազատությունների մասին ամենամյա զեկույցի պատրաստման համար ներկայացված հարցադրումների վերաբերյալ:
- 2025 թվականին Միջազգային-իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ ներկայացվել է դիրքորոշում Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված 34 գանգատներով:

2025 թվականին իրականացվել է 25 ուսումնասիրություն՝ 27 դատախազի վերաբերյալ:

Ուսումնասիրություն իրականացնելու համար հիմք են հանդիսացել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների պահանջների, ինչպես նաև ներքին կարգապահական կանոնների առերևույթ խախտումներ թույլ տալը և այլն:

Վերոնշյալ ուսումնասիրություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների դիմում-բողոքները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով 6 դեպքով՝ 7 դատախազի վարքագծի կանոնների պահանջների և ծառայողական պարտականությունների խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, 16 դեպքով՝ 17 դատախազի նկատմամբ ուսումնասիրության արդյունքներով ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել: 1 դեպքով՝ 1 դատախազի նկատմամբ իրականացված ուսումնասիրությունը դադարեցվել է, քանի որ վերջինս ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

4 դեպքով՝ 5 դատախազի նկատմամբ իրականացված ուսումնասիրության արդյունքում հարուցվել են կարգապահական վարույթներ (2 դեպքով՝ 3 դատախազի նկատմամբ ուսումնասիրությունն իրականացվել է 2024 թվականին), իսկ 7 դեպքով՝ 7 դատախազի նկատմամբ, առանց ուսումնասիրության իրականացման, հարուցվել են կարգապահական վարույթներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 11 կարգապահական վարույթ՝ 12 դատախազի նկատմամբ: Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով՝ 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն», 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «խիստ նկատողություն», 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «պաշտոնից ազատում», 3 դատախազի կողմից թույլ տրված խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցությունում, 4 դատախազի նկատմամբ իրականացված կարգապահական վարույթի նյութերը չեն ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի քննարկմանը, 1 դատախազի նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթը դադարեցվել է, քանի որ վերջինս ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

1 կարգապահական վարույթ 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս չի ավարտվել:

10

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Դատախազությունում 2025 թվականին քաղաքացիներից ստացվել է 14.986 դիմում-բողոք (2024 թվականին՝ 14.000)[1]: Ստացված դիմումների թիվն ավելացել է 986-ով կամ 7%-ով:

Դիմումներից 2294-ը եղել է կրկնակի, 1623-ը բավարարվել է (2024 թվականին՝ 1578), 3391-ին տրվել է պարզաբանում (2024 թվականին՝ 3412), 1841-ը մերժվել է (2024 թվականին՝ 1713), 339-ը թողնվել է անհետևանք (2024 թվականին՝ 399), 6-ը վերադարձվել է դիմումատուին (2024 թվականին՝ 17), 7 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է (2024 թվականին՝ 32), 115 դիմումի քննարկում մնացել է անավարտ (2024 թվականին՝ 130), 7625 դիմում ուղարկվել է այլ մարմին՝ ընթացքը լուծելու համար (2024 թվականին՝ 6656), 39 դիմումի քննարկման արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ (2024 թվականին՝ 63):



1. Ներառված չէ Զինվորական դատախազությանն ուղղված դիմումների թիվը:

2025 թվականին ստացված դիմում-բողոքներից 2861-ը վերաբերել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, 3062-ը՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններին, 3388-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործություններին, 1563-ը՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններին, 1079-ը՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին, 289-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններին և այլն:

2025 թվականին դատախազությունում կազմակերպվել է 1847 ընդունելություն (2024 թվականին՝ 1919): Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիների ընդունելությունների թիվը նվազել է 72-ով կամ 3,8%-ով:

Դատախազության հանրային կապերի բաժինը 2025 թվականին շարունակել է ապահովել Դատախազության միջոցառումների լուսաբանման, տեսանկարահանման ու լուսանկարահանման, պաշտոնական կայքի՝ www.prosecutor.am-ի սպասարկման աշխատանքները՝ մասնավորապես՝ մամուլի հաղորդագրությունների, դրանց թարգմանությունների, տեղեկատվական բազայի թարմացումը, ինչպես նաև պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցներին:

Դատախազության հանրային կապերի բաժինը.

- Պատրաստել և Դատախազության պաշտոնական կայքէջով հանրությանը հասանելի է դարձրել 365 հաղորդագրություն, կատարել է Դատախազության 103 պաշտոնական հանդիպման լուսանկարահանում և տեսանկարահանում:
- Կազմակերպել է ռադիո և հեռուստատեսային, համացանցային հաղորդումներում դատախազների մասնակցությամբ 152 տեսանյութերի (ռեպորտաժներ, հարցազրույցներ) նկարահանման աշխատանքները:
- Ընթացք է տվել Դատախազության պաշտոնական էլեկտրոնային փոստով՝ info@prosecutor.am, ստացված 4126 դիմում-գրության, 99 հրավերի:
- Իրականացրել է 117 էլեկտրոնային մամուլի (կայքերի) և 16 հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների մոնիտորինգ:
- Մշտադիտարկման գործառույթի շրջանակում ընթացք է տվել մամուլի 212 հրապարակման:
- Պատասխան է տրամադրել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված կարգով՝ զանգվածային լրատվության միջոցներից ստացված 374 հարցման:

2025

ՀԱՂՈՐԴՈՒՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ